
ՄԱՆՈՒԿ ՀՈՎՀԱՆ

ՆԱՀԱՏԱԿՈՒԹՅՈՒՆԸ
ՀԱՅ ՊՈԵԶԻԱՅԻ





АКАДЕМИЯ НАУК АРМЯНСКОЙ ССР
ИНСТИТУТ ЛИТЕРАТУРЫ

ГУРГЕН ОВНАН

Н. А. НЕКРАСОВ
и
АРМЯНСКАЯ ПОЭЗИЯ



Издательство АН Армянской ССР
Ереван ~ 1956

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱ
ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

891.71.092
Ե-86

ԳՈՒՐԳԵՆ ՀՈՎՆԱՆ

Լրաց.
891.99.09-
ՑՏՄՎԱԾ Է 1961 Թ.

Ն. Ա. ՆԵԿՐԱՍՈՎԸ
ԵՎ
ՀԱՅ ՊՈԵԶԻԱՆ

II
Ա 26384





Հայկական ԱՍՌ Գ.Ա. Հրատարակչություն
Երևան ~ 1956

Տպագրվում է Հայկական ՍՍՌ Գիտությունների
ակադեմիայի խմբագրական-հրատարակչական
խորհրդի որոշմամբ

Я лиру посвятил народу своему.
Быть может, я умру неведомый ему,
Но я ему служил — и сердцем я спокоен...

Н. А. НЕКРАСОВ



ՌԵՎՈԼՅՈՒՑԻՈՆ ԴԵՄՈԿՐԱՏԻԱՅԻ ՄԵԾ ՊՈԵՏԸ



Յրատարակիչ Սիբիրի հետաքրքիր խորքերից, գրականագետ Պիպինին ուղղած՝ 1877 թ. օգոստոսի 14-ի իր նամակում, Չերնիշևսկին հետևյալն է գրում Նեկրասովի մասին. «Ասա իրեն, որ ես ջերմորեն սիրել եմ նրան, որպես մարդու, որ ես երախտապարտ եմ նրան իր բարի վերաբերմունքի համար, որ ես համբուրում եմ նրան, որ ես համոզված եմ, թե անմահ է լինելու նրա փառքը, թե հավերժ է լինելու Ռուսաստանի սերը նրա հանդեպ, որպես ոչ բոլոր բանաստեղծներից ամենահանճարեղի ու ամենաազնիվի»[1]:

Մեծ հեղափոխականի այս փայլուն ու ճշմարտացի գնահատականը, ոչ միայն ժողովրդի թախծի ու վշտի հանճարեղ երգչի, համաժողովրդական անհուն սիրո արժանացած ամենաազնիվ բանաստեղծի մասին, ցույց է տալիս, որ դեռ իր կենդանության օրոք Նեկրասովն ար-

---

[1] Н. Г. Чернышевский, Полное собрание сочинений, том XV, стр. 88.

պեն խորապես սիրված ու գնահատված բանաստեղծ էր։

Նեկրասովը ապրել ու գործել է XIX դարի Ռուսաստանի ամենառաջավոր, լավագույն մարդկանց հետ, հեղափոխա-դեմոկրատների փայլուն պլեադայի շրջանում։ Բելինսկին, Հերցենը, Դոբրոլյուբովը Նեկրասովի մտերիմն ու լավագույն բարեկամներն էին։ Նրանց պատմականորեն պահպանված, նրանց գործոն ազդեցությամբ Նեկրասովը ուսա պոեզիայի մեջ հեղափոխական մի նոր ուղղություն, դառնալով ուսա մեծ ժողովրդի վշտի, ցասման ու բողոքի անմահ երգիչը։ Նրա հանդես գալը ուսս գրականության մեջ պայմանավորված էր Ռուսաստանի պատմական կյանքում տեղի ունեցած նոր իրադարձություններով։ Այդ իրադարձությունների ամենակարևոր կողմն այն էր, որ Ռուսաստանի հեղափոխական շարժումները թևակոխել էին պարզացման մի նոր էտապ։ Այդ այն էտապն էր, երբ, ինչպես Լենինն էր ասում, «ավելի լայնացավ մարտիկների շրջանը, ավելի մաս պարձավ նրանց կապը ժողովրդի հետ»[1]։

Նիկոլայ Ալեքսեևիչ Նեկրասովը ծնվել է 1821 թ. դեկտեմբերի 10-ին. նրա մանկությունն անցել է Յարոսլավլի նահանգի Գրիշնևո գյու-

[1] Վ. Ի. Լենին, Երկեր, 4-րդ հ., հատոր 18, էջ 20։

դուստր Բանաստեղծի հայրը՝ Ալեքսեյ Սերգեևիչ Նեկրասովը զինվորական էր. մայրի ստիճանում նա պաշտոնաթող էր եղել և, որպես կալվածատեր, իր ընտանիքով ապրում էր սեփական կալվածքում՝ Վոլգայի ձեղատեսիլ ափերին: Նա կոպիտ ու դաժան մարդ էր և իր ամբողջ ժամանակն անց էր կացնում թղթախաղի, որսորդության ու զվարճության մեջ: Հոր կատարյալ հակապատկերն էր բանաստեղծի մայրը՝ Ելենա Անդրեևնան, մի կրթված, մեղմ ու առաքինի կին:

Ազգակա՛ն մեծ բանաստեղծի դաստիարակության ու կրթության գործն ամբողջովին իր վրա էր վերցրել մայրը, որը ոչ մի ջանք չէր խնայում իր սիրելի որդու մեջ ամենալավ զգացումներ առաջացնելու, գեղի կյանքը, մարդիկ, աշխատանքն ու աշխատավորը:

Նեկրասովի մանկության ու պատանեկության տարիները խորն ու անջնջելի տպավորություն են թողել նրա ներաշխարհում: Նա ականատես էր եղել Ռուսաստանի ճորտատիրական ամենադաժան ու բիրտ կարգերի այլանդակություններին, տեսել ժողովրդի ստրկական վիճակը, Սիրիր աքսորված ճորտ գյուղացիների մասին ու ցասումնալից հայացքները, Վոլգայի բուռլակների դաժան և անգութ ճնշումն ու շահագործումը: Եվ պատանի Նեկրասովն իր ըմ-

բոսա հոգու ամբողջ կարողությամբ ատեց սարկական այդ կարգերը, ատեց ճորտատերերին ու ժանդարմներին, անգամ իր հարազատ հորը, որը նույնպես ճնշում ու շահագործում էր ուս ազնիվ և աշխատասեր մարդուն։

«Հայրենիքը բանաստեղծության մեջ Նեկրասովը բավական ցայտուն ու ճշմարտացի կերպով է պատկերում մանկության այդ ծանր տպավորությունները.

Ահա և նրանք՝ այն վազածանոթ վայրերը կրկին,
Ուր իմ հայրենի կյանքն անցավ ամուլ, և՛ դառարկ,
և՛ աչին,
Վնիֆերում, անմխա անապարժության շարանում անվերջ
Կեզտոտ տափության ու բյուր մանր սիրանության մեջ։
Որտեղ հալածված, վհատ ճորտերի ամբոխն անդին
Նախանձից անգամ կալվածատիրոջ շների կյանքին։

(Թարգմ. Ա. Գրաճի)

1832 թ. Նեկրասովն ընդունվում է Յարոսլավլի գիմնազիան, Գիմնազիայում սովորելու տարիներին նա մի շարք սատիրական բանաստեղծություններ է գրում։ Այդ բանաստեղծություններով նա բորբոքում է գիմնազիայի վարչության անդամների զայրույթը և արժանանում նրանց թշնամական վերաբերմունքին, որի հետևանքով էլ 1837 թ. աշնանը նա ստիպված է լինում թողնել գիմնազիան և հոր կարգադրությամբ 1838 թ. մեկնել Պետերբուրգ՝ զինվորական

պարոց ընդունվելու համար։ Ոչ մի ցանկություն ու հակում չունենալով դինվորական դառնալու, Նեկրասովը պատրաստվում է քննություններ հանձնելու Պետերբուրգի համալսարանում։ Չնայած քննությունները հաջողությամբ չեն ավարտվում, բայց այնուամենայնիվ Նեկրասովին թույլատրվում է Պետերբուրգի համալսարանի ազատ ունկնդիր համարվելու։

Հայրը լսելով, որ հակառակ իր կամքին, որ դինվորական դպրոցը թողած համալսարանում ազատ ունկնդիր է ընդունվել, խիստ դայրանում և գրկում է նրան իր խնամքից և նյութական ամեն մի օգնությունից։ 17 տարեկան պատանի Նեկրասովի համար առկծվում են նյութական ծանր պայմաններ, բայց նա չի ընկճվում և, կյանքի այդ անողոք պայմաններում համառորեն մաքառելով, պահպանում է իր դոյությունը։ Շուտով նա ճաշակում է ռուսական կայսրության մայրաքաղաքի չքավորության դառնությունը։ Նա չուներ ձմեռային տաք հագուստ, ապրելու և աշխատելու համար հարմար բնակարան, նույնիսկ ամեն օրյա կանոնավոր սնունդ։ «Ուղիղ երեք տարի,— գրում է Նեկրասովը,— ես միշտ, ամեն օր ինձ քաղցած էի զգում։ Ոչ մեկին վատ էի հիշում, ոչ մեկին կիսաքաղց մնում, այլև ոչ ամեն օր հաց գտնում։ Սակայն Նեկրասովը չի վհատվում այդ ծանր

վիճակում, նա սկսում է աշխատակցել Պետերբուրգի թերթերին ու ամսագրերին, նրանց էջերում հոդվածներով, բանաստեղծություններով, վոդևիլներով, թարգմանություններ տպագրելով, ինչպես և արտագրական աշխատանքներ կատարելով պատահական խմբագրություններում։ Այդ բոլորի հետ միասին Նեկրասովը միաժամանակ հետևում էր համալսարանի դասախոսություններին։

Ընկերների ևառանդուն օժանդակության շնորհիվ 1840 թ. Նեկրասովը լույս է ընծայում իր բանաստեղծությունների առաջին ժողովածուն՝ «Երազանքներ և հնչյուններ» խորագրով։ Պետական առաջին այդ տպագրերն իրենց վրա կրում էին ռոմանտիզմի և հատկապես ժուկովսկու պոեզիայի ուժեղ ազդեցությունը։ Աշուշապատ երազանքներն ամենից շատ էին այդ բանաստեղծությունների մեջ, քան առօրյա իրականությունը, շրջապատող կյանքը։ Պետերի համար դեռ որոշ չէր գրական այն ուղին, որով պիտի ընթանար ինքը։ Ահա թե ինչու Բելինսկին այնպես խիստ քննադատեց այդ ժողովածուն, նշելով նրա էկլեկտիկական պաթոսը։ Ինչ խոսք, որ Նեկրասովի գրական հետագա գործունեության համար Բելինսկու այդ քննադատությունը խոշոր նշանակություն ունեցավ։

Շուտով Նեկրասովը ծանոթանում է Բելինսկու հետ։ Այդ ծանոթությունը և հետագա տարիների

համառոտ աշխատանքը մեծ նշանակություն ունեցան ապագա մեծ բանաստեղծի իդեական զարգացման գործում։ «Իմ հանդիպումը Բելինսկուն ինձ համար երկունք էր», — յուզմունքով հրահանգիությամբ նշել է Նեկրասովը։

1845 թ. Նեկրասովին հաջողվում է հրատարակել «Պետերբուրգի ֆիզիոլոգիան» ժողովածուն, իսկ 1846 թվականին՝ «Պետերբուրգյան ժողովածուն»։ Այդ երկու ժողովածուները էլ մեծ հաջողություն են ունենում և մեծ նշանակություն դեր կատարում ռուս ռեալիստական գրականության զարգացման գործում։ Այդ ժողովածուներում տպագրված էին Նեկրասովի մի շարք բանաստեղծությունները, ինչպես, օրինակ, նրա հայտնի «Օրորոցի երգը», «Ջինովնիկը», «Ճանապարհին», «Հաճելի է ուռենին» և այլն։ Այդ նույն ժամանակաշրջանում էլ նա գրում է «Ժամանակակից ներքող», «Հայրենիքը» և մի շարք այլ բանաստեղծություններ։

Գերցենին ու Տուրգենևին ուղղած իր նամակներում Բելինսկին չափազանց բարձր է գնահատում Նեկրասովի այդ շրջանի ստեղծագործությունները, հիացմունքի խոսքեր ասում նրանց գեղարվեստական կատարելության ու իդեական հարուստ բովանդակության մասին։

1847 թ. Նեկրասովին հաջողվում է, Պանաևի հետ միասին, ձեռք բերել «Սովրեմեննիկ»

ամառվերը Ծավալուն ու մեծ թափ է առնում Նեկրասովի ժուռնալիստական ու խմբագրական գործունեությունը: Նրա գործունեության այդ ժամանակաշրջանը 19-րդ դարի ռուս ժուռնալիստիկայի պատմության ամենախայտառն ժամանակաշրջանն է հանդիսանում: Նեկրասովը, նախ Բելինսկու և ապա Չերնիշևսկու ու Դոբրոլյուբովի հետ միասին, «Սովրեմեննիկ» ժուռնալը դարձրեց ռևոլյուցիոն-դեմոկրատների մարտական օրգանը, որտեղ տպագրվում էին ժամանակի առաջավոր գաղափարներով հագեցված հոդվածներ գրականության, պատմության, փիլիսոփայության, բնական ու հասարակական գիտությունների, քաղաքական ու միջազգային իրադարձությունների վերաբերյալ:

Անառարկան մեծ վիշտ է պատճառում Նեկրասովին Բելինսկու մահը, որը տեղի ունեցավ 1848 թ. հունիսի 7-ին: 40-ական թվականների ռևոլյուցիոն-դեմոկրատական մտքի այդ տիտանի կորուստը ծանր է անդրադառնում ժամանակի առաջավոր մարդկանց տրամադրության վրա. նրանք զրկվել էին իրենց լավագույն դեկավարից ու մարտական ընկերից:

Դոբրոլյուբովի հետ ունեցած մի զրույցի ժամանակ Նեկրասովը հետևյալն է ասում Բելինսկու մասին. «Ցավում եմ, որ դուք ինքներդ չէիք ճանաչում այդ մարդուն... Ես ամեն տարի

ամեն ու ամեն ուժգին եմ պղում, թե որքան անմոխասրինելի է նրա կրուստն ինձ համար։ Ես հաճախ անանում եմ նրան երազում և նա ինձպան կերպով պատկերանում է իմ աչքերի առջև։ Գալով մատերդում եմ, թե ինչպես մենք երկուսով, մինչև գիշերվա ժամը մոտ երկուսը խոսում էինք գրականության և ուրիշ առարկաների մասին։ Գրանից հետո ես միշտ հուզված տրամադրությամբ, երկար ժամանակ էի պատրկված վոդոպներում, այնքան ինձ համար նոր բան էր լինում նրա արտահայտած մտքերի մեջ...»[1]։

Իր ամբողջ կյանքում Նեկրասովը չէր մոռանում Բելինսկուն։ Նա Բելինսկուն համարում էր Ռուսաստանի լավագույն մարդկանց ուսուցիչը, նրանց իդեական առաջնորդը։ Բելինսկու պայծառ հիշատակին նվիրած պոեմի մեջ Նեկրասովը գրում է.

Օ՛, ինչքան, ինչքան ազատ հոգու տեր
Որ իներ ան՝ հայրենիքը մեր,
Ինչքան որ իներ՝ անկաշկանդ, մարմար,
Որ հավատարիմ նրան այս կյանքում,
Մարդու մեջ՝ ազգով սերտ են նկատում,
Ջոջը խարանում ու կրքոտ աոում,

[1] А. Я. Панаева, Воспоминания, Москва, 1948 г., стр. 317.

Հ 26474
Ա 11
Ա 26384

Ում սիրտը բաց է ու միտքը պայծառ,
Ում կարծիքը չեն նեղում՝ հնազոյալ
Ժանգոտ շղթաներն առասպելների...
Մինչև նա բոլոր այդ ոգիների
Ուսուցիչը չէր՝ վազուց ապառաժ։

(Թարգմ. Գ. Էմինի)

Ինչպես հայտնի է, վ. Գ. Բելինսկուց հետո Ռուսաստանի ուսուցչին մտքի պարտքերը գրձան Չերնիշևսկին ու Դոբրոլյուբովը։ 1853 թ. Նեկրասովը ծանոթանում է Չերնիշևսկուն, իսկ 1855 թվականին՝ Դոբրոլյուբովին։ Այդ ծանոթությունը, ապա և միասին աշխատանքը «Սովրեմեննիկի» խմբագրատանը, լայն թափ են հաղորդում Նեկրասովի գրական-հասարակական գործունեության։ Նեկրասովի ուսուցչո-դեմոկրատական աշխարհայացքի հետագա զարգացումն ընթանում է իր ժամանակի այդ երկու խոշոր մտածողների ազդեցության տակ։ Այդ տարիներին Նեկրասովի պոեզիայում ավելի ուժգին են հնչում ժողովրդի թշվառության ու բողոքի ձայները։

1855 թ. Նեկրասովը ավարտում է «Սաշա» նշանավոր պոեմը և գրում մի շարք բանաստեղծություններ, ինչպես, օրինակ, «Հայրենիքում», «Հիվանդանոցում», «Լռիր դու մուսա վշտի, վրեժի» և այլն, հաջողությամբ ավարտում է Բելինսկուն նվիրված պոեմը, որի մեջ պոետական բարձր ու

հուզումնալից տողերով պատկերված է ուսյուցիոն մեծ դեմոկրատի կերպարը։

1856 թ. լույս է տեսնում Նեկրասովի բանաստեղծությունների ժողովածուն, որը բացառիկ մեծ հաջողություն է ունենում։ Ժողովածուի մեջ զետեղված բանաստեղծությունները լայնորեն արտահայտում էին ռուս ժողովրդի ստրկական վիճակը, ուսյուցիոն ընդվզումները։ Նեկրասովի համբավը, որպես ուսյուցիոն պոետի, լայնորեն տարածվում է Ռուսաստանում և նրա սահմաններից դուրս։ Նեկրասովի բանաստեղծությունների այդ չտեսնված հաջողությունը լուրջ իրարանցում է առաջ բերում ցարական բարձրաստիճան շրջաններում։ Նեկրասովին հետապնդում ու հալածում են։ Թիրքն արագ կերպով ապառվում է, բայց նրա վերահրատարակությունը խստիվ արգելվում։ Դեռ ավելին, պատժվում ու հեռացվում է պաշտոնից այն դրաքննիչը, որը թույլ էր տվել Նեկրասովի բանաստեղծությունների այդ ժողովածուի տպագրությունը։

Նեկրասովի, Զերնիշևսկու, Դոբրոլյուբովի գլխավորած «Սովրեմեննիկ» ամսագիրը հակայական ազդեցություն է ունենում Ռուսաստանում ծավալված ուսյուցիոն շարժման վրա։ Դա ժամանակի մեծ առաջավոր ժուռնալն էր, որի

շուրջն էին համախմբված Ռուսաստանի լավագույն գրողները ու քննադատները:

1860 թ. «Սովրեմեննիկ» ամսագրի աշխատակիցների մեջ առաջանում են լուրջ տարաձայնություններ: Ժուռնալը թողնում են այն գրողներն ու հրապարակախոսները, որոնք համաձայն չէին Չերնիշևսկու, Դոբրոլյուբովի, Նեկրասովի վարած ռևոլյուցիոն-դեմոկրատական քաղաքականության հետ: Դրանք լիբերալ-ազնվականի ինտելիգենցիայի ներկայացուցիչներն էին, որոնք վախենում էին ռևոլյուցիայից, գյուղացիական մասսաների լայն շարժումներից և կողմնակից էին միայն ռեֆորմների, ռեֆորմները, որոնք պետք կատարվեին վերևից, առանց դիպչելու ֆեոդալական-հարստատիրական հասարակակարգի կառուցվածքին, նրա հիմքերին: Նրանք, լիբերալ-ազնվական ինտելիգենցիայի այդ ներկայացուցիչները, որոշակիորեն չէին ուզում վատթարացնել իրենց հարաբերությունները ցարական իշխանավորների հետ:

Այդ սուր և ծանր պայքարում Նեկրասովը կանգնում է Չերնիշևսկու և Դոբրոլյուբովի ռևոլյուցիոն-դեմոկրատական դիրքերի վրա: Վ. Ի. Լենինը իր հոդվածներից մեկում անդրադառնալով 60-ական թվականների ռևոլյուցիոն-դեմոկրատների և լիբերալների միջև գոյություն ունեցող պայքարին ու Նեկրասովի դիրքավոր-

մանն այդ պայքարում, գրել է, որ Նեկրասովի ամբողջ համակրանքը Չերնիշևսկու կողմն է եղել։ «Սովրեմեննիկը» շարունակում է հաջողությամբ լույս տեսնել առանց այն գրողների, որոնք հեռացել էին ժուռնալից։ Սակայն, ցարական կառավարության պահանջները բոլոր միջոցները գործադրում էին ժուռնալի գործունեությունը խափանելու համար։ Նրանց տարբած մեքենայությունների շնորհիվ 1861 թ. ձերբակալվում են «Սովրեմեննիկի» աշխատակիցներ Վ. Ա. Օբրուչևը և ուրոլյուցիոն պոետ Մ. Լ. Միխայլովը։

Նույն թվականի նոյեմբերի 29-ին մահանում է Ն. Ա. Դոբրոլյուբովը։

Հանդես գալով Պետերբուրգի ուսանողների երեկոյին՝ նվիրված Դոբրոլյուբովի հիշատակին, Նեկրասովը ասում է. «Մենք մեր ողջ կյանքում չենք հանդիպել այդպիսի ուժ երիտասարդի, որ լիներ այնքան մաքուր, հոգով անվեհեր, անձնազոհ։ Դոբրոլյուբովի հիշատակին նվիրված իր սքանչելի բանաստեղծության մեջ Նեկրասովը գրում է.

О, сколько пламя чистое в груди
Ему должно быть сердце растопило...
Но труженик, с душой, с сердцем
Ты твердо шел путем своим —
Ум, пламенный зрелищ, ясный и трезвый,

Որ բանի կանգուն ես երկնքի նեքրո՝
Դու պոչակ չես ծնել նրա նման...
Մայր բնությունն, երբ դու այսպիսի մարդկանց
Զուգարկիր գնալ աշխարհ,
Կյանքի արար պիտի խոպան մնար...

(Թարգմ. Ս. Տատոցի)

Ընդհատ «Սովրեմեննիկը» գրկվում է իր մի շարք վաստկուն աշխատակիցներից, հատկապես Դոբրոլյուբովից, բայց Չերնիշևսկու և Նեկրասովի եռանդուն ջանքերով շարունակում է լույս տեսնել և կատարել պատմական իր խոշոր դերը ոչ միայն հասարակական ու քաղաքական կյանքում:

1862 թ. ցարական կառավարությունը մի քանի ամսով փակում է «Սովրեմեննիկը» և նույն թվականի հուլիսի 7-ին էլ ձերբակալում ու բանտ նետում 60-ական թվականների ռևոլյուցիոն շարժման առաջնորդ Նիկոլայ Գավրիլովիչ Չերնիշևսկուն:

Այսպիսով, Նեկրասովը գրկվում է իր մարտական գլխավորներից և համարյա մենակ մնում գործում: Բայց նա չի նահանջում իր դաշտավարական դիրքերից: Օրեցօր ուժեղացող ռեակցիայի դաժան պայմաններում Նեկրասովը համառորեն շարունակում է «Սովրեմեննիկի» հրատարակման դժվարին գործը: 1863 թ. Նեկրասովին հաջողվում է Պետրոպավլովսկ բերդից գուրս բերել Չերնիշևսկու «Ի՞նչ անել» վեպը և տպագրել



Ն. Ա. Նեկրասովի տունը Կարաբիխա գյուղում։

«Սովրեմեննիկի» էջերում։ Դա մի չտեսնված հանդուգն քայլ էր, որ կարող էր կատարել միայն Ջերնիշևսկու խոհական բարեկամը, նրա ուղեցույցն ու գաղափարներին մինչև վերջ նվիրված մի անձ, որպիսին էր Նեկրասովը։

«Սովրեմեննիկում» տպագրվում էին Նեկրասովի նոր ստեղծագործությունները, որոնք աչքի էին ընկնում իրենց քաղաքական նպատակասլացությամբ և պոետական բարձր շնչով։ Այնպիսի գործեր, ինչպիսիք են «Դորբոլյուբովի հիշատակին», «Երկաթուղին», «Ասպետ մեկ ժամով», «Ո՞վ է հուսախաչում լավ ապրում» պոեմի նախերգանքը և մի շարք այլ գործեր Նեկրասովին դարձնում են իր ժամանակի ամենաժողովրդական ու ամենահեղափոխական պոետը, որի ամեն մի նոր երկը հնչում էր որպես կոչ ժամանակի ծանր ու դաժան իրականության դեմ։ Բայց այս ուղեկցման ամենուրեք հարձակման էր անցել ու շարունակում էր իր ավերածությունները և ահա 1866 թ. հունիսի 13-ին «Նորին գերազանցության հրամանով վերջ է տրվում «Սովրեմեննիկի» հրատարակությանը։

Փակելով «Սովրեմեննիկը», ցարական կառավարությանը չի հաջողվում լռեցնել Նեկրասովին, խափանել նրա ժողովրդական գործունեությունը։

1868 թ. Նեկրասովին հաջողվում է ձեռք բերել «Օտեչեստվեննիե զապիսկի» ժուռնալը։ Նորից վերակսվում է Նեկրասովի ժուռնալիստական եռուն գործունեությունը։ Սալտիկով-Շչեդրինի հետ միասին, նա այդ ժուռնալը դարձնում է ժամանակի առաջավոր գրողների օրգանը, փաստորեն շարունակելով «Սովրեմեննիկի» սկսած գործը։ Այս ժուռնալի 1869 թ. և հետագա տարիների համարներում տպագրվում է Նեկրասովի «Ո՞վ է Ռուսիայում լավ ապրում» պոեմը, որը ռուսական պոեզիայի գարգացման մեջ մի նոր էտապ է կազմում։

Ամենօրյա լարված աշխատանքը, քաղաքական դաժան պայմանների հետևանքով առնգված նեղվային վիճակը, վերջնականապես քայքայում են Նեկրասովի առողջությունը։ Տանատոբիական բուժումները ոչ մի արդյունք չեն տալիս և 1878 թ. հունվարի 8-ին մահանում է Նիկոլայ Ալեքսեևիչ Նեկրասովը, իր ժամանակի մեծագույն բանաստեղծն ու քաղաքացին։

Ռուս հառաջադիմական մտքի մեծանուն ներկայացուցիչները՝ Բելինսկին, Չերնիշևսկին, Դոբրոլյուբովը առնգնցին ու փայլուն կերպով մշակեցին ռևոլյուցիոն-դեմոկրատական էսթետիկան։ Նրանք գլխովին ջախջախեցին «արվեստը արվեստի համար» իդեալիստական անակղոն տեսությունը, տեսություն, որը նպատակ էր դնում կտրել ար-

վեստը իրական կյանքից և գրողներին, նկարիչներին, երաժիշտներին ու արվեստի մյուս աշխատողներին հետու պահել հասարակական կյանքի հրատապ հարցերից, ժողովրդի կյանքը ուսումնասիրելու կարևորագույն խնդիրներից։

Բելինսկին խոսելով արվեստի հասարակական դերի մասին, մեծագույն խորհրդաւորությամբ նշում է. «Հասարակական շահերին ծառայելու իրավունքը արվեստից խլելը՝ նշանակում է չրարձրացնել, այլ նվաստացնել նրան, որովհետև դա նշանակում է զրկել նրան նրա ամենակենդանի ուժից, այսինքն մտքից, դարձնել նրան ինչ-որ վսեմիմաղ վայելչությամբ առարկա, պարապ ժամերի խաղալիք»[1]։

Չերնիշևսկին և Դոբրոլյուբովը գրականության ու արվեստի հարցերին նվիրված իրենց հանճարեղ աշխատություններում էլ ավելի խորացրին ու զարգացրին Բելինսկու մանկավարժական ուսմունքը արվեստի հասարակական դերի ու նշանակության մասին։

Նեկրասովը Բելինսկու, Չերնիշևսկու, Դոբրոլյուբովի լավագույն գինակիցն էր. նրանց հետ մխուին նա աշխատել ու պայքարել է ճորտատիրական Ռուսաստանի ազատության համար։

---

[1] Վ. Գ. Բելինսկի, Ընտիր երկեր, Երևան, 1948 թ., էջ 467—468։

Նեկրասովի գրական, հասարակական, հրապարակախոսական գործունեությունն անբաժանելի է ռևոլյուցիոն-դեմոկրատների այդ հոյակապ պլեադայի գործունեությունից։

Ռևոլյուցիոն-դեմոկրատների այն խլեակները, որ նրանք քարոզել են գրականության, արվեստի, վիպասանության, պատմության նվիրված իրենց հանճարեղ աշխատություններում, Նեկրասովը դարձրել էր իր մարտաշունչ պոեզիայի լեյտմոտիվը։ Տարբեր էին մեծ գրական ժանրերը, իսկ իդեական նպատակասլացությունը նույնն էր։ Հենվելով Բելինսկու և Չերնիշևսկու էսթետիկական հայացքների վրա՝ Նեկրասովը իր հոդվածներից մեկում գրում է. «Չկա գիտության գիտության համար, չկա արվեստ արվեստի համար,—նրանք բոլորն էլ գոյություն ունեն հասարակության համար, մարդուն վեհ ու վսեմ դարձնելու համար, նրան գիտելիքներով և կյանքի նյութական բարիքներով հարստացնելու համար»[1]։

Բելինսկու և Չերնիշևսկու ռևոլյուցիոն-դեմոկրատական հայացքները գրականության և արվեստի մասին դառնում են և Նեկրասովի հայացքները։ Հենված լինելով այդ հայացքների,

---

[1] Н. А. Некрасов, Полное собрание сочинений и писем, том IX, стр. 296. Москва, 1950 г.

ինչպես և քննադատորեն յուրացրած լինելով ռուս պոեզիայի լավագույն ավանդությունները՝ ժողովրդայնությունը, խեղճանությունը, հումանիզմը, Նեկրասովը 19-րդ դարի պոեզիայի մեջ առնձնում է մի նոր ուղղություն։ Հանդես գալով ռուս հասարակական կյանքի զարգացման մի նոր էտապում, ռևոլյուցիոն-դեմոկրատիայի այդ հանճարեղ պոետը. Պուշկինից ու Լերմոնտովից հետո, ռուսական պոեզիան բարձրացնում է զարգացման մի նոր աստիճանի։ Նոր էր ոչ միայն Նեկրասովի թեմատիկան, այլև նոր էին նրա կերտած կերպարները, նրա պոետական լեզուն, նրա բանաստեղծական մտածելակերպը, նրա պոետիկան։

Նեկրասովի պոեզիայի ուժը, հմայքը, վեհությունը նրա ժողովրդայնության մեջ է։ Իրավացուրկ, ճնշված ռուս ժողովուրդն առաջին անգամ բազմակողմանի ու լայն կերպով պատկերված ենք տեսնում Նեկրասովի պոեզիայում։ Պոետական մեծ շնորհ, ռևոլյուտական ճշմարտությամբ Նեկրասովը երգել է ռուս աշխատավոր գյուղացու վիշտն ու թախիծը, նրա խինդն ու պայքարը, նրա խռովքն ու երազանքները։ Նեկրասովի պոեզիան անսահման սեր է առաջացնում ժողովրդի հանդեպ և ատելություն նրա բոլոր անեական ինդնամիների նկատմամբ։ Պատահական չէր, որ նրա սմեն մի նոր բանա-

առնչություն էր վրա էր բևեռում ժամանակի առաջավոր մարդկանց ուշադրությունը և ծառայում որպես գինք ռևոլյուցիոն այն ընդհանուր պայքարում, որ մղվում էր ինքնակալության ու ճորտատիրական կարգերի դեմ։ Երիտասարդությունը միշտ էլ ոգեշնչվել է Նեկրասովի պոեզիայով, դաստիարակվել այդ պոեզիայի մարտական ոգով։

Նեկրասովի կոչը՝

Դու պետք այնտեղ՝
Եվ տանջանքի մոտ,
Զրկվածների մոտ
Դու պետք ես այնտեղ...

պատնում է ռևոլյուցիոն տրամադրությամբ համակված երիտասարդության ուղին։ Գեներալների ուսանողները Նեկրասովին ուղղած իրենց ուղերձում նշում են, որ ժողովրդի նկատմամբ իրենց ունեցած սիրո համար նրանք պարտական են Նեկրասովին, ում ժողովրդի վշտի ու տառապանքի անմահ երգիչն։

Բարձր է գնահատել Նեկրասովի պոեզիան մարդկության մեծագույն առաջնորդ Վլադիմիր Իլյիչ Լենինը։ Նա համախոհի մեջբերումներ է կատարել Նեկրասովից, օգտագործելով նրա կերտած բնորոշ ու տիպական կերպարները ցարական Ռուսաստանի ճորտատիրական կարգերը

մերկացնելու համար։ Ն. Կրուպսկայան իր հուշերի մեջ պատմում է, որ Լենինը ԲՈՒ աքսորավայրում և ԲՈՒ էմիգրացիայում կարդում և կրկին կարդում էր Նեկրասովի երկերը։ Լենինը նշել է Նեկրասովի պոեզիայի ժողովրդական, քննադատական ոգին, նրա առեղծագործությունների խոշոր դերը Ռուսաստանի ճորտատիրական-կալվածատիրական կարգերի մերկացման գործում։ Իր «Հոմա Բևյդենի հիշատակին» հոդվածում Լենինը գրում է. «Եվևս Նեկրասովն ու Սալտիկովը էին ուսուցանում ռուս հասարակությանը ճորտատիրակալվածատերերի կրթվածության հարուստած ու շպարած արատները տակ տարրերել նրա դիշատիչ շահերը, ուսուցանում էին տեսնել նմանօրինակ ախտերի երևակայությունն ու անհոգիությունը...»[1]։

Մեծ են Նեկրասովի վաստը ու համբերը, նրա դերն ու նշանակությունը ռուս և համաշխարհային պոեզիայում։ Նեկրասովի բարերար ազդեցությունը խոշոր է եղել ոչ միայն ռուս, այլև Ռուսաստանի մյուս ժողովուրդների գրական-հասարակական կյանքում։ Նա առեղծագործական մեծ խանդավառություն է առաջ բերել այդ ժողովուրդների բանաստեղծների մեջ, որոնք շնչել նրանց, նոր լեզք և ուժգին մղումներ

[1] Վ. Ի. Լենին, Երկեր, 4-րդ հ., հատոր 13, էջ 54։

ավել հայրենի գրականության զարգացման համար։

«Ե. Ա. Նեկրասովը և հայ պոեզիան» աշխատությունն այդ հարցերի ուսումնասիրության է նվիրված։

Ն. Ա. ՆԵԿՐԱՍՈՎԸ
ԵՎ
ՀԱՅ ՊՈԵԶԻԱՆ



XIX դարի երկրորդ կեսի հայ պոեզիան խոշոր ազդեցություն է Նեկրասովի բարերար ազդեցությունը։ Հայ պոետների համար խիստ հարազատ են հնչել Նեկրասովի պոեզիայի քաղաքացիական մոտիվները, ուսա ժողովրդի վիշտն ու ցասումն արտահայտող խորունկ երգերը, ճնշված ու իրավազուրկ ուսա գյուղացու դառը կյանքի բազմազողմանի ու խոր պատկերումը։ Հայ գրականության մեջ մեծ արձագանք են գտել հատկապես Նեկրասովի պոեզիայի հայրենասիրական մոտիվները։

Հայ իրականության մեջ առաջին մեծ պոետը, որն արձագանքել է Նեկրասովի պոեզիային, Միքայել Նալբանդյանն էր։ Ինչպես գրական քննադատության, փիլիսոփայության, պատմության, հրապարակախոսության, այնպես էլ պոեզիայի հարցերում Նալբանդյանը հետևել է ուսա ռևոլյուցիոն-դեմոկրատների՝ Վերնիշևսկու, Դոբրոլյուբովի, Նեկրասովի մարտական սոցիալիստներին։

Նախ իր ծննդավայր Նախիջևանում, ապա նաև Մոսկվայի համալսարանում ուսանելու տարիներին Նալբանդյանը հիմնովին ծանոթանում է ռուսական գրականությանը: Նրա սիրելի գրողներն էին Պուշկինը, Լերմոնտովը, Գոգոլը, Բելինսկին, Հերցենը, Տուրգենևը, Գերցենը, Դոբրոլյուբովը, Օգարևը, Նեկրասովը և ուրիշները: Իր աշխատություններում Նալբանդյանը ոգևշնչված խոսում է նրանց մասին, մեջբերումներ կատարում նրանց երկերից, իսկ մի քանիսի հետ մտերմական հարաբերության մեջ էր: Նալբանդյանն առաջին նշանավոր հայ բանաստեղծն էր, որ հաջողությամբ թարգմանեց Պուշկինի և Լերմոնտովի բանաստեղծությունները. նրա խորհրդով ու հանձնարարությամբ ռուս հանճարեղ բանաստեղծների մի շարք երկեր 50—60-ական թվականներին թարգմանվել ու տպագրվել են հայերեն:

Նեկրասովի «Սովրեմեննիկում» տպագրվող գրական-քննադատական, պատմա-փիլիսոփայական աշխատություններին Նալբանդյանը ոչ միայն քաջ ծանոթ էր, այլև առանձին երկեր նա թարգմանել է հայերեն ու տպագրել «Հյուսիսասփյուռ»-ի էջերում: Տարբեր հոդվածներից բացի, Նալբանդյանը «Սովրեմեննիկ» ամսագրից թարգմանել է Բելրանժեի ու Հայնեի բանաստեղծությունները:

Առանձին ոգևորությամբ Նալբանդյանը հետևել է Նեկրասովի ստեղծագործություններին։ Նեկրասովի պոեզիայի քաղաքացիական մոտիվները ոգեշնչել են Նալբանդյանին՝ երգելու իր ժողովրդի վիշտն ու ցասումը։ Փայլուն կերպով ըմբռնելով պոեզիայի քաղաքական ու հասարակական դերը և ամբողջովին համակված Նեկրասովի «Մուսա», «Պոետն ու քաղաքացին» և այլ բանաստեղծությունների իդեական բովանդակությամբ, Նալբանդյանը գրում է.

Լռեա կաց, դու քնար, այլ մի հնչեր ինձ,
Ապոլլոն, հեռ առ գարձյալ դու նորան,
Տուր մի այլ մարդու, որ ընդունակ է
Զոհ բերել կյանքը սիրած աղջկան։

Ես պիտի դուրս գամ դեպի հրապարակ
Առանց քնարի, անզարդ խոսքերով.
Ես պիտի գոչեմ, պիտի բողոքեմ,
Խավարի ընդդեմ պատերազմելով։

Ներկա օրերում այլ ինչ ես քնար,
Սուր է հարկավոր կտրճի ձեռքին.
Արյուն ու կրակ թշնամու վերա,
Այս պիտի լինի խորհուրդ մեր կյանքին[1]։

Ոչ միայն այս, այլև իր պոետական մյուս ստեղծագործություններում Նալբանդյանը կրկնել

---

1 Մ. Նալբանդյան, Երկերի լիակատար ժողովածու, հատոր I, Երևան, 1945 թ., էջ 96—97։

է ոտա պոեմների, հատկապես Նեկրասովի ազդեցությունը, արտահայտել է նրա ռևոլյուցիոն շունչն ու ոգին։

Իր գրական գործունեությունն սկսելով որպես բանաստեղծ, Նալբանդյանը մինչև իր կյանքի վերջը վայելուն կերպով օգտագործեց քաղաքացիական պոեզիայի ժանրը, որպես իր ռևոլյուցիոն պայքարի կարևորագույն զենքերից մեկը։ «Հյուսիսափայլ»-ի էջերում տպագրած նրա հայրենասիրական ու ազատասիրական բանաստեղծությունները ամբողջովին նվիրված են ռևոլյուցիոն-դեմոկրատների մարտական ոգով, այդ բանաստեղծությունները հակայական ազդեցություն են ունեցել ընթերցողների լայն շրջանների վրա, իշխել են երիտասարդության մտքին, ոգևորել նրան պայքարի։ Այդ առումով հատկապես պետք է նշել նրա «Ազատություն» բանաստեղծությունը, որն իր ռևոլյուցիոն բովանդակությամբ անցյալ դարի 50 — 60-ական թվականների ռևոլյուցիոն պոեզիայի գոհարներից մեկն է։ Բանաստեղծը նշում է, որ ինքը, գևոևս «անխարբառ մի մանուկ», մանկական օրորոցում «ուխտում է ազատությունը սիրել»։ Միաժամանակ նա առանում է, որ ազատության ճանապարհը փշոտ է, բայց ոչինչ նրան չի սասանում և ամբողջ ձայնով դառնում է նա ազատության թշնամիներին—

— Ազատությո՛ւն,— գոչեցի,—
Թող որոտա իմ գլխին
Փայլակ, կայծակ, հուր, երկաթ,
Թող գալ գնե՛ք ինձ ամենին,
Ես մինչ ի մահ, կախաղան,
Մինչև անարգ մահու այն,
Պիտի գոռամ, պիտ կրկնեմ
Անդադար. ազատությո՛ւն։

Ազատության մեծ ու անմահ երգչի ուսուցիչն այս կոչը լայն ճանապարհ հարթեց հայ դեմոկրատական-ուսուցիչն պոեզիայի հետագա զարգացման համար։

* * *

Թուա ուսուցիչն-դեմոկրատների, հատկապես Չերնիշևսկու, Դոբրոլյուբովի, Նեկրասովի ստեղծագործությունների նկատմամբ ակտիվ հետաքրքրություն է հանդես բերել 60-ական թվականների հայ անվանի բանաստեղծ Սմբատ Շահազիզը։ Շահազիզն իր գրական գործունեությունն սկսել է «Հյուսիսափայլ»-ի էջերում, որի խմբագիր օգին է եղել Միքայել Նալբանդյանը։ Նա Նալբանդյանի ջերմ երկրպագուներից էր, և նրա ազդեցությունն ակնհայտ է Շահազիզի ստեղծագործությունների վրա։

---

1 Մ. Նալբանդյան, Երկերի լիակատար ժողովածու, հատոր I, Երևան, 1945 թ., էջ 442։

Երկար տարիներ շարունակ ապրելով Մոսկվայում, կատարելապես տիրապետելով ռուս լեզվին, շփվելով ռուս գրական առաջավոր շրջանների հետ, Շահազիզը որոշակիորեն կրել է ռուս 60-ականների բարերար ազդեցությունը և իր ստեղծագործություններում յուրովի արձագանքել նրանց գաղափարներին:

Նալբանդյանից հետո Շահազիզը երկրորդ անվանի հեղինակն է հայ իրականության մեջ, որն իր ստեղծագործություններում մեջբերումներ է արել Չերնիշևսկու երկերից, հրապուրվել է Դոբրոլյուբովի ու Նեկրասովի պոեզիայով և նույնիսկ թարգմանել այդ հեղինակներից որոշ բանաստեղծական տողեր: Շահազիզը պատկանում է 60-ական թվականների հայ երիտասարդության այն թևին, որը առանդուն կերպով հետևել է Չերնիշևսկու, Դոբրոլյուբովի, Նեկրասովի «Սովրեմեննիկ»-ին և նրա մեջ արծարծվող գրական, քաղաքական ու հասարակական հրատապ հարցերին: Իր նամականիներից մեկում Շահազիզն այդ մասին գրում է. «Ավելորդ է ասել, որ ինձ վրա, ինչպես և իմ ամբողջ սերունդի վրա ուժեղ ազդեցություն են գործել ռուսիմների գարաշրջանը և նրա արտացոլումը ռուս մտավոր կյանքում... Ընդհակառակն շրջանում ես պատկանում էի այն երիտասարդներին թվին, որոնք ամենից ավելի առանդով հետևում էին ռուսական ժուռնալներին,

օրինակ, «Սովրեմեննիկին» և նրա մեջ արծարծվող հարցերին... 1859 թվականի «Սովրեմեննիկից» է առնված «Լևոնի վշտի» երգերից մեկի էպիգրաֆը: Կարդալով Դոբրոլյուբովի „Милый друг, я умираю" բանաստեղծությունը, ինձ մոտ միտք հղացավ գրելու անվտանգ մի բանաստեղծություն, որը ինձ մոտ սկսվում է գրեթե նույն բառերով, բայց հետո արդեն այլ ընույթ է կրում և անմիջապես վերաբերում է հայերի վիճակին»[1]:

Ուշագրավ է այս խոստովանությունը: Դա վկայում է այն մասին, որ Նալբանդյանը մենակ չէր, որ նրա հետ միասին և նրա գլխավորությամբ հայ երիտասարդության մի ամբողջ սերունդ եռանդուն կերպով հետևել, ոգեշնչվել է ռուս ռևոլյուցիոն-դեմոկրատների օրգան «Սովրեմեննիկով», այնտեղ տպագրվող Չերնիշևսկու, Դոբրոլյուբովի, Նեկրասովի մարտական հոդվածներով, գեղարվեստական հանճարեղ երկերով:

Ինչպես հայտնի է, թե «Սովրեմեննիկն» և թե առհասարակ այդ շրջանի ամենամեծ բանաստեղծը Նեկրասովն էր և հենց նրա ազդեցությամբ, նրա անմահ երկերով ոգեշնչված, սկսեց իր պոետական գործունեությունը Սմբատ Շահազիզը: Իր պոետական դավանանքը, իր ըմբռ-

---

[1] Ю. Веселовский, Русское влияние в современной армянск. литературе, Москва, 1900, стр. 14—15.

նումը պոեզիայի հասարակական դերի ու նշանակության մասին, Նեկրասովը վայրկեան կերպով արտահայտել է իր «Պոետն ու քաղաքացին» բանաստեղծության մեջ.

Будь гражданин! служа искусству,
Для блага ближнего живи,
Свой гений подчиняя чувству
Всеобнимающей Любви...

Поэтом можешь ты не быть
Но гражданином быть обязан
А что такое гражданин?
Отечества достойный сын[1].—

Մեծ բանաստեղծի այս տողերը մի ամբողջ մանիֆեստ էր 50—60-ական թվականների պոեզիայի համար։ Դա ռևոլյուցիոն-դեմոկրատական պոեզիայի նոր ուղին էր, որ նշեց Նեկրասովը։ Ամբողջովին ժխտելով ռեակցիոն ու վերացական պոեզիան, Նեկրասովն առաջադրում է ռևոլյուցիոն-դեմոկրատական պոեզիայի իր ծրագիրը։ 60-ական թվականների իր առեղծագործություններում Նեկրասովը որոշակիորեն արձագանքից Նեկրասովին, աշխատեց դառնալ նրա քաղաքացիական պոեզիայի արտահայտիչը հայ գրակա-

[1] Н. А. Некрасов, Полное собрание сочинений, том II, Москва, 1948, стр. 11—12.

նուիյան մեջ: Ճիշտ է, աշխարհայացքի սահմանափակութիւնը, ժամանակի հասարակական-քաղաքական պայքարի մեծ իրադարձութիւններից կտրված լինելը խանգարել են Շահազիզին հասնելու Նեկրասովի պոեզիայի ոսկեյուզիոն, մարմնեղող ոգու բարձրութիւնը, բայց Նեկրասովի ազդեցութիւնն այն յուրովի արտահայտութիւններում, որոնք կան Շահազիզի պոեզիայում, ուշագրավ են ու հետաքրքիր: «Բոնասիրտ սուլթանի» բանաստեղծութեան մեջ Շահազիզը ջերմորեն արձագանքում է Նեկրասովի «Ոռնան ու քաղաքացին» բանաստեղծութեան վերոհիշյալ դաղափարներին.

Եվ այժմ պոետն այլ երազում չէ,
Որ նա ոդի էր վերին երկնքի.
Եվ նորա հոգին պիտո է լռե,
Ուր բան էր վատթար խեղճութեան ազդի.
Եվ թե ծնել էր, որ լինի թարգման
Բաղցր մեղկութեան և անգործության,
Եվ, ոգևորված, քնարի հետ խոսեր,
Երբ նա երգում էր միայն գինի և սեր,—
Ո՛չ, նա փոխել էր այդ ծուռ դաղափար,
Նա բաժանորդ է ազգի ցավի հետ,
Եվ ահա այս խոսքս քնդում է ինքը,
Նա՛խ հազաացի, և ապա՛ պոետ[1]:

«Նախ քաղաքացի, և ապա՛ պոետ» դավանանքն ուղեցույց են եղել Շահազիզ բանաստեղծի

---

[1] Ս. Շահազիզ, երկեր, Երևան, 1947 թ., էջ 65—66:

համար։ Այդ մասին է վկայում նրա «Լևոնի վիշտը» բանաստեղծությունները ժողովածուն։ Իր մի այլ բանաստեղծության մեջ, որ կրում է «Գոհար, նյութապաշտ և քաղաքացին» ընդոծ վերնագիրը, Շահազիզը՝ նորից արձագանքելով Նեկրասովյան «Գոհարը և քաղաքացին» նշանավոր բանաստեղծության մեջ արծարծված ծրագրային դաղափարներին, գրում է.

Ե՛կ, Գոհար, քաղաք, այնտեղ գործ կործիր,
Հասարակի բաղդն ու օգուտն երթիր,
Դու այն ժամանակ անգամ ես ապրի,
Եվ արժանի ես մեր սուրբ հարգանքի։—
Այս Քաղաքացին ասաց պոետին,
Շռնդալ քայլերով դնաց իւր գործին[1]։

Նեկրասովի ազդեցության հետքերը պարզ կերպով կարելի է նկատել Շահազիզի նաև այլ բանաստեղծություններում, ինչպես և նրա նշանավոր «Լևոնի վիշտը» պոեմում։ Այդ պոեմի նախերգանքում Շահազիզը գրում է, որ իր «մտածության նյութը» «հասարակական ծանր պիտույքն» է։ Անդրադառնալով տերտեր կարդերի դեմ բարձրացած մասսայական դժգոհություններին, ընդվզումներին, Շահազիզը կոչ է անում իր ժողովրդին, նրա առաջավոր, լավագույն զավակներին.

---

[1] Ս. Շահազիզ, Երկեր, Երևան, 1947 թ., էջ 90։

Թող քաղաքական մեծամեծ գործեր
Այսօր չանցանեն ձեզ համար ունայն...

Պատահական չէ, որ Շահազիզի վէպերը «բանաստեղծութիւնների ժողովածուի դեմ ելան ժամանակի ռեակցիոն ուժերը, լրտեսագրեր պրծնեին նրա մասին, պահանջվեցին արգելել այդ ժողովածուն, որպես Նալբանդեանի գաղափարների ոգով գրված գիրք։

Ռուս 60-ականների և հատկապես Նեկրասովի ներկայացրած պահանջները գրողին, որպես հասարակութեան գիտակից ու գործօն անդամի, անշուշտ, հարազատ էին Շահազիզին և նա իր ներքին նույնպիսի պահանջներ է ներկայացնում հայ գրողին, հայ հրապարակախոսին։ Երիտասարդ գրականագետներից մեկին ուղղած իր մի նամակում Շահազիզը գրում է. «Ձու, որպես թմիշկ պիտի դիտես հասարակութեյունը, դորա հետ գնալով, միայն ոչ ետևից, այլ առաջից. մի ձևոխ ժամացույց, մյուսի մեջ նորա ձևոը, ճիշտ պիտի համարես ելակի շարժերը, տեղեկանալով հիմանդութեյան պատճառին և հավասար դեղ ու դարման անելով։ Եթե մարմնի մեջ վարակիչ ցավ է նկատվում և օպերացիոնի անհրաժեշտութեյուն կա, ականջ մի դնիր հիմանդի վայնին. առ դանակդ

կարիք և փտած անդը դեն ձգիր, որպես դի բոլոր մարմինը չկորչի»[1]։

Շարունակելով ու էլ ավելի խորացնելով իր միտքը գրողի հասարակական դերի մասին, Շահազիզը նշում է, որ գրողը անդադար պիտի մաքառե հասարակական խոցերի, այլանդակությունների, թերությունների դեմ և այդ նա պիտի անի ՔՀ գրչով և ՔՀ գործով։ «Հասարակության անկեղծ բարեկամը,— շարունակում է Շահազիզը,— այդպիսի դեպքերում չպիտի խնայե և ոչ մի միջոց, մինչև անգամ, ևՔՀ պահանջում է հանգամանքը, և դիվոթի պես, սուրը ձեռին, ընկնել կռվի դաշտումը։

Շահազիզի այս տողերը մեզ համար արժեքավոր են հատկապես այն իմաստով, որ նա հայ գրողների ուշադրությունը հրավիրում է դեպի իրական կյանքը, դեպի ժամանակի հասարակական հուզող հարցերը։ Դա որոշակի կոչ էր՝ հետևելու Նալբանդյանի օրինակին, նրա պես կռվելու և նրա պես ընկնելու կռվի դաշտում։ Իր պոեզիայում ևս Շահազիզը պայքարի կոչ է անում հին աշխարհի բարքերի ու սովորությունների, ֆեոդալական ծանր պայմանների դեմ։ Նա գրում է.

---

[1] Ս. Շահազիզ, Ամառնային նամակներ, Մոսկվա, 1897 թ., էջ 182։

Ո՛վ ազատություն, սուրբ աքսորական,
Ջոհնիու եմ քեզ իմ անձս հավիտյան։
Թող սարկացած դժբեղության մարդիկ,
Դնեն իմ վերա նզովքի կնիք։
Թող սրե չար լեզուն անզոր քշնամին,
Թափելով վերաս թունավոր ալաքներ,
Ես պիտի խնդրեմ, ազգ իմ լալագին,
Ոտնակոխ եղած քո իրավունքներ։
Ոչ ոք չէ՛ կարող հոգուս նպատակ
Ճնշել, խորտակել բռնության զենքով.
Ոչ սուր, ոչ արյուն, ոչ բանտ, ոչ կայծակ,
Ոչ հնչյնիկ զենքն մշտավառ բոցով[1]։

Շահազիզը դեմ էր, այսպես կոչված, «մաքուր» արվեստի տեսության։ Իր ստեղծագործություններում Շահազիզն ամենուրեք պնդել է, որ գեղարվեստը պետք է ծառայի հասարակական կարիքներին, որ նրա համար է ստեղծված նա և նրանից դուրս չկա և չի կարող լինել իսկական գեղարվեստ, իսկական գրականություն։

Իր ստեղծագործությունների մեջ նա ձգտել է պատկերել ժողովրդի կյանքը, երգել նրա քրտնաջան, արդար աշխատանքը։ Նևկրասովի ժողովրդական ջնարով ներշնչված, 1864 թվականին, Շահազիզը գրել է.

Ես լսեցի խոր հառաչանք,
Եվ վիշտ հոգու, և պանպատ,
Եվ լաց, և սուգ, և ազաչանք,
Այն էր ա՛զգ-իմ հառաչանք։

[1] Ս. Շահազիզ, երկեր, Երևան, 1947 թ., էջ 41։

Ես ուխտեցի լինել մշակ
Հասարակաց պետության.
Երգել ուսա գործ և վաստակ,
Աղուսր հացը այս կյանքի[1].

Աշխատանքի ու աշխատավորի մոտիվը հայ պոեզիայի ամենաբնորոշ հատկանիշներից մեկն է: Այդ թեման Շահազիզը բարձրացնում է սոցիալական նոր պայմաններում, տալով նոր մեկնաբանություն:

Ինակցիայի կատաղի հարձակումները 60-ական թվականների ուղղյուցիոն-դեմոկրատների վրա, նրանց բանաստեղծությունն ու ազդեցը, ինչպես շատ դեմոկրատ գրողների, Շահազիզին նույնպես ընկճում են, և նա հեռանում է դեմոկրատական դիրքերից, դառնում ավելի լռակյաց, ավելի պասիվ գրական-հասարակական ասպարեզում, միայն առանձին դեպքերում դարձյալ հիշեցնելով 60-ական թվականների վերելքի տարիների իր առնծապատծությունները:

Շահազիզը հայ գրականության պատմության մեջ մնացել է որպես 60-ական թվականների հայրենասեր բանաստեղծ և որպես այդպիսին նա իր որոշակի ազդեցությունն է ունեցել հայ բանաստեղծների հետագա սերնդի վրա: Իզուր չէ, որ Շահազիզի հիշատակին նվիրած բանաստեղծության մեջ պոետ Հովհաննիսյանը գրում է.

---

[1] Ս. Շահազիզ, Երկեր, Երևան, 1947 թ., էջ 49:

Դու ներշնչեցիր մեզ մի հույս պողպրիկ,
Թե մեր վերլուծյան օրն էլ շուտ կըգա.
Անկեղծ սիրեցիր դու քո հայրենիք,
Նա, ազնիվ երգիչ, քեզ չի մոռանա[1]։

* *
*

Անցյալ դարի 50—60-ական թվականներին ինքնուրույն և թարգմանական բանաստեղծություններով «Հյուսիսափայլ»-ի էջերում հանդես է եկել Գևորգ Բարխուդարյանը։ Լիրիկական բանաստեղծությունների կողքին Բարխուդարյանը թողել է նաև բազմաթիվ թարգմանություններ եվրոպական և ռուս բանաստեղծների ստեղծագործություններից։ Բարխուդարյանն առաջին հայ բանաստեղծն է, որ 60—70-ական թվականներին թարգմանել է հունգարական ռևոլյուցիոն բանաստեղծ Շանդոր Պետեֆիի մի շարք բանաստեղծությունները։ Բարխուդարյանի թարգմանությամբ «Հյուսիսափայլ»-ի էջերում տպագրվել են Պուշկինի լիրիկական երգերը։ Նա հաջող կերպով թարգմանել է նաև Լերմոնտովի մի շարք բանաստեղծությունները, այդ թվում նաև նրա հայտնի «Երեք արմավենին», «Վեճը», «Դարյալի կիրճը» և այլն։

---

[1] Հ. Հովհաննիսյան, Բանաստեղծություններ, Վաղարշապատ, 1908 թ., էջ 72։

Լինելով «Հյուսխաֆկյե»-ի աշխատակիցն ու ջերմ պաշտպանը, Բարխուդարյանը միաժամանակ եռանդուն կերպով հետևել է «Սովրեմեննիկ» ժուռնալին և նրա խմբագիր Նեկրասովի առեղծագործություններին։ 1878 թ. սկզբներին Բարխուդարյանը «Փորձ» ամսագրում տպագրում է «...ցի հիշատակին» մի բանաստեղծություն։ Այդ բանաստեղծության վերնագրի տակ փակագծում գրված է «Նեմանություն Նեկրասովին»։ Դժվար չէ կռահել, որ այդ բանաստեղծությունը Նեկրասովի «Թորբոլյուբովի հիշատակին» վերնագիրը կրող բանաստեղծության վերափոխությունն է։ Հեղինակը պահպանել է Նեկրասովի բանաստեղծության ընդհանուր ոգին, արտահայտչական որոշ ձևերը, կրկնել նրա նախնական առանձին տողեր։ Երկու տասնյակ տարի հետո հրատարակելով իր «Բանաստեղծություններ» ժողովածուն և դեռևս այնտեղ այդ բանաստեղծությունը, Բարխուդարյանն այս անգամ վերնագրում է այն «Մ. Ն...ցի հիշատակին», այսինքն՝ «Մխքային Նալբանդյանցի հիշատակին»։ Ուշագրավ է այն հանգամանքը, որ Բարխուդարյանն իր այդ բանաստեղծությունը նվիրել է Նալբանդյանին։ Իուսական մամուլը 70-ական թվականներին արդեն նշել էր, որ Նալբանդյանը հայկական Թորբոլյուբովն է։ Եվ, հետևելով Նեկրասովի «Թորբոլյուբովի հիշատակին» բանաստեղծության օրի-

Նախին, Բարխուդարյանը, կարծես մի անգամ ևս սիմվոլիկ կերպով ընդգծել է Թորոսյուրովի և Նալբանդյանի գաղափարական հարազատությունը:

70-ական թվականների հայ պոեզիայի վրա նկատառելի ազդեցություն ցույց տվող արտասահմանյան բանաստեղծներից մեկն է Բարխուդարյանի «Մ. Ն...-յի հիշատակին» բանաստեղծությունը և սոնա թե ինչու մենք անհրաժեշտ ենք համարում այդ բերել այն:

«Մ. Ն. ...Յի ՀԻՇԱՏԱԿԻՆ»
(Նմանություն Նեկրասովից)

Մահկանացու աշխարհ եկար,
Բայց երբ մեռար — անմահացար:
Քո հիշատակը թանկագին,
Անջինջ և սուրբ է մեզ համար,
Քեզպիսաններին կարոտագին
Վաղուց ապառում էր հայ աշխարհ:
Բոլոր կյանքդ նվիրեցիր
Եղբայրներիդ բարօրության,
Վառահատար մաքառեցիր
Խավարի դեմ ազնուության.
Երբև լուսո առող երևեցար
Հորիզոնի վրա հայության,
Ամեհիով օրը պայծառ
Հայոց ազգի վերածնության:
Ախտոս, որ քեզ չէր վիճակված,
Տեսնել քո իղձը կատարված:
Անգութ մահը անժամանակ

Հավիտահկց քեզ մեզանից,
Մինչ աւրը գորթին տալ հաղթանակ
Ապատում էինք մենք քեզանից։
Մայր հայրենիք, ողջա և լա՛ւ,
Որ նորա պես որդի կորցրիր.
Բայց սիրտդ քոզ հպարտանա,
Որ նրա պեսին աշխարհ բերիր.
Որովհետև օտար մարդիկ
Կարծում էին, թե հայ մայրեր
Ընդունակ չեն ծնել որդիք,
Ազգի համար անձնանվեր[1]։

Նեկրասովի սատիրական նշանաւոր բանաստեղծութիւններից նմանութեամբ Բարխուդարեանը փորձել է գրել մի շարք բանաստեղծութիւններ։ Դրանց մէջ համեմատաբար հաջող կարելի է համարել «Բարեսիրտ մարդը» վերնագիրը կրող բանաստեղծութիւնը, որն ամբողջովին նեբշնչված է Նեկրասովի «Բարոյական մարդը» և սատիրական մյուս բանաստեղծութիւնների ոգով։

Ես քնում եմ տաք անկողնում,
Երբեք ցրտից չեմ կոնկոռնում,
Փորս կուշտ է, սիրտս ուրախ,
Երբեք քաշում չեմ ախ ու վախ։

---

1 «Փորձ», բ. տարի, № 3, 1877—78 և Գ. Բարխուդարեան, Բանաստեղծութիւններ, Թիֆլիս, 1897 թ., էջ 83։

Տունս պատրաստ դեղեցկաշեն,
Կան կարասիքս Քանկ արժեն,
Եվ ամեն օր խնջույք, երգ, պար
Չեն պակասում առնս խոպառ։

Բայց կան, որոնք չունին տաք շոր,
Մոռ են գալիս բոլիկ, տկլոր.
Զոր հացին էլ կարոտ են մինչև,
Նոցա կյանքն է անընդհատ վիշտ։

Բայց որ մեկին հայ տամ, օգնեմ.
Անչափ շատ են, ես կրծոգնեմ։—
Շատ մատածել գնւք է, չարժե.
Նոցա հոգսն էլ աստված թաշե[1]։

* * *

Հայ կլասիկ պոեզիայի մեջ, որպես քաղաքացի-պոետ մեծ անուն է վաստակել Րաֆֆայել Պատկանյանը։ Իր գրական գործունեությունն սկսելով անցյալ դարի 50-ական թվականներին, նա 70—80-ական թվականներին դառնում է հայ պոեզիայի կենտրոնական դեմքը։ Պատկանյանը հայտնի է որպես հայ ժողովրդի ազգային-ազատագրական պայքարի մարտնչող երգիչ, օտարերկրյա և հատկապես թյուրքական բարբարոսությունների դեմ ծառացող քաղաքացի-բանաստեղծ։ Նրա մի շարք բանաստեղծությունները դարձել են մարտական երգեր՝ իր անկա-

[1] «Լումա», 1902, № 1, էջ 66։

խության համար պայքարող ժողովրդի բնությունում: Նա միաժամանակ առաքելական սուր բանաստեղծություններով աչնչացնող քննադատության է ենթարկել հայ հարուստներին, վաճառականներին, կեղծ հայրենասերներին: Պետական մեծ շնչի սեր բանաստեղծ էր Իսվայել Պատկանյանը և որպես այդպիսին 70—80-ական թվականներին նրա պետական ձայնը յայն արձագանք է գտնում ոչ միայն Հայաստանում, այլև հայարնակ ամենահեռավոր վայրերում:

Իսվայել Պատկանյանն իր ամբողջ կյանքն անց է կացրել Թուսաստանում: 50-ական թվականներին նա տեղափոխվել է Մոսկվա, ապա տեղափոխվել Պետերբուրգ և 1860 թ. ավարտել Պետերբուրգի համալսարանի արևելյան լեզուների բաժինը: Նա կատարելագես տիրապետում է ռուս լեզվին և հիմնովին ուսումնասիրում ռուս հարուստ գրականությունը: Պատկանյանը թողել է մի շարք արժեքավոր թարգմանություններ, որոնց մեջ հատկապես աչքի են ընկնում Պուշկինի «Մանկե ձկնիկ»-ի, Լերմոնտովի «Ծերնք արմավենի»-ի և պետական մի քանի այլ թարգմանություններ:

Հայ գրական քննադատությունը վաղուց Պատկանյանի անունը կապել է Նեկրասովի անվան հետ, նշել ստեղծագործական այն ներշնչումները, որ ստացել է նա Նեկրասովի պոեզիայից:

Պատկանյանը չի ժխտել ռուս պոեզիայի ազդեցությունն իր և մյուս հայ գրողների ստեղծագործությունների վրա։ 1884 թվականին Փիլիպոս Վարդանյանին ուղղած նամակում խոսելով երկու ժողովուրդների կուլտուրական փոխադարձ համագործակցության մասին, Պատկանյանը գրում է. «Մեր բնությունն ավելի մոտ լինելով նոցա (ռուսներին) և մենք անխզելի կապեր ունենալով նոցա հետ, մեր ազգովին լուսավորվելու միջոցները պիտի որոնենք նոցա միջ»։

50—60-ական թվականներին ապրելով Մոսկվայում և Պետերբուրգում, Պատկանյանը հետևել է ժամանակի գրական մամուլին, մասնակցել ռուս գրողների գրական հավաքույթներին։ «Մոլորմեննիկ»-ի խմբագիր Պանաևի հետ Պատկանյանը մոտիկ ծանոթություն ուներ և հաճախակի հանդիպումներ էր ունենում նրա հետ։ Հավանորեն «Մոլորմեննիկ»-ի խմբագրատանը նա հանդիպած լինի Նեկրասովի հետ, չնայած ուղղակի վկայություն չունենք այդ մասին։ Պատկանյանը բանաստեղծական հարաբերության մեջ էր նաև Պոնչտովի, Մայկովի, Պոլոնսկու և ռուս մյուս գրողների հետ։

1856 թ. Պետերբուրգում լույս է տեսնում Նեկրասովի բանաստեղծությունների ժողովածուն՝ „Стихотворения Н. А. Некрасова“։ Այդ ժողովածուն արտակարգ մեծ հաջողություն է ունե-

նում: Նիկրատովի անունը հնչում է ամենուրեք, հատկապես ուսանողության լայն շրջաններում: Ցարական կառավարությունը, տեսնելով Նիկրատովի գրքի հակակրոնական հաջողությունը և ազդեցությունը, խստիվ կերպով արգելում է նրա վերահրատարակությունը: Երբ լույս տեսավ Նիկրատովի բանաստեղծությունների վերոհիշյալ ժողովածուն, Պատկանյանը գտնվում էր Պետերբուրգում. նա պատկանում էր այն ներխուժասեր գրողների թվին, որոնց գրական ճակատագրի մեջ հակակրոնական նշանակություն ունեցավ Նիկրատովի բանաստեղծությունների այդ ժողովածուն: Նույն 1856 թ. և հետագա տարիներին Նիկրատովի հետևությամբ, նրա օրինակով, Պատկանյանը գրում է մի շարք բանաստեղծություններ: Նիկրատովի պոետական սուր ու խորխոտան ոգեկոչը էպիգրաֆն են ծառայում Պատկանյանի մի շարք բանաստեղծությունների համար:

Նիկրատովի «Բարոյական մարդը» բանաստեղծությունը նույն 1856 թ. Պատկանյանը «Ժողովրդական» կամ վերաձևելով գրում է «Անվնաս մարդը» բանաստեղծությունը, որը լայն տարածում է գտնում հայ ընթերցողների շրջանում: Իր այդ բանաստեղծության համար որպես էպիգրաֆ Պատկանյանը գնում է Նիկրատովի հետևյալ տողերը.

Живя согласно с строгою моралью,
Я никому не сделал в жизни зла.

Պահպանելով Նեկրասովի բանաստեղծության հիմնական ուղղությունը, կառուցվածքային ձևը, Պատկանյանը որոշ մասերում հեռանում է Նեկրասովից և հայ իրականության հետ կապված սոցիալական նոր հարցեր է առաջադրում։ Պատկանյանը փորձում է ավելի շատ օրինակներով ցույց տալ «անվնաս մարդու» անհավար վնասները։ Եթե «բարոյական մարդը» բանաստեղծության մեջ Նեկրասովը չորս օրինակ բերելով ամբողջովին ոչնչացնում է «բարոյական մարդու» գաղափարը, ապա Պատկանյանը հայ իրականության մեջ շատ ավելի վտանգավոր է տեսնում նույնանման մարդու գաղափարը մերկացնելու համար։

Մենք նշեցինք, որ Պատկանյանը Նեկրասովի բանաստեղծությունը վերափոխել է, բայց վերափոխելով, այնուամենայնիվ, մնացել է Նեկրասովի բանաստեղծության շրջանակներում։ Այսպես, օրինակ, Նեկրասովը գրում է.

Приятель в срок мне долга не представил.
Я, намекнув по-дружески ему,
Закону рассудить нас предоставил:
Закон приговорил его в тюрьму.
В ней умер он, не заплатив алтына,
Но я не злюсь, хоть злиться есть причина!

Я долг ему простил того ж числа,
Почтив его слезами и печалью...
Живя согласно с строгою моралью,
Я никому не сделал в жизни зла[1].

Նեկրասովի այս տողերը վերաիմաստավորելով, Պատկանյանը հետևյալ ձևով է շարադրում այն.

Մի օր որպես իրա կամքով, անհրամանն,
Սրընդունիցս հանկց հինգ ին վեց Յուման.
Ես խնայա, վրա հասա բրռնեցի,
Ձևրը կապած՝ դատավորին մատնեցի.
Շատ չի անցավ, վախից խնդրը Յուչն կերավ.
Ահա, էսպես մխակ հուչյը իմ կորավ։
Հետևելով միշտ օրինաց աշխարհի,
Ես կյանքումս մարդու վընաս չի արի[2]։

Այսպիսով, նույն մյուս դրամատերերի դոհերն են՝ մի դեպքում «բարոյական մարդուն» բարեկամը, որը բանտ է նետվում, ուր և նա մահանում է, մյուս դեպքում «անվնաս մարդը» հարատած որդուն դատավորին է հանձնում և որպեսն Յուներորդում ու մահանում է։ Երկու դեպքում էլ այդ հանգամանքը դրամատերերը բնորոշ առնատրությամբ կրկնում են.

Հետևելով միշտ օրինաց աշխարհի,
Ես կյանքումս մարդու վընաս չի արի։

---

[1] Н. А. Некрасов, Полное собрание сочинений, том I, Москва, 1948 г., стр. 45.

[2] *Ռ. Պատկանյան, երկեր, Երևան, 1955 թ., էջ 85։*

Նեկրասովի այս տողերը Պատկանյանը նույնությամբ կրկնում է այդ բանաստեղծության ամեն մի տունը վերջանալուց հետո, ինչպես այդ արել է Նեկրասովը:

Նեկրասովի ազդեցությունը շատ ավելի ցայտուն կերպով արտահայտվել է Ռ. Պատկանյանի «Երկու բանաստեղծ» վերնագիրը կրող բնորոշ բանաստեղծության վրա, որը նույնպես գրված է 1856 թվականին: Պետք կարծես երևի նպատակ է դրել ցույց տալու, որ իր պոետական դրոշի վրա ևս գրված է «նախ քաղաքացի և ապա պոետ» կեցվը: Պատկանյանն իր «Երկու բանաստեղծ» ստանավորի վերնագրի տակ փակագծում նշել է «նմանություն», և ապա, որպես բնորոշ բերել է Նեկրասովի հայտնի բանաստեղծությունից հետևյալ երկտողը.

Блажен незлобивый поэт,
В ком мало желчи, много чувства...

Զգալով «նմանվելը» Նեկրասովին և որոշակի հետևելով նրան, Պատկանյանն իր բանաստեղծության մեջ նույնպես պատկերում է երկու իրարամերժ պոետների կերպարները: «Ծաղրախոս» առաջին պոետը փախչում է հասարակական կյանքի դառնությունները ու չարիքները պատկերելուց: Նրա աչքին ամեն ինչ գեղեցիկ, ամեն ինչ խաղաղ ու լավ է: Նա գինաստան խնճույք է սիրում,

կանանց շրջապատում ու վարդ ծաղիկներ։ Պատկանյանը աչնչացնող ծաղրի է ենթարկում «մաքուր արվեստի» այդ խղճուկ երկրպագուին և նրա կողքին ոգեշնչված պատկերում է քաղաքացի պոետի վեհ կերպարը։ Պատկանյանը ցույց է տալիս, որ «Պոետն էր վիճակը, պատն էր կոչումը» վերջինիս, որ նրա ճանապարհը միշտ է ուղղ-վարին.

Բայց նա միշտ հպարտ՝ մշնաց հատատուն,
Հանճարն էր նորա միակ ձեռնածուն,
Անդողդոջ ոտքով անցավ այս աշխարհն,
Հոգին անվրդով, հակառը պայծառ.
Եվ մինչև վերջին րոպեն իր կենաց
Սրբատիպ չի հանձնց հառաչանք, ոչ լաց։
Բայց երբ որ նորա անշնչացած մարմին
Զազրելի սոզնոց ձեռավ լուկ բաժին,
Եվ երբ շատ դարեր ըրնացին, անցան,
Լուկ այն ժամանակ մարդիկ իմացան
Այն ազնիվ անձը սրբատիպ մեջ վախած,
Որ կուլր աշխարհն երբեք չնկատց.
Իմացան, որ կար նաև այնպես անձ,
Որ հատա վեհագոհ ծաղրի պատած էր[1]։

Հիշենք, որ Նիկրատովի մատ նույնպես քաղաքացի պոետի մահից հետո նոր դժում են, թե ինչպես առելով նա միշտ սիրել է.

---

[1] Ռ. Պատկանյան, Երկեր, Երևան, 1955 թ., էջ 76։

Со всех сторон его клянут
И, только труп его увидя,
Как много сделал он, поймут,
И как любил он — ненавидя![1].

1856 թ. գրված Պատկանյանի վերոհիշյալ բանաստեղծությունները, ինչպես և նրա մյուս բանաստեղծությունները ցույց են տալիս, թե ինչպիսի հակայական ազդեցություն է ունեցել Նեկրասովի բանաստեղծությունների 1856 թ. ժողովածուն երիտասարդ Պատկանյանի ստեղծագործական առաջին քայլերի վրա, ինչպես ոգեշնչել ու լիցք է տվել նրան։

Ռ. Պատկանյանի քննադատներից մեկն իրավացիորեն նկատել է, որ նրա ստեղծագործությունների մեջ առկա են ուսս գրականության առողջ հատկանիշները։ Նա գրել է. «Պատկանյանը Բողից անթաքույց պակաս և փոքր ներունդին և իր մուսայի զորությամբ համեմատվելով, ուսս գրողների հետ, իրրև ճի վերանորոգիչ, նրան կարելի է անվանել հայ Պուշկին, իրրև երգիծարան հայ Գոգոլ և վերջապես իրրև ժողովրդական երգիչ՝ հայ Նեկրասով»[2]։

Պատկանյանը Նեկրասովից սովորել է տեսնել հասարակական կյանքի տվերտա կողմերը, և դա

---

[1] Н. А. Некрасов, Полное собрание сочинений, том I, Москва, 1948 г., стр. 66.

[2] «Մշակ», 1902 թ., № 42։

օգնել է նրան քննադատորեն պատկերելու հայ բուրժուազիայի ապականված ու այլանդակ բարքերը, դիմակազերծ անելու հայ վաճառականության մեքենայությունները։ Պատկանյանը զայրույթով ու ցասումով լի երգեր է գրել սուլթանական Թյուրքիայի բարբարոսությունների դեմ։

Սակայն Պատկանյանի աշխարհայացքի հակասությունները արգելակեցին նրան հասնելու նպատակի և նևիրատոմի պոեզիայի խլեական հրատակությանն ու դեմոկրատական լայն ընդհանրացումների մակարդակին։

* * *

Իր գրական գործունեության առաջին շրջանում հայ մեծանուն վիպասան Րաֆֆին հանդես է եկել մեծ մասամբ որպես բանաստեղծ։ 1874 թ. նա հրատարակում է իր բանաստեղծությունների առաջին հատորը՝ «Փունջ» վերնագրով։ Նույն թվականին լույս է տեսնում «Փունջ»-ի երկրորդ հատորը, որտեղ չափածո առեղծվածությունների հետ միասին զետեղված էին նաև արձակ երկեր։ Ընդարձակ առաջաբաններին հատուկ ոճով նա հայտնի էր որպես արձակագիր, բայց բանաստեղծությունները նա շարունակել է գրել իր ողջ կյանքի ընթացքում, որոնց մի զգալի մասը տպագրել է հայ պար-

ընթական մամուլի էջերում, 70—80-ական թվականներին:

Գրական քննադատությունը քիչ է խոսել Րաֆֆի բանաստեղծի մասին. մեծ վիպասանը ստվերի մեջ է թողել բանաստեղծ Րաֆֆուն: Բայց մեր կարծիքով չի կարելի ամբողջական պատկերացում ունենալ 60—70-ական թվականների հայ պոեզիայի մասին, առանց անդրադառնալու Րաֆֆու չափածո երկերին: Րաֆֆու պոեզիան շատ կողմերով է ուշագրավ. դա ոչ միայն հետաքրքրական է որպես մեծ վիպասանի ստեղծագործության մի շրջան, այլև որպես հայ պոեզիայի զարգացման մի էտապ, որի մեջ արտացոլված են այդ պոեզիայի մի քանի բնորոշ առանձնահատկությունները, առանձնահատկություններ, որոնք իրենց զարգացումն ու խորացումը գտնում են հայ պոեզիայի հետագա ներկայի ստեղծագործություններում:

1852 թ. Րաֆֆին ընդունվում է Թիֆլիսի ռուսական գիմնազիան: Գիմնազիայի տարիները Րաֆֆու համար խոշոր նշանակություն են ունենում: Այդ տարիներին է, որ նա լրված ուսումնասիրում է ռուսերենը, հիմնովին ծանոթանում ռուս հարուստ գրականությանը: Պուշկինը, Լերմոնտովը, Նեկրասովը, Տուրգենևը դառնում են նրա սիրելի գրողները:

Երբ 1858 թ. Մոսկվայում Նազարյանի և Նալբանդյանի խմբագրությամբ սկսում է լույս տեսնել «Հյուսիսափայլ»-ը, Բաֆֆին կապ է հաստատում նրա խմբագրության հետ և «Հյուսիսափայլ»-ում տպագրում իր «Ագիամատրա վանքը» աշխատությունը, որի մեջ էր նաև «Ձայն տուր, ով ծովակ» նշանավոր բանաստեղծությունը։ «Հյուսիսափայլ»-ի էջերում տպագրված Նալբանդյանի բանաստեղծությունները, հոդվածները, օրագրերը խոր ազդեցություն են թողնում Բաֆֆու վրա և նա իր ամբողջ կյանքում խորին երախտագիտություն է ցուցաբերում Նալբանդյանի գրական ժառանգության, նրա պայծառ հիշատակի հանդեպ։ Պատահական չէ, որ Բաֆֆին իր առաջին վեպը՝ «Սալբի»-ն նվիրել է Մեքսիկել Նալբանդյանի հիշատակին։ Բաֆֆին գրել է. «Անմահ Մ. Նալբանդյանցի միշտ օրհնյալ հիշատակին խորին մեծարանքով ընծա։ Ինձ քաղցր էր այդ պաշտելի Տղամարդի հավիտենական հիշատակը հարգել՝ իմ աշխատության երախայրիքը նորան ընծայելով։ Թեպետ «Սալբի»-ի հեղինակը չէ ունեցել պատվելի Հանգուցեալ հետ խիստ մոտավոր ծանոթություն, բայց քանի կա և կմնալի հայոց լեզուն և գրականությունը, Մ. Նալբանդյանցի անմահ հիշատակը միշտ կունենա յուր պատվի համակրությունքը,

ամեն մի հայի սրտում մինչև դարերի վերջը[1]։

Ոչ միայն Նալբանդյանի, այլ առհասարակ ռուս ազատագրական շարժումների, հատկապես ռուս 60-ականների նկատմամբ Բաֆֆին հանդես է բերել մեծ հետաքրքրություն։ Նա լավ ծանոթ էր Բելինսկու, Չերնիշևսկու, Դոբրոլյուբովի, Նեկրասովի ստեղծագործություններին։ Իր դրական-հրապարակախոսական հոդվածներում նա հենվել է դրանց ստեղծագործությունների վրա, մեջբերումներ է կատարել դրանցից։

Թանի որ քննադատությունը չի անդրադարձել Բաֆֆու պոեզիային, ուստի և ուսումնասիրության նյութ չենն դարձել այդ պոեզիայի մի քանի առանձնահատկությունները, նրա կրած ազդեցությունները։ Բաֆֆին թե՛ իր բանաստեղծություններում և թե՛ իր քննադատական հոդվածներում որոշակի ընդգծել է պոեզիայի հասարակական դերն ու նշանակությունը. նա գիտեր էր, այսպես կոչված, «մաքուր արվեստի» քնարերգին և հենց «Փունջ»-ի առաջին հատորի առաջաբանում նա նշում է, որ ինքը նպատակ է դրել հասարակական կյանքի անարդարությունները ու այլանդակությունները քննադատելու «Ես, — գրում է Բաֆֆին, — ներկայացնում եմ ձեզ մի պրոմ, ուր դու կտեսնես դա-

[1] Բաֆֆի, երկերի ժողովածու, հատոր I, Երևան, 1933 թ., էջ 52։

նապան այլանդակված պատկերներ՝ յուրյանց բարոյական և մտավոր ոգեղուքյուններով. — դրքա մեր հասարակական կյանքի տիպերն են։ Իսկ իմ երգերն — արձագանք են դառը հառաչանքի... Գուցե ոմանք կդատապարտեն մեր բացասական ուղղուքյունը, չնկատելով որևիցե ուրախալի երևույթ մեր ներկայացրած պատկերների մեջ։ Բայց թող մեր անձնախարեուքյունը չմոլորեցնե մեզ, մենք ուրախալի ոչինչ չունենք»։

Իր բանաստեղծուքյուններում ու պոեմներում Րաֆֆին անդրադառնում է սոցիալական անարդարուքյուններին, հայ աշխատավորուքյան ճնշված ու հալածված վիճակին, կենցաղային այլանդակ բարքերին, պատմական հերոսական անձանց պատկերմանը, ինչպես և օտարերկրյա հալածանքների դեմ ուղղված ցասումնալի անցքերին։ Խոսելով հայ իրականուքյան ծանր ու վատթար վիճակի մասին, իր մի բանաստեղծուքյան մեջ, Րաֆֆին 1871 թ. գրել է.

Տիրում է խավար և աղքատուքյուն,
Մշակը թշվառ տրծում է, տրծում,
Աղան խլում է գառն աշխատանքը,
Նորա արյունը՝ քամում է, ծծում...[1]

---

[1] Րաֆֆի, Փունջ, հատոր I, Թիֆլիս, 1874 թ., էջ 178։

Ռուս բանաստեղծները, հատկապես Պուշկինը, Լերմոնտովը, Նեկրասովը մեծապես նպաստել են բանաստեղծ Րաֆֆու առնչագործական մտքումներին։ Իևոևս անցյալ դարի 90-ական թվականների սկզբներին ռուս գրական քննադատությունը նշել է, որ Րաֆֆին մեկն է հայ այն գրողներից, որը քաջ ծանոթ է ռուս գրականությանը։ Այսպես, օրինակ, ռուս գրականագետ Ե. Ս. Նեկրասովան Րաֆֆու մասին կարդացած դասախոսության մեջ, ապա նաև 1892 թ. տպագրած «Армянский писатель Раффи» ծավալուն հոդվածում գրում է, որ Րաֆֆին «Շատ լավ գիտեր ռուսաց գրականությունը Պուշկինից սկսած, և թարգմանել է Տուրգենևի «Արձակ բանաստեղծություններըն»[1]։

Ռուս գրողներից ուշագրավ ու հետաքրքիր է հատկապես Նեկրասովի ազդեցությունը բանաստեղծ Րաֆֆու պոետական ստեղծագործությունների վրա։ Բացի Նեկրասովյան բնորոշ մոտիվները շոշափելուց, Րաֆֆին ոգեշնչվել է Նեկրասովի առանձին բանաստեղծությունների սոցիալական խորը բովանդակությամբ։

1872 թ. Րաֆֆին գրում է «Գայլակ» խորագրով ծավալուն մի բանաստեղծություն։ Վերջինս ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ

---

[1] Журнал „Мир божий", 1892 г., № 2.

դա Նեկրասովի «Песня Еремушке» բանաստեղծության վերափոխված թարգմանությունն է։

Նեկրասովի այդ բանաստեղծությունը, ինչպես ասում էր Ստանկևիչը, այնպես էլ մյուս ժողովուրդների առաջավոր շրջաններում, լայն ընդունելություն գտավ։ Բանաստեղծության էմոցիոնալ հակայական ուժը, պոետական վառ գույները, հակապարտական ուժեղ տրամադրությունը, վարակիչ պարզությունը, այն դարձրին ռևոլյուցիոն երիտասարդության սիրելի երգը։ Դոբրոլյուբովը հրճվանքով նշեց այդ երգի մեծ հաջողությունը և աշխատում էր, որ նա էլ ավելի լայն տարածում գտնի ժողովրդի մեջ։ Իր ծանոթներից մեկին ուղղած նամակում նա գրում է. «Նեկրասովի «Երեմուշկայի երգը», որ տպագրված է «Սովրեմեննիկում» սեպտեմբերի համարում, սովորիր բերանացի և հանձնարարիր բոլորին, ում ճանաչում ես, որ նրանք նույնպես բերանացի անեն... Հիշիր և սիրիր այդ բանաստեղծությունը, դա անչափ մոտ է երիտասարդության սրտին...»[1]։

Բաֆֆին սեանում էր այդ հուզիչ երգի հասարակական լայն արձագանքը և իր ժողովրդին ևս նրան հաղորդակից դարձնելու համար «հա-

---

[1] Н. Г. Чернышевский, Материалы для биографии Н. А. Добролюбова, том I, 1890 г., стр. 534.

յայրեցք այն, պահպանելով բանաստեղծության ոյժին, բովանդակությունը, նրա քաղաքական արժեքությունը: Այսպես, օրինակ, Նեկրասովի այդ բանաստեղծության մեջ նկարագրված անցորդը պիտի կատարյալ լիներ, ասում է նրան, թե խիստ շոգ է և այլևս հնարավոր չէ ճանապարհը շարունակել, թե ողջ գյուղը դաշտում է և միայն

У двора у постоялого
Только нянюшка сидит,
Закачав ребенка малого,
И сама почти что спит;

Через силу тянет песенку,
Да, зевая, крестит рот.
Сел я рядом с ней на лесенку,
Няня дремлет и поет [1].

Բաֆֆու բանաստեղծության մեջ պատմողը, Նեկրասովի նյանյայի նման՝ օրորոցի մոտ նստած հարմանջելով համարյա նույն երգն է երգում: Որոշակի հետևելով Նեկրասովի այդ բանաստեղծությանը, Բաֆֆին գրում է:

Ժամն էր կեսօրվա: Շնչավորքն արդեն
Կրճանգստանային արևի տաքից:
Երեխի դրանը ճապուկ ուռաներն
Թել թել ստերով ծռում էր հովանին:

---

[1] Н. А. Некрасов, Полное собрание сочинений, том II, Москва, 1948 г., стр. 56.

Այնտեղ նստած էր պառավ դայակը,
Եվ օրորում էր քնած պավակը,
Մերթ հորանջելով և մերթ նիրհելով
Եղանակում էր երգը, երգելով.—[1]

Նեկրասովի նյանյան, օրորոցի իր հին երգում, խրատում է երեխային, որ հարկավոր է պահպանել հին սովորությունները, կյանքում խոնարհ լինել, հարուստներին, ուժեղներին, մեծավորներին առաջ պլուխ թեքել, նրանց հետ խոսդող տալով, որպեսզի դառն չանցնեն անխնամ օրերը:

Բաֆֆու մոտ պառավ դայակը նույնպես իր խրատներն ավարտում է Նեկրասովի նյանյայի համարյա նույնանման մտքերն արտահայտող խոսքերով.

Երբ որ դու մոնալու լինես
կյանքի մեջ աշխարհային,
Գառվի ծերի դու ալիքը,
Լաճ նորա խրատին:

Գահպանիր դու մեր պապերի
Օրենքն ու ավանդությունն,
Գլուխդ ծրեռ քեզնից մեծին,
Ջուռնհաս հպարտությունն:

Թոցանով դու կըվայլես
Օրեր հանդիստ և պայծառ,
Քնի, քնի, սիրուն Թոչնակ,
Քո մոր արտին մխիթար:

---

[1] Բաֆֆի, Փունջ, հատոր I, Թիֆլիս, 1874 թ., էջ 285.

Նեկրասովի մոտ անծանոթ ուղևորը մոտենալով նյանյային խնդրում է նրան քնել, իսկ երեխային օրորելը իրեն թողնել։ Նյանյան համաձայնում է, բայց խնդրում է ուղեկցին երգել, որպեսզի երեխան հանգիստ քնի։ Ուղևորը պատասխանում է։

—Как не спеть! спою, родимая.
Только, знаешь, не твою.
У меня своя, любимая...
«Баю-баюшки баю!...».

Բաֆֆու մոտ նույնպես երիտասարդ ուղևորը մոտենում է պայտիչին ու ասում նրան.

—Թող ինձ, պայտիչ, ես օրորեմ,
Դու հոգնել ես, դու քնիր։
«Բայց դու մըղին նանիկ ասա,
Որ քնիցը չըզարթնի»։

— Նանիկ կասեմ, դու հանգիստ կաց,
Բայց ոչ քո երգի նման։
Գառավը նիրհեց։ Ուղևորը
Սկսեց օրորել տղան։

Նեկրասովի ուղևորը նոր խրատներ է տալիս երեխային, որպեսզի նա չհետևի հին սովորություններին, օրենքներին, այլ կյանք մտնելով պայքարի ազատության, եղբայրության, հավասարության համար, ընդդեմ ճնշման, կեղծիքի, հանուն արդար աշխատանքի և այլն։

Բաֆֆու ուղևորը նույնպես օրորոցի երգում կրկնում է Նեկրասովի ուղևորի հանդուգն ու ազատամիտ խոսքերը, երբեմն վերամոխված, երբեմն էլ համարյա բառացի թարգմանությամբ։ Ահա Բաֆֆու երխտասարդ ուղևորի օրորոցի երգի խրատական խոսքերը.

— Մի հեռևիր դու վտակ, հնացած՝
Հիմար պապերիդ ծուռ օրինակին,
Մի հարմարիր քո մանուկ ուժերը
Դու եռանդամոլ նոցա ճաշակին։

— Չի նոցա անշարժ մտքի ծնունդը
Ամբողջ կյանքի է արատավորությունն,
Մտակիր նոր կյանքով, նոր հոգով, արտով,
Տուր նորանց նոր ձև և նոր գործություն։

— Մի խեղդիր քո մեջ ձգտողությունը
Մարդկային ազատ հառաջադիմության,
Տուր նորանց ամեն, ազատ զարգանալ,
Պահանջմունքի հետ ազատ բնության։

—Առանց երկյուղի, համարձակ, վտակ,
Սորվի իրական կյանքի պետքերին,
Գիտություն, արհեստ կոչվում են նորա,
Մի գոհիր նորանց սխմար կրքերին։

— Եվ հերոսական գործ ասելությամբ
Նախապաշարմանց դու վշրի շղթան,
Հնձի, վարեմի ուստ ցնորքներին,
Պաշտպան կանգնիր միշտ ճշմարտության։

— Կլինես, այո, մի նոր երևույթ
Քո անբախտացած, խեղճ հայրենիքին,
Կբառա մի նոր զարկ, զարկ դեպի հառաջ
Թուլլ — անշարժական նորա կյանքին։

Բացահայտ է, որ Բաֆֆին հետևելով Նեկրասովին, օգտվելով նրա առեղծագործական եղանակներից, 70-ական թվականների հայ իրականության մեջ, որոշակի պայքարի կոչ է անում հին, փտած օրենքների, նախապաշարումների, անարդարության դեմ և դիմում է երիտասարդ նոր ուժերին, որ նա միշտ շղթան անշարժական կյանքի ու զարկ տա հայրենիքի առաջադիմությանը։

Նեկրասովի ժողովրդական երգը բանաստեղծությունը հետևյալ տողերով է վերջանում.

И тогда-то... Вдруг проснулося
И заплакало дитя.
Няня быстро встрепенулася
И взяла его, крестя.

„Покормись, родимый, грудкою!
Сыт?.. Ну, баюшки-баю!"
И запела над малюткою
Снова песенку свою...

Բաֆֆին այս տողերը համարյա բառացի թարգմանել է.

Եվ այն ժամանակ... Ուղևորն յուր
Զամարտից խոսքը՝ հանկարծ երևան
Մըվաց ճչալով, զարթնեցավ քնեն.
Դայակը կրկին օրորեց նորան,
Կրկին հին երգը սկսավ երգել,
Եվ յուր գոգի մեջ փայփայել, գրկել։

Նևկրասովի ազդեցության որոշակի արտահայտություններըը նկատելի են Բաֆֆու նաև մյուս բանաստեղծությունների վրա, ինչպես, օրինակ, «Մրատ հայ բանաստեղծին», «Ոռնում և այլն։ Բայց առանձնակի հետաքրքրություն է ներկայացնում Բաֆֆու «Սատա» պոեմը, որը գրված է Նևկրասովի «Սաշա» պոեմի օրինակով։ «Սաշան» Նևկրասովի լավագույն գրվածքներից է։ Գրական քննադատությունը վաղուց նշել է, որ այդ պոեմը ուսա կյանքի գրականության վայելուն նվաճումներից մեկն է։ Ուշագրավ է հատկապես գեղջկուհի Սաշայի կերպարը, որը ոգեշնչված ժամանակի առաջավոր գաղափարներով, ամբողջովին տարված է գյուղի հասարակական հոգսերով։ Չնայած իր երիտասարդ տարիքին, նա խորապես գիտակցում է իրեն շրջապատող ճորտ գյուղացիության ծանր վիճակը, գաղքատներին հետ նա մտերմանում ու ապրում է նրանցով։ Սաշան մարմնավորում է հայրենասեր կնոջ հմայիչ կերպարը և այդ կերպարի մեջ է, որ հեղինակը բացահայտվում են իր

հայրենիքի հոգսերով մտահոգված ուս առաջավոր կնոջ վայրկյան հատկանիշները։ «Սաշա» պոեմը հայրենասիրական հուզիչ մի երկ է, որ ընթերցողների վրա թողնում է անջնջելի տպավորություն։

Նեկրասովի այդ պոեմը երիտասարդ Բաֆֆու առաջ ամենօգտագործական նոր հորիզոններ է բացում։ «Սաշա»-ի օրինակով Բաֆֆին գրում է «Սասա» անունով մի պոեմ՝ իր հայրենիքի կյանքից։ Մյուժետային կառուցվածքի, կերպարների հոգեբանական կազմության, բնության նկարագրության և ուրիշ շատ տեսարաններ Բաֆֆին ուղղակի ընդօրինակել է Նեկրասովից։ «Սասա» պոեմը նույն ձևով է սկսվում, ինչպես և «Սաշա»-ն։ Իր պոեմի նախերգանքում Նեկրասովը նկարագրում է հերոսի վերադարձը դեպի հայրենիք.

Родина-мать! я душою смирился,
Любящим сыном к тебе воротился.

Բաֆֆու հերոսը համարյա նույն խոսքերով է դիմում հայրենիքին.

Ես շատ տանջվեցա... հոգնեցա խաղաս...
Այժմ հաշտվում եմ բոխտիս հետ քշվաս,
Դեպի քեզ, Վարսկաստան, հայրենիք անգին,
Տարտղիր որդիդ գառնում է կըրկին։

Նեկրասովի հերոսուհին՝ Սաշան 16 տարեկան է, նա դեռ չգիտե, թե ինչ են կյանքի դառնությունները ու ցավերը, դեռատի աղջիկը դեռ նոր է փթթում ու հասունանում.

Но сохраняется дольше в глуши
Первоначальная ясность души.
Рдеет румянец и ярче и краше...
Мило и молодо дитятко ваше,—
Саша не знает забот и страстей,
А уж шестнадцать исполнилось ей...

Բաֆֆին հավանորեն չի ցանկացել, որ իր հերոսուհին տարիքի և դժբախտությունների առումով տարբերվեր Սաշայից, ուստի և գրել է.

Որպես վայրենի՝ ճոխ, անխուսիր ծաղիկ
Աճում էր նոցա դեռահաս աղջիկ,
Նա չուներ կրքեր, չգիտեր հոգսեր,
Նորան ծանոթ չէր՝ ինչ է արդյոք սեր
Արդեն տասն և վեց լրացավ տարին,
Չգիտեր աշխարհն նա ջարդն ու բարին...

Դժվար չէ նկատել, որ Բաֆֆու այս տողերը Նեկրասովի վերը բերած տողերի ազատ թարգմանություն է։

Սաշայի ապրումները նկարագրելիս Նեկրասովը գրում է.

Полем идешь — всё цветы да цветы,
В небо глядишь — с голубой высоты...

Думает Саша: — безумно роптанье...
Жизни кругом разлитой ликованье...

Բաֆֆու Սաշան բնության ազատ գրկում նույն ձևով է ընկալում իր շրջապատը.

Ճնչում է ազատ Սաշայի կուրծքը,
ինչ հրաշալի է աստուծո գործքը...»
Նայում է շուրջը — բոլորը ժպիտներ,
Անուշ ցնծությամբ երգում են թռչուններ:

Նեկրասովի պոեմում կարդում ենք.

Только у мельницы злится река:
Нет ей простора... неволя горька!
Бедная! как она вырваться хочет!
Брызжется пеной, бурлит и клокочет ..

Նույնանման պատկերը մենք տեսնում ենք Բաֆֆու մոտ.

Գարնի շալակին դեռ նոր դյուզացին
Տանում է ազատ պարենն յուր հացին.
Գառում է ջազաց, թունդ ժայթքում է ջուր,
Եվ բամբակի նման ապխտակ վրփուր:

Երկու պոեմների մեջ շատ պատկերներ, նկարագրություններ, հոգեբանական դիպվածքներ նույնանման են: Բաֆֆու հերոսուհին դա նույն Սաշան է հայ իրականության մեջ, հարմարեցրած տեղի սովորություններին ու բարքերին: Սաշայի պես Սաշան գործունյա է, արթուն իր

շրջապատի նկատմամբ, անհանդիստ։ Գյուղի աշխատանքի եռուն ժամին նա իր ծնողների մոտ է, օգնում է նրանց, թեթևացնում նրանց ծանր աշխատանքը։

Նեկրասովի Սաշան ծանոթանում է ապնվական Լև Ագարինին, նրանք բարեկամանում են և անվերջ զրուցում.

Право, как песня слова выходили.
Господи! сколько они говорили!

Բաֆֆու Սասայի հետ ծանոթանում է գյուղի Մելիքի որդին և

Նստում են նորա, խոսում են նորա,
Խոսում են... խոսում... բնավ վերջ չկա։

Լև Ագարինը մեկնում է գյուղից և Սաշան դառնում է մտախոհ, տխուր, անհանգիստ փշրվներ է անցկացնում։ Նույն ապրումներն է ունենում նաև Սասան, երբ Մելիքի տղան մեկնում է հեռու մի աշխարհ։ Հետամնաց հայ իրականության մեջ Սասային հարկադրում են ամուսնանալ չսիրած մարդու հետ, Սասան բմբոստանում է ծնողների կամքին, հին գյուղի բարքերի ու սովորությունների դեմ և չի ուզում ամուսնանալ։ Նահապետական սովորությունների համաձայն դա ծանր հանցանք էր և անա անբախտ աղջկան հարկադրում են ամուսնանալ ատելի Մինասի որդու հետ։ Սասան թույն

է խոսում և նկարագրում ամուսնական ծխական-տարբերության ժամանակ տեղական սովորույթները։ Առաջին քառյակում են և

Քանի օրից ևս մի երիտասարդ
Սրտով վշտահար, զեմքով անզվարթ,
Գնդակոծի մի սև քարի վրա
Գրում էր հետևյալ տխուր տողերը—

«Մինչ ե՞րբ, դու խավար բռնակալություն,
Կբռնեցնես առանին մեր ազատությունը,
Մինչ ե՞րբ մեզանից քո սև ճանկերը
Կբխլեն Սառայի ջրման գոհերը...»

Բաֆիթու Սառան Նեկրասովի Սաշայի համեմատությամբ դեռևս հետամնաց է, առհմանամիտ։ Նահապետական շրջապատն իր պաժան օրենքներով արգելք է հանդիսանում Սառայի ազատ, անկաշկանդ զարգացմանը, նրա երազանքների իրականացմանը, և բնականորեն, նա չէր կարող հասնել Սաշայի իդեական հասունությանը։ Սառան գոհ է դառնում ախտական խավար ու բիրտ օրենքներին։ Նրա մահը յուրովի ըմբոստացում է սիրող կարգերի դեմ, կարգերը, որտեղ անբը, ազատությունը դեռևս շղթայված են ֆեոդալական կարծրացած օրենքներով։

Պետք է նշել, որ Բաֆիֆին համարյա չի շոշափում Նեկրասովի պոեմում ծավալված իդեական այն պայքարը, որ ի դեմս Լև Ագարինի, նա մղում է լիբերալիզմի դեմ։ Հավանորեն իդեա-

կան այդ պայքարը դևռևս հող չուներ արևելյան հետամնաց այն իրականության մեջ, որտեղ գործում էին Բաֆֆու հերոսները:

Մենք անհրաժեշտ համարեցինք հանգամանորեն կանգ առնել Բաֆֆու «Դայակ» բանաստեղծության, ինչպես և «Սառա» պոեմի վրա, որոնց օրինակներով ցույց տալու համար, թե ուշ մեծ բանաստեղծը ինչպիսի խոշոր ազդեցություն է թողել 70-ական թվականների հայ պոեզիայի վրա, թե ինչպես հայ բանաստեղծը, հետևելով Նեկրասովին, առեղծել է սոցիալական լիարժեք պոետական ստեղծագործություններ հայ ընթերցողների համար:

* * *

Ուշ ակոլյուցիոն դեմոկրատների վեհ գաղափարներով խորապես ոգևորվել, առեղծագործական լույք է առացել հայ անվանի դրող-դեմոկրատ Դամբրա Ադայանը: Ուշ 60-ականների գործունեության ամենանուն շրջանում երիտասարդ Ադայանը գալիս է Մոսկվա, ապա նաև Պետերբուրգ: Ադայանի մտավոր զարգացման, նրա դեմոկրատական հայացքների ձևավորման գործում վճռական նշանակություն ունեցան Մոսկվայում ու Պետերբուրգում անցկացրած տարիները: Այդ տարիներն Ադայանը համարել է իր

մտավոր զարգացման ակնկարկը։ Նա առանցքն կնկատում է ուսուցչին տրամադրված ոչ մեծ ժամանակի ընթացքում ամեն մի նոր դիրք, ուշագիր հետևում ժամանակի առաջավոր ժառանգներին։ Խոսելով 60-ական թվականների Պետերբուրգում անցկացրած տարիների մասին, Աղայանը գրում է. «Իմ ինքնակրթության համար մենակ իմ ընդունակությանը չեմ պարտական, այլ Պետերբուրգի մտավոր վերածնության շրջանին, այն բորբոքող և առաջադեմ կյանքին, որի մեջ չէի կարող չներվել»[1]։

Անջնջելի տպավորություն էր թողել Աղայանի վրա 60-ական թվականների Պետերբուրգի մտավոր կյանքը։ «Պետերբուրգի մտավոր կյանքի վերածնությունը, — գրում է Աղայանը, — նման էր մի հեղեղի»։

1902 թվականին, Ղազարոս Աղայանի գրական գործունեության 40-ամյակի առթիվ, Ստեփան Շահումյանը, հատուկ ճառով հանդես գալով, Աղայանին բնորոշեց, որպես ժողովրդական, դեմոկրատ գրողի և հենց այդ կապակցությամբ էլ նա հանգամանորեն անդրադարձավ 60-ական թվականների ուսուցչո-դեմոկրատների գոր-

---

1 Գ. Աղայան, երկեր, հատոր 3-րդ, Երևան, 1940 թ., էջ 83։

ծուննեութեանը, հատկապես նրանց մարտական օրգան «Սովետմեննիկի» գործունեութեանը։

Աղայանի պոեզիայի, արձակի, հրապարակախոսութեան և մանկավարժական աշխատութեունների վրա խոր կնիք են դրել ռուս ռևոլյուցիոնդեմոկրատների գաղափարները։ Ինչպես վկայում են ժամանակակիցները և դրողի որդին՝ Մուշեղ Աղայանը, ռուս դրողներից Ղազարոս Աղայանն առանձնապես սիրում էր Նեկրասովին, Կոլցովին, Չերնիշևսկուն, Տուրգենևին, Գորկուն[1]։

Աղայանը Նեկրասովյան պարզության բանաստեղծ էր և լիովին համամիտ բանաստեղծի հասարակական դերի ու նշանակութեան այն բնորոշմանը, որ ավել էր Նեկրասովը։ Իր հոդվածներից մեկում Աղայանը գրում է. «Բանաստեղծի գործը, վիշտը ժողովրդինն է, ինչպես և ժողովրդինը՝ նրանը։ Նա ունի նույն հավատը, որ ունի ժողովուրդն անցյալի վերաբերութեամբ, նույն ատելը, որ ունի ներկայում և նույն հույսը, որ ունի ապագայի վերաբերութեամբ։ Բանաստեղծը ժողովրդի լեզուն է, նրա սրտի հայտարարն ու թարգմանը։ Վերջապես բանաստեղծը ժողովրդի ծնունդն է և ոչ ժողովուրդը բանաստեղծինը։

Այս սկզբունքով է դեկավարվել Աղայանն իր ողջ գրական կյանքում։ Աղայանի պոեզիայում

---

[1] «Հորիզոն գրականութեուն», 1939 թ., № 3—4։

գյուղում կերպով արտահայտվել են Նեկրասովյան մոտիվները՝ սերը դեպի ճնշված ու իրավազուրկ ժողովուրդը, նրա արդար աշխատանքը, նրա ըմբոստությունն ու բողոքը,ատելությունը դեպի շահագործողներն ու ճնշողները։ Նեկրասովի «Ո՞վ է Ռուսիայում լավ ապրում» պոեմի, «Զննձած արտը», «Սերմնացաններին» և այլ բանաստեղծություններին հրեական բովանդակության արձագանքները լսելու ենք Ադայանի «Սերմնացանը», «Ճախարակը» և մյուս բանաստեղծությունների մեջ։

Նեկրասովը պարզ ու որոշակի նշում է, որ աշխատավոր գյուղացու վաստակը թալանում են աչ ու ձախ, խլում նրա ձեռքից ապրուստի վերջին մթջոցները.

Դու աշխատում ես մեն-մենակ,
Համա, հենց գործդ ավարտեցի՛ր՝
Կըգան երեք փայատերեր՝
Ատամնած, ցմրն ու կալվածատեր։
Կա և չորրմըրդը, հոգեառ,
Թաթարից չմը մի անաստված —
Նա հո բաժին էլ չի տա քեզ,
Ամեն բան կը յափի մենակ[1]։

Ադայանը չէր կարող նույն պատկերը չտեսնել հայ գյուղում, ուր աղքատ գյուղացին դի-

[1] Ն. Ա. Նեկրասով, Ո՞վ է Ռուսիայում լավ ապրում, թարգմ. Դ. Ախով, Երևան, 1946 թ., էջ 54—55։

շեր-ցևրևկ աշխատում էր, բայց մի տուն լիքը երեխաները դարձյալ մերկ ու քաղցած էին.

Էլ ինչ ասեմ, ասոված, ինքըդ լավ գիտես,
Թե ինչ պարտքի, պատուհասի մեջ եմ ես.
Գոզ-ավազակ մի կողմից են կողոպտում,
Պարտատերըս մյուս կողմից է ինձ խնդրում:
Դրանց ձեռքից ևքեև մի բան է ազատում,
Այն էլ գայլի կամ ցավի է որ դառնում.
Մի տուն լիքը երեխեքս մերկ, քաղցած,
Տարին առատ, բայց ես չունիմ կոպեկ հաց...[1]

Այսպես արտահայտում է հայ դյուցազնին Աղայանի մուտ: Նույն պատկերը մենք տեսնում ենք Աղայանի նշանավոր «Ճախարակ» բանաստեղծության մեջ: Նեկրասովի պոետական արտահայտությունները խորը արձագանք են գտել Աղայանի ստեղծագործություններում: Նեկրասովի պոետական խոսքը ոչ միայն հուզել, ոգեշնչել է Աղայանին, այլև իր բարերար ազդեցությունն է ունեցել նրա ստեղծագործությունների վրա, նրա պոետական մտածողության ու աշխարհայացքի վրա:

80-ական թվականների վերջերին հանդես է գալիս հայ բանաստեղծների մի նոր սերունդ՝ Հովհաննես Հովհաննիսյան, Ալեքսանդր Ծատուր-

---

[1] Դ. Ա ղ ա յ ա ն, Երկեր, հատոր I, Երևան. 1947 թ., էջ 53:

յան, Հովհաննես Թումանյան և ուրիշներ. այդ անունդը շատ ավելի խորը, շատ ավելի լայն է ըմբռնում Նեկրասովի հարուստ պոեզիայի էությունը, ոգին, նրա դեղարվեստական ձևերն ու առանձնահատկությունները: Թեմոկրատ բանաստեղծների այս անունդը, ավելի մոտ կանգնած լինելով ժողովրդին, իմանալով նրա վիշտն ու թախիծը, նրա ճնշման ու շահագործման ծանր պայմանները, իրեն երկերում ավելի հարազատ ձևով է արտահայտում ժողովրդի ցավերն ու մտորումները և Նեկրասովին իր անմահ ստեղծագործություններով խորապես օգնում է բանաստեղծների այդ անունին՝ հարազատ ու ճշմարտացի արտահայտելու իրավապարկի, ճնշված ու հալածված հայ ժողովրդի դառը կյանքը:

Փորձենք համառոտակի անդրադառնալ այդ պոեմներին և ցույց տալ այն բարերար ազդեցությունը, որ Նեկրասովն ունեցել է նրանց ստեղծագործությունների վրա:

* * *

Հայ կլասիկ բանաստեղծներից Հովհաննես Հովհաննիսյանը սերտ կապված էր ռուս դրականության, ռուսական պոեզիայի հետ և դաստիարակվել էր այդ պոեզիայի լավագույն տրադիցիաներով: Նրա սիրելի պոետներն ու դրական

ուսուցիչներն էին Պուշկինը, Լերմոնտովը, Նեկրասովը և ուրիշներ։ Հովհաննիսյանն անցյալ դարի 80-ական թվականներին սովորել և ապահաջողությամբ ավարտել էր Մոսկվայի համալսարանի գրական ֆակուլտետը։ Նա աքանչելի կերպով տիրապետում էր ռուս լեզվին և շատ լավ գիտեր ռուս գրականության պատմությունը, սկսած նրա հնագույն ժամանակներից մինչև իր օրերը։ Հովհաննիսյանը ռուս գրականության եռանդուն պրոպագանդիստներից մեկն էր հայ իրականության մեջ։ Երկար տարիներ շարունակ աշխատելով Գևորգյան ճեմարանում, դասավանդելով այնտեղ ռուս գրականություն և լեզու, նա անսահման սեր ու ջերմ հետաքրքրություն է առաջացրել ուսանողության մեջ ռուսական կուլտուրայի, արվեստի ու գրականության, ռուս գրականության մեծագույն հանճարներ Պուշկինի, Լերմոնտովի, Նեկրասովի, Գոգոլի, Տուրգենևի, Տոլստոյի, Չեխովի, Գորկու և մյուսների հանդեպ։

Գևորգյան ճեմարանի նախկին աշակերտից մեկը, ընկ. Վ. Փոթիկյանը, իր ուսուցիչ Հ. Հովհաննիսյանի մասին հետևյալն է գրում. «Գևորգյան ճեմարանի բարձր դասարաններում, իմ աշակերտության շրջանում ռուսաց լեզուն, ուզածս հետ նաև գրականությունը, ավանդում էր հայ անվանի բանասեր Հովհաննես Հովհաննիսյա-

նը՝ Ռուսերենի ու հայերենի միաժամանակ անթերի տիրապետումը, լեզվական մեծ կուլտուրան ու նուրբ ճաշակը և, վերջապես, Հովհաննիսյանի՝ սիրելի բանաստեղծի ու ազանչելի մարդու անձնական հմայքը, ուսաց լեզվի ու գրականության դասերը դարձնում էին մեզ համար անսահման հետաքրքիր, կարելի է ասել՝ մեծ բավականության պղյուր։ Մեր բազմաթիվ ուսուցիչներից շատ քչերին էր հաջողվում աշակերտների մեջ այնպիսի մեծ սեր ու հետաքրքրություն զարթնեցնել դեպի իրենց ավանդած առարկան, ինչպես այդ կարելի է ասել Հովհաննիսյանի մասին՝ ուսս մեծ լեզվի ու գրականության նկատմամբ։ Զսահմանափակվելով ուսուցչության դասագրքում զետեղված նյութերով, Հովհաննիսյանը հանձնարարում էր կարդալ ուսս գրողների բոլոր կարևոր երկերը և հետաքրքրվում էր, թե ինչ չափով ենք մենք յուրացնում կարդացածը։ Մեծ սիրով ու հետաքրքրությամբ էինք լսում մենք, երբ նա դասերի ժամանակ այս կամ այն առիթով կարդում էր ուսս բանաստեղծների գործերը, հատկապես իր թարգմանության։ Բնական էր, որ ուսս լեզուն ու գրականությունն այդպիսի դասատուի ձեռքի տակ անցնելուց հետո նրա աշակերտներն ու ուսանողները հետագայում պետք է դառնային ուսուսական լեզվական ու գրական մեծ կուլտուրայի

պրոպագանդիստները հայ իրականության մեջ։

Մեծ էր Հովհաննիսյանի դերը Նևրյաուսի պոեզիայի մասսայականացման գործում։ Նա առաջին նշանավոր հայ բանաստեղծն էր, որ թարգմանել էր Նևրյաուսի երկերը։

Հովհաննես Հովհաննիսյանը դեռ Մոսկվայի Լազարյան ճեմարանի աշակերտ էր, երբ մահացավ Նևրյաուսը։ Նա անցավ Մոսկվայի հասարակության, հատկապես պրակտն ու իլյուստրացիան շրջանների վրա Նևրյաուսի մահվան գործած ցնցող ազդեցությունը և համապատասխանության երիտասարդության անհանգիստ ոգին ու վիշտը ժողովրդական մեծագույն պոետի նկատմամբ։ Ինքը Հովհաննիսյանը նույնպես խորը կերպով վշտացած էր մերկի ու մեծ պոետի անսպասելի կորստի համար։

Անցյալ դարի 80-ական թվականներին մեծ էր Նևրյաուսի ազդեցությունը ոչ միայն ռուս, այլև Ռուսաստանի ժողովուրդների գրականության մեջ։ Բանաստեղծների նոր սերունդն աճում ու ձևավորվում էր Նևրյաուսի ուժեղ ազդեցության ներքո։

Նևրյաուսի վիշտն ու թախիծը, որ պայմանավորված էր ցարական Ռուսաստանի դաժան իրականությամբ, խորթ չէին նաև հայ առաջավոր պոետների նոր սերնդի և առաջին հերթին Հովհաննես Հովհաննիսյանի համար։

Հայ ժողովրդի կյանքը նույնքան ծանր էր, որքան և այն ժողովրդի կյանքը, որի տառապանքները, վիշտն ու թախիծը, պայքարի մտրտուճները դարձել էին Նեկրասովի պոեզիայի ոգին ու էությունը:

Հ. Հովհաննիսյանի վրա ուժեղ, անջնջելի տպավորություն է թողել Նեկրասովի «Մորմրըդաժությունները շքամուտքի մոտ» բանաստեղծությունը, մի բանաստեղծություն, որի մեջ Նեկրասովը հանճարեղ կերպով պատկերել է ռուս ժողովրդի անհուն վիշտը, նրա հոգին մրմկող հառաչանքը, հառաչանք, որը կարծես երգ էր դարձել ժողովրդի համար: Նեկրասովի այդ բանաստեղծությունը Հովհաննիսյանի համար դառնում է մի լուսարձակ, որն օգնում է թափանցելու ժողովրդական կյանքի ընդերքը, նրա հոգու խորքերը: Բայց նախ վերհիշենք Նեկրասովի «Մորմրդաժությունները շքամուտքի մոտ» բանաստեղծությունը: Ահա մի փոքրիկ հատված այդ բանաստեղծությունից.

Назови мне такую обитель,
Я такого угла не видал,
Где бы сеятель твой и хранитель,
Где бы русский мужик не стонал?
Стонет он по полям, по дорогам.
Стонет он по тюрьмам, по острогам,
В рудниках, на железной цепи;

Стонет он под овином, под стогом,
Под телегой, ночуя в степи;
Стонет в собственном бедном домишке,
Свету божьего солнца не рад:
Стонет в каждом глухом городишке,
У подъезда судов и палат.
Выдь на Волгу: чей стон раздается
Над великою русской рекой?
Этот стон у нас песней зовется... [1]

Ուշադրավ է, որ Հովհաննիսյանն իր առեղծվածաբծական հետաքրքրությունները ոգեշնչող ուղեցույց է ունեցել Նեկրասովի պոեզիան։ Այսպես, օրինակ, «Մորբրդաժությունները շքամուտքի մոտ բանաստեղծության նմանությամբ, Հովհաննիսյանը, դեռևս 1883 թ. գրում է «Տաճկահայի օրը» խիստ բնորոշ բանաստեղծությունը, որտեղ նա ցայտուն կերպով պատկերում է հայ աշխատավոր գյուղացու ստրկական վիճակը։ Ցեներալի, կամ մեզ անհայտ այլ պատճառներով այդ բանաստեղծությունը չի տպագրվել ոչ 80-ական թվականներին և ոչ էլ հետագա տարիներին։ Մենք բերում ենք այդ բանաստեղծությունն ամբողջությամբ, հաշվի առնելով նրա բացառիկ նշանակությունը վաղ շրջանի Հովհաննիսյանի առեղծվածաբծական հետաքրքրությունների շրջանակները պարզելու տեսակետից։

[1] Н. А. Некрасов, Полное собрание сочинений, том II, Москва, 1848 г., стр. 54.

Ինչպես և ցույց տալու համար Հովհաննիսյանի իդեական հարստատուԹյունը ուղղությունը-դեմոկրատիայի մեծ բանաստեղծի հետ։ Ահա այդ բանաստեղծուԹյունը.

Ցույց տուր մի վայր հայաստանում,
— Ես չեմ տեսել դեԹ մի անկյուն,
Ուր սերմնացան մեր երկրագործ
Մեզ կերակրող մեր հոգսատոր
Հայ մշակը, հայ գյուղացին
Չը հառաչեր խոր Թախծոտին։

Հառաչում է մեզ դաշտերին,
Օտար երկրում, հանապարհին.
Հառաչում է մուԹ բանտերում,
Տարաշխարհի պանդոկներում։
Ինչ հառաչում է հայ մշակն
Երբ հեր հեր հեր քշում սայլակն։

Հառաչում է յուր տան մԹին,
Եվ ուրախ չէ աստծու լուսին.
Հնծում է յուր քաղաքներում,
Աստծու օրը Թաշխում, տանջվում
Փաշայի մոտ, վալու դրսան
Եվ նախատվում բարձր դրսան։

Դեռ ես ափը սուրբ երկրատի,
Հայաստանի մայր մեծ գետի.
— Ո՞վ հառաչանքն է դաշտերում,
Վիշտ ու Թախիծ հընչում, շընչում.
Այդ հառաչանքն էԹող են կոչում,
Նա, հայ մշակն է հոգն հերկում։

Դու հայրենի Եփրատ, Եփրատ.
Թարնան՝ չըրևըդ են հորգառատ.
Բայց մեր դաշտերն դու այնպես
Չես ոռոգում, ախ. ինչպես
Որ մեր աչքարշն հայոց տուն
Վշտով է լի թաթմանուն։

Բնական է, որ Նևիրատովի պոետական այս դպրոցն անցնելուց հետո, Հովհաննեսյանը պետք է պարզ ու որոշակի հայտարարեր իր պոետական աշխարհն ի սատին.

Աղբատություն ես սրբության,
Խեղճի լացը, հառաչանք,
Ես քընարս նըվիրեցի
Վիշտ երգելու և տանջանք։

Տեսնելով հարատևող ժողովրդի դառը վիճակը, նրա իրավազուրկ, ճնշված ու անմխիթար դրությունը, Հովհաննեսյանը վշտացած գրում է.

Այնտեղ, ուր աքցանը, շղթա և ավել,
Ուր լսում է լոկ հառաչանք լալագին,
Ես քնարիցը ինչ ուրախ ձայներ,
Ով իշխաս երգել, քնավ չէիներ։

Նևիրատովյան մոտիվները հարատևում ու մոտ են եղել Հովհաննեսյանի սրտին, և այդ հարատևությունն օգնել է հոգ անելանի բանաստեղծին ավելի լավ ճանաչելու իր ժողովրդին, ավելի խոր զգալու նրա ցավերը ու ավելի վառ արտահայտելու նրա մտորումներն ու երազանքները։

* * *

Հայ պեսաններից հատկապես Ալեքսանդր Ծատուրյանի ստեղծագործությունների մեջ շատ ավելի լայն, ցայտուն ու բազմակողմանի կերպով են արտահայտվել Նեկրասովյան տրադիցիաները, նրա ստեղծագործական մոտիվները։ Ծատուրյանը նույնպես անցել էր կյանքի այն դաժան ու ծանր դպրոցը, ինչ որ Նեկրասովը։ Նյութական կարիքը համարյա միշտ հետապնդել է դեմոկրատ բանաստեղծին։ Վաղ հասակից զրկվելով ծնողներից, չունենալով ապրուստի ոչ մի միջոց, նա լիովին ճաշակում է աղքատ կյանքի բոլոր դառնությունները։ Ծատուրյանն այն բանաստեղծներից էր, որ մանուկ հասակից սեսել էր հասարակ ժողովրդի նիստն ու կացը, նրա աշխատանքային ծանր պայմանները, նյութական զրկանքները, կարիքի ու հոգսի ամենօրյա տառապանքները։ Հետագայում այդ բոլորն էլ հարուստ նյութ են ծառայում Ծատուրյանի բանաստեղծական ստեղծագործության համար։

1888 թ. Ծատուրյանը տեղափոխվում է Մոսկվա, ուր և անց է կացնում իր ամբողջ կյանքը։ Ծատուրյանը չկարողացավ բարձրագույն կրթություն ստանալ և ստիպված էր իր ուսման թերին լրացնել համառ ու քրտնաջան աշխատանքով։ Մոսկվայում նա հիմնովին ուսումնասիրում է

ռուս կլասիկ գրականությունը, հատկապես Պուշկինի, Լերմոնտովի, Գոգոլի, Նեկրասովի ստեղծագործությունները։ Նա հետացած էր այդ մեծ բանաստեղծների պոետական բարձր թռիչքով, խոր իդեականությամբ, անսահման մարդասիրությամբ ու ժողովրդայնությամբ։ Ահա թե ինչու հենց այդ պոետները մեծ ազդեցություն ունեցան Շառուրյանի ստեղծագործությունների վրա. ինքը՝ պոետը էրախատպիության բարձր գնացումով է նշում այն բարերար ազդեցության մասին, որ ունեցել է ռուս գրականությունը հայ գրականության և հատկապես իր ստեղծագործությունների վրա։ 1902 թ. Յու. Վևեդենսկուն ուղղած նամակում Շառուրյանը գրում է. «Ինչ վերաբերում է ռուս գրականության և հատկապես ռուսական պոեզիայի իմ վրա թողած ազդեցությանը, ապա այդ հսկայական է։ Իմ համեստ քնարը շատ և շատ է պարտական այդ ազդեցությանը։ Իմ կյանքի ծանր պայմանների և հանգամանքների պատճառով, չստանալով լուրջ կրթություն, ես մտավորապես և հոգեպես աճել և զարգացել եմ, ամենից առաջ, ինարկե, մայրենի, ապա և ռուս գրականության շնորհիվ»։

Այս անկեղծ խոստովանությունից հետո Շառուրյանը կանգ է առնում Պուշկինի և Լերմոնտովի, Նեկրասովի ու Գլեբ Ուսպենսկու ստեղծագործությունների, նրանց այն երկերի վրա, որոնք համակել ու

հուզել են նրան, սկսած գրական գործունեության ամենավաղ շրջանից: Ռուդիայի հետ մենակռվ Ծառուրյանը սիրել է և ռուսական հոյակապ արձակը, նրա մեծագույն վարպետների՝ Գոգոլի, Տուրգենևի, Տոլստոյի, Սալտիկով-Շչեդրինի, Չեխովի, Գորկու առեղծագործությունները:

Ծառուրյանը հայ անվանի այն բանաստեղծներից է, որոնք շատ բան են սովորել ռուս ժողովրդի մեծ բանաստեղծ Նեկրասովի առեղծագործություններից: Նեկրասովի քաղաքական պոեզիան նրա համար միշտ եղել է բանաստեղծական այն բարձր գագաթը, որին նա ձգտել է հասնել իր ողջ կյանքում:

Նեկրասովի նման, իր «Ռուսիոն» բանաստեղծության մեջ Ծառուրյանը պահանջում է, որ պոեզիան լինի ժողովրդի հետ, ապրի նրա հոգսերով ու նրան հուզող հարցերով, օգնի նրան «խավարի կապանքն անվախ փշրելու»: Դիմելով պոեզիին, Ծառուրյանը մատնացույց է անում ժողովրդին.

Ապրի՛ր նորա հետ, նորա տանջանքով,
Մի՛ զզվիր նորան ձեռքդ պարզելու.
Դու ուժ ներշնչիր նորան երգերով—
Խավարի կապանքն անվա՛խ փշրելու...

Նեկրասովի ազդեցությունը շատ ավելի ցայտուն արտահայտվել է Ծառուրյանի «Թռիր, այ իմ երգ...» բանաստեղծության մեջ, որտեղ ոչ միայն որոշակի է արտահայտված իր ժողովրդի

հանդիսավ բանաստեղծի ունեցած քաղաքացիական պարտքը, այլև մատնանշված է այն աշխարհը, ուր պիտի հնչի խնկական պոետի երգը։

Ծառուկյանը երբեք չի նահանջել պոետին ներկայացված նեկրասովյան բարձր պահանջներից, այլ հպվածախոսելով ամեն առասկի դժվարություններ, ձգտել է իրականացնել այդ պահանջները։

Նեկրասովի պոեզիայի առաջ առջևը էպիգրաֆ են ծառայել Ծառուկյանի լավագույն բանաստեղծություններին։ Ծառուկյանն ավելի է մոտենում Նեկրասովին, ավելի է հոգեհիվ դառնում նրան «Գրչի հանաքները» սատիրական բանաստեղծությունների իր գրքով։ Պոետն անխնա մերկացնում է բուրժուական հասարակակարգում իշխող կաշառակերությունը, կնճիթը, գարշելի բարքերը, մարդուն աղտոտող, ճղճիմ ու այլանդակ սովորությունները։

Նեկրասովի «Օրորոցի երգը» նշանավոր բանաստեղծության ազդեցությամբ, իսկ որոշ տեղերում նմանությամբ, Ծառուկյանը գրում է իր «Ժամանակակից օրորանքը» բանաստեղծությունը։ Օգտագործելով Նեկրասովի վերոհիշյալ բանաստեղծության մոտիվը, չափը, գաղափարական նույն դիրքերից էլ Ծառուկյանը մերկացնում է «Ժամանակակից օրորանքի» ողջ վիլևսոփայությունը։

Օ՛ր-օ՛ր-օ՛ր, բալնա, օ՛ր-օ՛ր-օ՛ր, ջանի՛կ,
կուզեմ քեզ կյանքում առնանել երջանի՛կ։
Հերըդ հարուստ էր, հարուստ էլ մեռավ,
Ո՛ւմ փոդեր ասես կյանքում չըկերավ.
ժրլատ ու գըծուծ, մարդ չէր մեղքանում,
Քիղմը փոդումն էր, հոգին— գրպանում.

Գրպանից դուռով կոպեկ հանելիս,
Հետո էլ հոդուց էր մի կոտոր տալիս...
Ոդորմի՛ հոդուն... էդ ճանապարհով
Քեզ լի դանձ Քոդեց ու կյանք առատով.

Օր-օր-օ՛ր, բալա՛ս, օր-օր-օ՛ր, ջանի՛կ,
կուզեմ քեզ կյանքում առնանել երջանիկ...

Կըմարձեմ դայակ ու դաստիարակ՝
Մամզել ու մյուսիս, որ ազա՞տ, արա՛գ
Մխոբըդ զարգացնեն, աչքըդ բաց անեն,
կյանքի նորանո՛ր համփերով տանեն...
Փորձ, շխկ ու ճաշակ շատ ունեն նրանք,
Անմեղ գառի պես, դու կյանք չես մանիլ.
կյանքի համ ու հոտ, գաղտնիքներ բոլոր
Նըրանք լավ գիտեն... Որդի ջան, օ՛ր-օ՛ր...

Թվում է, որ Մատուրյանի «ժամանակակից օրորանքը» նանաստեղծության բնույթից բխված այս հատվածն էլ բավական է լիովին համոզվելու համար, թե ինչպես Նեկրասովի «Օրորոցի երգը» օգնել է նրան ստեղծելու իր «ժամանակակից օրորանքը» սատիրական հոյակապ նանաստեղծությունը, որի մեջ այնքան վարպետորեն մերկաց-

ված է երեխաների դաստիարակության բուրժուական հայեցակետով լի մոտեցում։

Հայ դեմոկրատական պոեզիայի լավագույն ներկայացուցիչներից մեկի՝ Ալեքսանդր Ծատուրյանի առեղծվածությունները ցույց են տալիս, թե որքան խոշոր է եղել ռուս ժողովրդի մեծ բանաստեղծի դերը հայ պոետ-քաղաքացու հոգևոր դաստիարակության, պոետական ճաշակի և գրական ու քաղաքական ըմբռնումների ձևավորման գործում։

* * *

Հայ ժողովրդի մեծ բանաստեղծ Հովհաննես Թումանյանը ամբողջովին կապված էր ռուս գրականության և հատկապես ռուսական պոեզիայի հետ։ Իր առեղծվածական առաջին քայլերից նրա սիրելի ուսուցիչներն էին Պուշկինն ու Լերմոնտովը, ապա Նեկրասովը և մյուս մեծանուն ռուս բանաստեղծները։ Յուրի Վեսելովսկուն ուղղած նամակում Թումանյանը նույնիսկ ասում է. «Ռուս բանաստեղծները, գլխավորապես Լերմոնտովը և ապա Պուշկինը միշտ ինձ ավելի հարազատ են թվացել, քան մեր հայոց բանաստեղծները (խոսքս իմ նախորդ շրջանի մասին է)[1]»։

---

[1] Հ. Թումանյան, Երկերի ժողովածու, հատոր V, Երևան, 1945 թ., էջ 233։

Իր հոդվածներում, նյութերում, նամակներում Թումանյանը մեծ հետաքրքրով է խոսում ռուսական պոեզիայի ժողովրդայնության, հումանիզմի, գեղարվեստական բարձր արվեստի մասին։ Նա ամենայն անկեղծությամբ հայտարարում է, թե գրել «ես սկսել եմ ռուսաց բանաստեղծների ազդեցության տակ։ Նեկրասովը ռուսացի մեծ բանաստեղծներից մեկն է, որ իր պոեզիայով զգալիորեն ազդել է Թումանյանի վրա։

Ինչպես հայտնի է, նախասովետական հայաստանը գյուղացիական երկիր էր, և Թումանյանն իր ստեղծագործություններն ամբողջովին նվիրել է հայ գյուղին, հայ աշխատավոր գյուղացիության ճնշման ու շահագործման, նրա վշտի ու հառաչանքի պատկերմանը։

Թումանյանի «Հառաչանք» պոեմը, «Գութանի երգը» և մի քանի այլ բանաստեղծություններ իրենց ամենդպայմամբ և ռեալիստական ու արտահայտական ձևերով հիշեցնում են Նեկրասովի ստեղծագործությունները։ Նեկրասովի «Ո՞վ է լավ ապրում» պոեմի «Սավելին, արքառաց բոգատիրը» գլուխը լիովին կարող է հատուկտել մեր մեջքը։ Ինչպես Սավելին, այնպես էլ մեր գյուղացին «Հառաչանք» պոեմում պատմում է, թե ինչպիսի ծանր վիճակում է գտնվում գյուղը, ինչպես գաժանորեն շահագործվում ու ճնշվում է գյուղի աշխատավորը։ Եվ ինչքան հարազատ,

համահունչուն են երկու մեծ բանաստեղծների զայրույքի ու ցասման խոսքերը, նրանց բողոքն ու ատելությունը ցարական բռնակալության դեմ։

Ահա ինչ պատասխան է տալիս Հաճախանքապետի խոժոռադեմ ծեր դյուղացին այն հարցին, թե ինչպես է ինքն ապրում.

—Ի՞նչ ես կորցրել—ընչի մեն գալի,—
Խոսեց ծերունին դառը խնդալով,
Բա մեռած հո չենք, ապրում ենք, էլի,
Ամեն մեռնողի երանի տալով։

Մենք ապրուստեն ինչ է.—մի կտոր չոր հաց,
Էն էլ երբեն հա—երեկընքից կախված.
Մի մարդ, որ նրա երեսը պահի՝
Նրրա ապրուստը ինչ պետք է լինի...

Ես քեզ օրինակ՝ ես խոր ձորերում
Իս է չորս քսան տարիս լըրացավ,
Ոչ մի խնդություն տեսա իմ օրում,
Ոչ էլ մի անգամ աչքըս լիացավ։
. . . . . .

Վազներից էնքան օգուտ չի գալի,
Ինչ նրանց համար ես վող եմ տալի.
Գլուխը քարը, դոնն փող լիներ,
Էլ ինչո՞ւ էսքան մարդ դանդաղ կաներ։

Ջախ եմ հավաքում, կրակ եմ վառում,
Սրա համար էլ փող եմ վըճարում։
Էս գավին ինչ է—մի երկու լատան,
Չինգ ու վնց անգամ տարան պատառատան։
. . . . . .

Գոզն էլ մի կըռնից, գելն էլ մյուս կըռնից,
Աչքըդ թեքեցիր—բանիդ տերը չես.
Քաշում են տանից, քաշում են գըռնից,
Ու չես իմանում՝ որ կողմը քըշես։

Այս տողերը, ինչպես և «Հատաչանքը պոեմի մյուս հատվածները վկայում են, թե ինչքան հարատաւտ ու սրտակից է եղել Նեկրասովը Թումանյանի համար, ինչքան նա օգնել է հայ բանաստեղծին պատկերելու կյանքն այնպես, ինչպես որ կարող էր պատկերել միայն ժողովրդի խոհական ու մեծ բանաստեղծը։ Շատ բան սովորելով համաշխարհային պոեզիայի մեծ վարպետներից, նա միշտ էլ հանդես է եկել որպես ազգային ինքնուրույն բանաստեղծ, որպես պոետական խոսքի ու պատկերի անմահ վարպետ։

Ինչպես Հովհաննիսյանն ու Շահազիզյանը, Թումանյանը նույնպես քարգմանել է Նեկրասովի պոեզիայի լավագույն նմուշները։

* * *

Բացի մեր անվանի բանաստեղծներից, Նեկրասովի պոեզիան ջերմորեն ընդունել, այդ

պոեզիան տարբեր ձևերով ու միջոցներով մասսայականացրել են նաև հայ մյուս գրողները: Այդ տեսակետից լուրջ հետաքրքրություն են ներկայացնում բանաստեղծ-արձակագիր Հովհաննես Մալխասյանի գրական աշխատանքները:

Մալխասյանը գրական ասպարեզ է իջել անցյալ դարի 80-ական թվականներին, հայ մամուլի էջերում տպագրելով ինքնուրույն ու թարգմանական բանաստեղծություններ, պատմվածքներ, վիպակներ և այլն: Իր ստեղծագործությունների մեջ նա պատկերել է հայ աշխատավոր գյուղացիության դառը վիճակը, ցարական չինովնիկների, գյուղական կուլակների, վաշխառուների ճիրաններում հյուծվող ու արյունաքամ եղող գյուղացիության քայքայումը: Մալխասյանն այն գրողներից է, որը բացառիկ մեծ ուշադրություն է դարձրել ժողովրդական բանահյուսության: Տարիներ շարունակ նա հավաքել է ժողովրդական առածներ, ասացվածքներ, երգեր, օգտագործել դրանք իր գեղարվեստական ստեղծագործություններում, կազմել առանձին ժողովածուներ և այլն:

Մալխասյանը նա դասախոսակվել է ռուս գրականության դեմոկրատական ավանդույթներով: Նա ոչ միայն քաջ ծանոթ էր ռուս կլասիկ գրականությանը, այլև այդ գրականության ջերմեռանդ propagandիստն էր հայ իրականության մեջ:

նա կատարել է մի շարք հաջող թարգմանություններ Պուշկինի, Լերմոնտովի, Կոլցովի, Նեկրասովի ստեղծագործություններից, կազմել է դասագրքեր, որոնց լայն տեղ է տվել ռուս առաջավոր գրականությանը:

1889 թվականին Մալխասյանը թարգմանում է Նեկրասովի «Внимая ужасам войны» բանաստեղծությունը: Իր կազմած դասագրքերում զետեղում է Նեկրասովից կատարած մի շարք այլ թարգմանություններ: Բայց ամենից ուշագրավն այն է, որ Մալխասյանը Նեկրասովի «Վարչրդաձությունները շքամուտքի մոտ» բանաստեղծության օրինակով գրում է նույնանման մի բանաստեղծություն հայ իրականության վերաբերող: Այսպիսի մի հաջող փորձ 80-ական թվականներին կատարել էր բանաստեղծ Հովհաննես Հովհաննիսյանը, բայց, ինչպես մենք նշել ենք արդեն, Հովհաննիսյանի այդ բանաստեղծությունը չէր տպագրվել: Չէր տպագրվել նաև Մալխասյանի բանաստեղծությունը: Ջնայած դրան, Նեկրասովի պոեզիայի իդեական ազդեցության տեսակետից, այդ փորձերը բացառիկ հետաքրքրություն են ներկայացնում հայ իրականության մեջ և արժանի են ամենայն ուշադրության: Վորպեսզի ծանոթ լիներով հայ գյուղին, հայ աշխատավոր գյուղացու ծանր վիճակին, Մալխասյանը կարդացել է Նեկրասովի պոետական ձևերը հաջողու-

Թյամբ կիրառելով՝ առնչվել հայ դյուցի ողբերգական պատկերը: Ահա Մալխասյանի այդ բանաստեղծությունը.

ՆՄԱՆԵՑԱԾ ՆԵԿՐԱՍՈՎԻՆ
(Размышления у парадного подъезда)

Շողը վերջին արեգական
Փայլում է դեռ սարի վերան,
Վերջին ամպիկը երկնքում
Դողդոջալով հառաջ գնում:
Մի խումբ մարդիկ երկնքի տակ
Վերջալույսի վառ ժամանակ
Բերքնավայր պատկած դեռևին
Ուշի ուշով լսում մեկին.

—Այդ ածեցեք ձեր չորս բոլոր
Հայ դյուզացին խեղճ ու մոլոր
Զևերը ծոցին օր ու գիշեր
Լալիս է բախտն յուր կարիվեր:
Չունի ապրուստ նա երջանիկ,
Նա անուսում, նա խեղճ, ոամիկ...
Գալարապատ իմ հայրենիքը,
Ձեզ այդ տուր մի տեղ, ուր դյուզացիք
Ըլսանդըվին, չչարչարվին,
Ջարդված սրտից հառաչ չհանեն:

Եվ ո՞րտեղ նա չէ հառաչում.
Սարո՞ւմ, ձորո՞ւմ, անտառներո՞ւմ,
Քաղաքներում յուր տխրոջ մատ—
Տարիներով հևում, կարոտ.
Թե՞ հովխոում, ասյլի տակին,

Հոգիի աղջի՛, ամռան շոքի՛ն...
Գառատանի գոռան աղջի՛,
Քե՛ սեփական հարկի՛ն ներքև...
Այսօր մենի՛ն է գարնում առնում
Վազը մյուսը քալան անում...
Սա ի՞նչ կյանք է, որ մեր վաստակ
Ալև, առնի, ագան անհագ...
Եվ լանք մեր հնձերին,
Ներանց անմիտ խորհուրդներին
Ինչ նա հայտնվեց, գրկվան բոլորից
Եվ հացի կարոտ ձեռացած դյուզացին
Սև օրն էր լալիս, ձեռքերը ծոցին,
Գյուղում չմնաց էլ կով ու կիթան,
Բոլորը խլեց անկշռում ագան[1]:

Մալխասյանի այս բանաստեղծությունը Նեկրասովի պոեզիայի վառ արձագանքներից մեկն է հայ գրականության մեջ:

* * *

Նեկրասովի քաղաքացիական-ուսուցիչն պոեզիան ոգեշնչել ու առնչագործական լիցք է տվել հայ պրոլետարական պոեզիայի հիմնադիր Հակոբ Հակոբյանին: Պատանեկան տարիներին գալով Բաքու, ուսուցչական արհամարհություններով համակված ներխուժողության ազդեցությամբ, նա, ինչպես ինքն է վկայում իր վաղ շրջանի «Հիշատակարաններ»-ում, կլանված կար-

1 Գրականության և արվեստի թանգարան, Մալխասյանի ֆոնդ:

դում է ռուս գրողների ստեղծագործությունները և հատկապես տարվում է Բելինսկու, Ջերնիշևսկու, Դոբրոլյուբովի, Գնեդիչի, Նեկրասովի ստեղծագործություններով։ «Այգեվաճ գրքերից, —գրում է Հակոբյանը,— մեծ ագահությամբ կարդում էի Ջերնիշևսկին, Դոբրոլյուբով և այլ դպրոնի գրքեր, որ ամառը բերում էին Ռուսաստանից»[1]։

Բնորոշ է, որ քսանամյա Հակոբյանը ռուս պոետներից մի առանձին սիրով տարվում է Նեկրասովի պոեզիայով, կարդում հրապարակի վրա եղած նրա բոլոր գործերը, բերանացի անում նրա մի շարք բանաստեղծությունները և ընկերների շրջանում ոգևորված արտասանում դրանք։ 1887 թ. իր «Հիշատակարան»-ում Հակոբյանը գրում է. «Բաքու ընկնելով սիրեցի ու կարդալուց հետո ամբողջովին տարվեցի Նեկրասովով»[2]։

Ուշագրավ է այն հանգամանքը, որ խոր ու բազմակողմանի ծանոթությունը Նեկրասովի պոեզիային և այդ պոեզիայի որոշակի ազդեցությունը Հակոբ Հակոբյանի մոտ ուժեղացնում են առելությունն ու պայքարը ռեակցիոն ռոմանտիզմի, ազգային անտարբերության ու սահմանափակության դեմ։ Նեկրասովի ստեղծագոր-

---

[1] Հ. Հակոբյան, Երկեր, 1951 թ., էջ 334։

[2] Հայկական ՍՍՌ Գրականության և արվեստի թանգարան, Հ. Հակոբյանի ֆոնդ։

ծուխյաննելուում Հակոբյանը անանում է հայրենասիրության, ժողովրդի վշտի ու տառապանքի մխանգամային նոր, ավելի հարուցում, բարմակողմանի ու ճիշտ պատկերում, քան 80-ական թվականներին հայտնի այլ բանաստեղծների երկերում։ Ծանոթանալով Նեկրասովի և ուսս առաջավոր գրողների ստեղծագործությանը, Հակոբյանը նրանց մոտ գտնում էր «ժողովրդական վշտերի արտահայտության ավելի հարուցում ու անպարկեշտ տարրեր»[1]։

Պատահի Հակոբյանի անհատաշխույժ չեն վրիպել նուիրական առանձին ու հզակի այն խարդախությունները, որ 80-ական թվականներին կատարվել են Նեկրասովից։ Իր «Հիշատակարանում» 1885 թ. հոկտեմբերի 23-ին նա գրում է. «Եվ ահա ես տեսա Նեկրասովի „Внимая ужасам войны“-ի խարդախությունը հայերեն. ես կարդացի ու նմանությունը գտա։ Ես մտածում էի, բայց ես երբ պիտի մի խարդախություն գեթ անեմ»[2]։

Անհամեմատ ավելը դեպի 60-ական թվականների ռևոլյուցիոն-դեմոկրատները, հատկապես դեպի Նալրանդյանն ու Նեկրասովը, մեծ նշանակություն ունեցան Հակոբյանի ստեղծագործու-

1 Հ. Հ ա կ ո բ յ ա ն. Երկեր, 1931 թ., էջ 365։

2 Գրականության և արվեստի թանգարան, Հ. Հակոբյանի ֆոնդ։

թյուններին համար։ Հայ աշխատավոր մասսաների ճնշման ու շահագործման, վշտի ու տառապանքի աշխարհը պարզելով իր առեղծվածային թուն առարկան և շարունակելով Նեկրասովի traditions-ները, Հակոբյանը հասարակական նոր իրադարձությունների պատմանելուն, վճռականորեն կարող էր հայտարարել.

Եվ որքան դյուքով լինի ձեր հմայքը,
Երկինք ու աստղեր,
Կա՛մ մի քրանալի, կարիքի աշխարք,—
Ճնշված ու լքված՝
Նրան եմ ընտրում,
Այնտեղ վիշտ, պրկանք իրար հետ պրկված՝
Մի ելք են փնտրում...

Հակոբյանը Նեկրասովի դեմոկրատական-ռևոլյուցիոն պոեզիայի խոսկան շարունակողն էր հայ գրականության մեջ. Նրան առաջինը վճռակիվեց, աշխատավոր լայն մասսաների վշտի ու տառապանքի երգերից բացի, ստեղծել այդ մասսաների պայքարի, հաղթանակի ու մեծ պատմության ռևոլյուցիոն հերոսական երգերը։

* * *

Հայ պրոլետարական արձակի հիմնադիր Մովսես Արագին իր հիշողություններում ու առանձին հոդվածներում բազմիցս անդրադարձել է Բելինսկու, Չերնիշևսկու, Դոբրոլյուբովի, Նեկրա-

սովի առեղծվածությունները, նրանց ուսումնասիրության գործունեության մասին։ Նեկրասովի մասին գրած հոդվածում Արապին հատուկ ընդգծում է նրա առեղծվածությունների ուսումնասիրության ոգին։ «Նեկրասովի պոեզիայի մեջ,— գրում է նա,— մուժին ու բարին, աղբերն ու ճորտը հավիտենական անհաշտ թշնամիներ են։ Մանկությունից ականատես լինելով ժողովրդի անհուն տառապանքին, այնուհետև միանալով Բելինսկու, Չերնիշևսկու և Դոբրոլյուբովի ուսումնասիրական գաղափարներին, Նեկրասովը ուսումնասիրության մեջ էր առնում ժողովրդի փրկության ուղին»[1]։

Իր «Այրվող հարիզոնը» վեպում Արապին նկարագրում է Պետերբուրգի ուսումնասիրության կյանքը 1905 թ. ուսումնասիրության նախօրյակին։ Այդ տարիներին Արապին սովորում էր Պետերբուրգում և ակտիվ մասնակցում ուսանողական շարժումներին։ Վեպի բազմաթիվ էջերը ինքնակենսագրական բնույթ ունեն։ Արապին նկարագրում է, թե ինչպես ուսումնասիրության ժամանակ ոստիկանությունը պինդորներով օգնության շրջապատում ու ձերբակալում է ցուցարարներին, որոնց մեծ մասը ուսանողություն էր։ Նրանց հավաքում են մի լայն բակի-

---

1 «Գրական թերթ», 1953 թ., № 1։

մեջ ցուցադրելու և ապա բանտերն ուղարկելու համար։ «Հանկարծ բոլորի ձայները խլացրեց մի հզոր բարիտոն,—գրում է Արագին։—Երգողը ռուս մուժիկի դեմքով մի ուսանող էր, բայց մարդավարի թիկնեց ու պնդակազմ։ Նա բարձրացել էր սեղանի վրա ու երգում էր իր հուժկու ձայնով Նեկրասովի տողերը.

Назови мне такую обитель,
Я такого угла не видал,
Где бы сеятель твой и хранитель,
Где бы русский мужик не стонал?
Стонет он по полям, по дорогам.
Стонет он по тюрьмам, по острогам.
В рудниках, на железной цепи...

Երգչին միանում են հետիոտն բոլորը, ոտնաթաթերից գալանում է մի վիթխարի գետ, որն իր անդիմադրելի հոսանքով ծփում է անծայր դաշտերի մեջ... Երգը ցնցում է սրտերը, միացնում բազմահազար հաստատակամություն մի խոր զգացումով, մի ընդհանուր տառապանքից բխած երգով...[1]։

Հզոր երգը ցնցում է նաև պինվարնեերին, որոնց հավաքվել ու բերել էին ճնշելու ցույցը։ Դրանցից մեկի մասին Արագին գրում է. «Հանկարծ նրա ականջին հնչում է ուսանողի հուժկու

[1] Արագ, Այրվող հրթիռներ, Երևան, 1940 թ., էջ 166—167։

ձայնը... ասես շամ վաղուց ծանոթ ու սրտից խոսող մի երգ է լսում... Նրա ներսը կարծես ինչ որ հալվում է...չէ՛, սրանք լավ մարդիկ են,—մտածում է նա,— փոգևկանց մարդիկ են... չէ, էասկզ մի ուրիշ բան կա, որ ես չեմ հասկանում...

Ու նա լսում է երգը մի ծարավի զգացումով, որպես ամռան գետինը ծծում է անձրևի ջուրը... ինչ որ լավ բան է մտնում իր էության մեջ. ինչ որ լալ է... լալ է...

Նրան սթափեցնում է ուսանող Գևորովը, որը մոտենում է Լևոնյանի հետ:

—Հը, բրատեց, ինչ է, հավանո՞ւմ ես երգը... հա, խմացիր, դա մեր ժողովրդի մասին է...

Հա, շատ լալկ է, սրտաշարժ երգ է...»[1]:

Նեկրասովի պոեզիայի ազդեցությունը մենք զգում ենք սովետահայ բանաստեղծների ստեղծագործությունների մեջ: Ջերմորեն սիրելով Նեկրասովին, սովետահայ բանաստեղծները պոետական հուզիչ տողեր են նվիրել նրան: Բանաստեղծուհի Վարսենիկ Ագասյանը, որին խորապես հուզել է ռուս կանանց նվիրած Նեկրասովի ստեղծագործությունները և որոնց օրինակով ինքը՝ բանաստեղծուհին գեղեցիկ հեղկությամբ առաջ բազմաթիվ բանաստեղծություններ է գրել հայ կանանց ճնշված ու իրավազուրկ վիճակի մասին,

---

1 Ա բ ա գ ե ի, Այրվող հոգիները, Երևան, 1940 թ., էջ 167:

հանդես է եկել մի ուշագրավ բանաստեղծությամբ՝ նվիրված Նեկրասովի պայծառ հիշատակին։ Այդ բանաստեղծության մեջ Ադայյանը պատկերում է երիտասարդության աշխարհն՝ մի կողմից Նեկրասովի պատկերած ճորտատիրական Ռուսաստանը, մյուս կողմից ազատ սովետական երկիրը։ Բանաստեղծությունն այսպես է ընթերցում Նեկրասովին.

Դու երգել ես տառապանքը դյուղացու,
Քո տողերում շարել արցունքը նրա,
Ապրել նրա կսկիծներով մահացու,
Որ հևում էր՝ կարիքն առած գիրկն իրա։

Դու երգել ես մանուկներին գալկագեմ,
Հարուստների դռներն մոտ քարշ եկող,
Ինց մարդարե կանգնել ես դու նրանց դեմ
Ու կարդացել նրանց հոգին տառապող։

Դու առել ես շղթաները արյունոտ,
Ըմբոստացել կարգերի դեմ այն դաժան,
Դու խոսել ես ժողովրդից քո ցավոտ,
Որի սրտում կար ախտությունն անասնմանը։

Դու տառապած մայրերից ես խոսել մեջտ,
Եվ ուս կնոջ արցունքներից հոգնահոս,
Քո երկիրը ուներ այնքան խորունկ միջտ,
Իսկ դու, ասես, նրա ճամբին—մի փոքրոտ։

Ամեն անգամ դու գրիչդ շարժելիս,
Ապրում էիր լույս գալիքը այսօրվա.
Արդարամիտ քո երգերը հյուսելիս,
Տեսնում էիր այդ պատկերը այսօրվա։

Հայ դեմոկրատական պոեզիան որոշակիորեն զարգացել է Նեկրասովի ազդեցությամբ։ Հայ իրականության մեջ տարբեր պոետներ տարբեր ձևով են ընկալել Նեկրասովի պոեզիան, տարբեր է եղել և նրանից կրած ազդեցության և ոգեշնչման աստիճանը, բայց այդ ազդեցությունը եղել է և մենք պարտավոր ենք նշել այն, որպես ռուս ժողովրդի մեծ պոետի ծառայությունը հայ պոեզիային։

Հայ առաջավոր, դեմոկրատական պոեզիայի լավագույն ներկայացուցիչների համար խիստ հարազատ են հնչել Նեկրասովի պոետական հուժկու ձայնը, վշտի մորմոքները, պայքարի ու ազատության ուժեղ և դերող երգերը։

Ն. Ա. ՆԵԿՐԱՍՈՎԻ
ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ՀԱՅԵՐԵՆ
ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ





Թարգմանական գրականության հարուստ փոթորկալից պատմություն ունի հայ ժողովուրդը։ Դեռևս հնադարում հայերը թարգմանել են հունական, հռոմեական և արևելյան հին ժողովուրդների լավագույն գրականության նմուշները։ Նույն գրականության հուշարձանների հայերեն առավել հնագույն թարգմանությունները թվագրվում են 13-րդ դարից։ Հետագայում առանձին թարգմանությունների հանդիպում ենք 17—18-րդ դարերում։ Անդրկովկասի միացումը Ռուսաստանին լուրջ դարձ տվեց նաև թարգմանական գրականության զարգացմանը։ Հայ մեծ լուսավորիչ Խաչատուր Աբովյանն առաջիններից մեկն էր, որ թարգմանեց ռուս դասական հեղինակներ Կամենիցկուց, Դմիտրիևից, Կռիլովից առանձին ստեղծագործություններ։ Նա վաստակեն հիմք դրեց ժողովրդին հասկանալի, նրա լեզվով կատարված թարգմանական գրականության։ Այդ առաքելությամբ Աբովյանը նույնպես հանդես եկավ որպես նորարար։

Պուշկինի ու Լերմոնտովի բանաստեղծությունները ու պոեմները թարգմանվել են հայերեն դեռևս նրանց կենդանության օրոք: 1843 թվականին, Մոսկվայում, Հակոբ Համատասյանը հրատարակում է առաջ բանաստեղծներից կատարած իր թարգմանությունների մի ժողովածու, որի մեջ դեռևս էին մուկոսեանու, Պուշկինի, Լերմոնտովի, Բարատինսկու, Զնևոլիչի առանձնագրծությունները:

Առաջին պոեմից կատարած թարգմանությունները աչքի էին ընկնում «Հյուսիսափայլ»-ի էջերում: Թարգմանվում են Պուշկինի ու Լերմոնտովի բանաստեղծությունները: «Հյուսիսափայլի» էջերում տպագրվում է Լերմոնտովի «Դևը»՝ Մանուկ Մատաթյանի առաջնակարգ թարգմանությամբ: Ինոչենտի-պեմոկրատ Մինքաչել Նալբանդյանը 50-ական թվականներին թարգմանում է Պուշկինի ու Լերմոնտովի առանձին բանաստեղծությունները:

60-ական թվականների հայ մամուլի էջերում ավելի հաճախ ենք հանդիպում թարգմանական բանաստեղծությունների: Այնպես որ հայ գրականության առաջին պոեմից թարգմանության դժալի փորձ ունենք, երբ նա պիտիոյ Նեկրասովի պոեմից թարգմանության: Մեծ չէր այդ փորձը, բայց դա մի կարևոր էտապ էր

թարգմանական պռոզիայի հետագա զարգացման համար:

Նախքան Նեկրասովի առևտրագործությունների թարգմանությունը, նրա անունը, որպես առաջ մեծ բանաստեղծի, ծանոթ էր հայ ինտելիգենցիայի լայն շրջաններին: Հայ պռոմանները նրա բանաստեղծությունների առանձին տողերը էպիգրաֆ են դարձրել իրենց առևտրագործություններին: Ռ. Պատկանյանը, Ս. Շահազիզը և մյուսները Նեկրասովի հայտնի բանաստեղծությունների օրինակով կամ նրանց նմանությամբ երգեր են գրել:

Նեկրասովի բանաստեղծությունների թարգմանությունները ունեն առանձնահատուկ դժվարություններ: Այդ բանաստեղծությունները դեռ գրվելուց և ընագրին հարազատ թարգմանելը շատ ավելի դժվար էր, քան դրանց նմանությամբ երգեր գրելը: Այսպիսով, հայ գրականության մեջ Նեկրասովի պռոտոտիպական հոչակի ստրածման առաջին շրջանը կարելի է համարել Նեկրասովին հետևելու, նրա առանձին երկերի նմանությամբ երկեր գրելու շրջան: Այդ շրջանին արագ հաջորդում է Նեկրասովի առևտրագործությունների փոխադրությունների շրջանը, ըստ որում, այդ փոխադրությունների ժամանակ երբեմն թաց էին թողնվում Նեկրասովի բանաստեղծությունների առանձին քառյակները,

ավելացվում էր նորը, փոխվում էր Նևկրասովի բանաստեղծությունների կառուցվածքը, չափը։ Բայց մի բան արդեն պարզ էր, որ Նևկրասովի պոետական դպրոցը որոշակիորեն ներթափանցում էր հայ գրականության մեջ, առեղծելով իր հետևողներին, գրական մրևնույն ուղղության կրքոտ պաշտպաններին։

Առաջին թարգմանությունները Նևկրասովից կատարվել են դեռևս հեղինակի կենդանության օրոք։ Մեզ հայտնի առաջին թարգմանությունը պատկանում է Մորևն Ստեփանեի գրչին։ Ժամանակակիցները վկայում են, որ դեռևս Մոսկվայի համալսարանում ուսանելու տարիներին Ստեփանեն թարգմանել է Պուշկինին, Օգարևի, Մխայլովի, Պլեշչեևի և ուրիշ այլ բանաստեղծների առեղծագործությունները։ Դրանց մի մասը տպագրվել է «Հայկական աշխարհ» ամսագրում։ Նույն «Հայկական աշխարհի» 1870 թ. 3-րդ համարում տպագրվում է Նևկրասովի «Հարսանիքը» բանաստեղծությունը Կոմս դը Լառուբի թարգմանությամբ։ Ինչպես հայտնի է, Կոմս դը Լառուբը դա նույն Ստեփանեն էր, որ իր խմբագրած «Հայկական աշխարհում» տպագրում էր զանազան թարգմանություններ «Իշխան Բագրատունի», «Կոմս դը Լառուբ», «Ստեփանեե և այլ ստորագրություններով։

«Հարսանիքը» բանաստեղծության թարգմա-

նուիրյունը ընդդիմին մոռ է, պահպանված է նաև բանաստեղծության չափը: Բայց թարգմանության լեզուն առուն չէ, պատկերները դժգույն են, ոչ արտահայտիչ: Նեկրասովի լեզվի ճկունությունն ու գունեղությունը չի զգացվում հայերենի մեջ: Ընդհանրապես, «Հարսանիք» բանաստեղծության թարգմանությունը մի ուշադրության վատ էր 70-ական թվականներին: Այդ բանաստեղծության մեջ Նեկրասովը պատկերել է ռուս կնոջ ստրկական վիճակը, որ խորհրդանշանն էր հայ կնոջ վիճակին և պատահական չէ, որ թարգմանիչն ընտրել է հենց այդ բանաստեղծությունը: Թարգմանիչը լավ ծանոթ էր ռուսական կյանքին և, պիտի ասել, որ ընդհանուր առմամբ նա հարազատել է Նեկրասովի այդ բանաստեղծության բովանդակությունը հասցնել հայ ընթերցողին: Ահա այդ թարգմանությունից մի հատված.

Քեզ շատ դառն և ստամոքիկ նախատինքն են ապատում,
Եվ դժվար շատ օրեր և մենակ գիշերներ:
Եվ հիվանդ քո մանուկի կսկիծ օրորել,
Զար հողի ամուսինդ տուն գալուն ըսպասել,
Լաց լինել, աշխատել, այլ միշտ մոռանել,
Թե կյանքը նորանոր արդյոք ինչ է տվել,
Կամ ինչ է պարգևել, կամ պիտի ինչ աս քեզ.
Քեզ առնծված, լավ կլինի ապագան չնայես...[1]


---

[1] «Հայկական աշխարհ», 1870 թ., № 3։

Եթե հաշվի առնենք բանաստեղծական լեզվի պարզացման այն առաքելանը, որ դուբյան ուներ 60—70-ական թվականներին, ապա ինքնին հասկանալի կլինի, թե ինչու Նեկրասովի առաջին թարգմանչին մեծ պահանջներ չի կարելի ներկայացնել։

Նեկրասովի մահը, որը տեղի ունեցավ 1878 թ. հունվարի 8-ին (նոր տոմարով), խոր կսկիծ պատճառեց ոչ միայն ռուս ժողովրդին, այլև Ռուսաստանի ճնշված ու իրավազուրկ մյուս ժողովուրդներին, որոնց քաղաքական պատմության ջերմ պաշտպանն էր մեծ բանաստեղծը։ Նեկրասովի մահվան կապակցությամբ հայ մամուլի էջերում տպագրվեցին մի շարք հոդվածներ՝ նվիրված բանաստեղծի կյանքին ու առնչագրծությանը։ Այդ հոդվածներում խնդիր դրվեց թարգմանելու Նեկրասովի բանաստեղծությունները, ծանոթացնելու հայ ընթերցողին Նեկրասովի պոեզիայի լավագույն նմուշներին։ «Փափաքելի էր,—կարդում ենք այդ հոդվածներից մեկում,—որ տպագրին ճարտարապետ դրիչ մը, թե ոչ բոլոր՝ գոնե քան մասին ընտրանավ թարգմանելով՝ մեր հայերեն վեպեր ու ճոխ լեզվով հարստացներ հայկական մատենագրությունը»[1]։


[1] «Բազմավեպ», 1878 թ., հատոր I,2։



Ն. Ա. Նեկրասովից կատարված հայկական առաջին թարգմանությունը (<հայկական աշխարհ>, 1870)։

Հոդվածագիրը Ֆ. Ռուշնեվյանին ինքը թարգմանում ու տպագրում է Նեկրասովի «Վերջին երգերը»-ի շարքից երկու բանաստեղծություն՝ «1876—1877 թվականների երգերի նախերգանքը» և «Ա.ա սերմանողը» բանաստեղծությունները: Ռուշնեվյանը Տարաս Շևչենկոյի առաջին թարգմանիչն է: Նրա գրչին են պատկանում նաև Կոլցովից, Պուշկինից, Լերմոնտովից, Մխայլովից կատարած մի շարք թարգմանություններ: Բավական լավ ծանոթ լինելով ոտա գրականությանն ու լեզվին, ճիշտ ըմբռնելով Նեկրասովի պոեզիայի գրական ու հասարակական նշանակությունը, թարգմանիչը հաջողությամբ թարգմանել է Նեկրասովի վերոհիշյալ բանաստեղծությունները, բայց այդ թարգմանություններն անմատչելի էին ընթերցողների լայն շրջանների համար, որովհետև կատարված էին դրաբար լեզվով:

80-ական թվականներին հայ բանաստեղծների նոր սերունդը Պուշկինին, Լերմոնտովի բանաստեղծությունների թարգմանության հետ միասին ձեռնամուխ է լինում նաև Նեկրասովի բանաստեղծությունների թարգմանության: Այդ թարգմանություններն աչքի էին ընկնում գեղարվեստական բարձր արժանիքներով: Տարանդամոր բանաստեղծները ջանք չէին խնայում ոտա մեծ պոետի հանճարեղ երկերը գարձնելու



Ն. Ա. Նեկրասովի «Նոր տարի» բանաստեղծության
Հովհ. Հովհաննիսյանի թարգմանության ձեռագիրը՝
որն արդելել է ցարական գրաքննությունը

հայ ժողովրդի անխտիրանուիրյունը։ Երիտասարդ հայ պոետների այդ սերնդի առաջին ներկայացուցիչը Հովհաննես Հովհաննիսյանն էր։ Դեռևս Մոսկվայի Լազարյան ճեմարանում ուսանելիս Հովհաննիսյանը ոչ միայն հանդամանորեն ուսումնասիրում է Նելլրասովի առեղծագործությունները, այլև 1882 թ. թարգմանում նրա լավագույն բանաստեղծություններից մեկը։ Այդ թարգմանությունը Հովհաննիսյանը ցանկանում է ներառել իր բանաստեղծությունների առաջին ժողովածուի մեջ, որը լույս տեսավ 1887 թվականին, Մոսկվայում, բայց ցարական գիտությանն Նելլրասովի այդ բանաստեղծությունը, Հովհաննիսյանի հայրենասիրական մի շարք այլ բանաստեղծությունների հետ միասին, արգելում է տպագրել։

Հայրցացած գիտության դաժան ճնշումից, Հովհաննիսյանը 1887 թ. արգելված այդ բանաստեղծությունները, դրանց թվում նաև Նելլրասովից կատարած թարգմանությունը, ուղարկում է Մարսելում հրատարակվող հայկական «Արմենիա» ԿԵՐԹԻՆ, որը 1887 թ. սեպտեմբերի ու հոկտեմբերի համարներում սերով տպագրում է այդ բանաստեղծությունները, կցելով հետևյալ բնորոշ ծանոթությունը. «Այս օրերս անցան մեր ձեռք պր. Հովհաննիսյանի անտիպ բանաստեղծությունները ևս որոշեմ մի քանիսն

իրրև ճաշակ ավելորդ չենք համարիր հրատարակել «Արմենիայից» մեջ հետևեալ, ցույց տալու համար, թե որչափ ավելի լուանդոտ և գեղեցիկ կլինին բանաստեղծի մտքի և սրտի արտահայտությունները, երբ կարենան ազատ տարածվել դուրս գալ՝ չենթարկվելով գրաքննության ճնշումներին»[1].

Նեկրասովից կատարած Հովհաննիսյանի այդ թարգմանությունը սահուն է, պոետական և հարուստ բնագրին: Ահա Նեկրասովի բանաստեղծությունը և Հովհաննիսյանի թարգմանությունը.

Что ни год—уменьшаются силы,
Ум ленивее, кровь холодней...
Мать-отчизна! дойду до могилы,
Не дождавшись свободы твоей!

Но желал бы я знать, умирая,
Что стоишь ты на верном пути,
Что твой пахарь, поля засевая,
Видит ведряный день впереди:

Чтобы ветер родного селенья
Звук единый до слуха донес,
Под которым не слышно кипенья
Человеческой крови и слез[2].

---

[1] «Արմենիա», 1887 թ., № 9.

[2] Н. А. Некрасов, Полное собрание сочинений, том II, Москва, 1948 г., стр. 107.

Մաղմուռ է իմ կյանք, հալմուռ ամէն ցաւ.
Տըկար է միտքըս, սառչում է արյունս...
Ես, մայր-հայրենիք, կիջնեմ գերեզման՝
Չըտեսած քո ազատութիւնն:

Բայց ես կուգեմ—գէթ իմ օրհասին
Դու ոտ կոխեիր հատատ ճանապարհ,
Տանջանքից հետս դու քո առաջին
Տեսնեիր բացված քո օրը պայծառ:

Կուգեմ—գէթ այժմ հասցներ քամին
Հայրենի դյուղից մի ձայնիկ միայն,
Որ ինձ չըթողներ նոր բոլ ցավագին
Դառն արտասուքի, ծովացած արյան...[1]

Բնորոշ է, որ Հովհաննիսյանը թարգմանելու համար ընտրել է Նեկրասովի հենց այդ բանաստեղծությունը, որի մեջ բանաստեղծը երազում է տեսնել իր հայրենիքն ազատ ցարական դաժան կարգերից, տեսնել աշխատավոր մարդու ազատության գայթած օրը: Նույն երազանքն է ունեցել Հովհաննիսյանն իր հայրենիքի, ճընշված ու հալածված իր ժողովրդի նկատմամբ: Նեկրասովի հայրենասիրական այս գրանցելի բանաստեղծությունը Հովհաննես Հովհաննիսյանը ոչ միայն սիրել ու թարգմանել է, այլև ըրանով ոգեշնչված գրել է.

---

[1] Հ ո վ հ. Հ ո վ հ ա ն ն ի ս յ ա ն, Բանաստեղծություններ, Վաղարշապատ, 1908 թ., էջ 183:

Եվ քող ես գրված կուրծքը մայրենի,
Քո ազատ կուրծքը, սիրուն հայրենիք,
Բզնաման մինչև ափանջիա հասնի
Քո ազատության անուշ ավետիքն[1]։

* * *


Նևիրատովի պոեզիան հայ հասարակության լայնորեն ծանոթացնելու մեծ պատիվը պատկանում է անվանի բանաստեղծ Ալեքսանդր Շատուրյանին։ Շատուրյանը ռուսական պոեզիայի յուրագույն ու վարպետ թարգմանիչներից մեկն էր։ Թե մինչ Շատուրյանը և թե նրանից հետո հայ անվանի բանաստեղծներից և ոչ մեկն այնքան չի պրպտվել ռուսական կլասիկ պոեզիայի թարգմանությամբ, որքան Շատուրյանը։ Նա ծրագրել էր մոտ 4—5 հատորով հրատարակել իր թարգմանությունները. 1905 — 1906 թթ. նրան հաջողվեց հրատարակել միայն երկու հատոր՝ «Ռուս բանաստեղծներ» ընդհանուր խորագրով։ Այդ հատորներում զետեղված են Պուշկինի, Լերմոնտովի, Նևիրատովի, Կոլցովի, Նիկիտինի, Պլեշչեևի առեղծագործությունների կատարած թարգմանությունները։

Անցյալ դարի 80-ական թվականներից սկսած Ալեքսանդր Շատուրյանը թարգմանել է Նևիրա-

---

[1] Հովհ. Հովհաննիսյան, Բանաստեղծություններ, Վաղարշապատ, 1908 թ., էջ 91։

ասէի պոեմայի լսմպուչն նմուշները: Ընդամէնը ցարական ցինզուրան Նեկրասովից կատարած մի շարք թարգմանութիւններ արգելել էր տպագրելու, իսկ տպագրածներից էլ առանձին տողեր կրճատելով՝ ապականել, խեղաթիւրել էր այդ բանաստեղծութիւնների սոցիալական նշանակութիւնը, բայց, այնուամենայնիվ, Ծառուբեանը կարողացել էր հայ ընթերցողին հասցնել Նեկրասովի պոեմայի առանձին հատկապես նմուշները իր վարպետ թարգմանութեամբ: Այսպէս, նա թարգմանել է Նեկրասովի «Սիրուն հայրենիք», «Երազ», «Ժամանակակից նեղրոզ», «Օ, երգել, երգել», «Դիշեր է», «Երանի անչար այն բանաստեղծին», «Մայրը», «Մուսա», «Անձրևից առաջ», «Անցնում են տարիք», «Էլեգիա», «Ծերուկ», «Հիմանդանոցում», «Անցնում են օրեր», «Սերմնացաններին», «Անանձ գրած», «Ծառայութիւն» և բազմաթիւ այլ բանաստեղծութիւններ: Բնագրին հաւատարիմ, առնուն ու պատկերաւոր են Ծառուբեանի կատարած թարգմանութիւնները Նեկրասովից: Ծառուբեանին արդարև հաջողվել է հայ ընթերցողին հասցնել Նեկրասովի պոեմայի ոգին, նրա սոցիալական խորը բովանդակութիւնը: Ծանոթանանք Ծառուբեանի բազմաթիւ թարգմանութիւններից մէկին մի փոքրիկ նմուշի հետ:



Ն. Ա. Նեկրասովի ձեռագիր բանաստեղծության Ալ. Սաաեդրայնի թարգմանության ինքնագիրը։

ПРОСТИ

Прости! Не помни дней наденья,
Тоски, унынья, озлобленья,—
Не помни бурь, не помни слез,
Не помни ревности угроз!

Но дни, когда любви светило
Над нами ласково всходило
И бодро мы свершали путь,—
Благослови и не забудь![1]

Ն Ե Ր Ի Ր

Ներիր... Մի հիշիր դու օրերն անիմաստ,
Օրերը վշտի և վհատության.
Մի հիշիր ոչ ցավ, ոչ դառն արտասուք,
Ո՛չ խանդոտ սրտի դայլայլի ու հուզմունք։

Բայց, ախ, այն օրերն, երբ ակնալքամբ
Մեզ վազաքշում էր գարնան արևակն,
Երբ մեր ուղին էր պայծառ, լուսավառ,—
Այն օրերն օրհնիր և մի մոռանար։

Նեկրասովի բանաստեղծությունների հայերեն թարգմանությունները 80-ական, 90-ական թվականներին է՛լ ավելի են տրմատավորել հայ

[1] Н. А. Некрасов, Полное собрание сочинений, том I, Москва, 1948 г., стр. 169.

դրականության մեջ ռուս դրականության առողջ ուղղությունները և օգնել հայ երիտասարդ բանաստեղծների նոր ուղղին, ռուս պոետների օրինակով, արտացոլելու իրենց հարազատ ժողովրդի կյանքը, նրա դարը վիճակը, վիշտն ու թախիծը: Առաջավոր դրական քննադատությունն իր ժամանակին նշել է Ծատուրյանի խոշոր ծառայությունը ռուս պոեզիայի լավագույն նմուշները հայ ընթերցողներին ծանոթացնելու գործում, նշել այդ թարգմանությունների բարձր որակը: «Թարգմանության մասին շատ ասելիք չունենք,— գրում է «Գնդարվեստ» ժուռնալը,— Ծատուրյանն այս թարգմանությունների մեջ ևս արտահայտել է իր բանաստեղծական շնորհքը: Դյուրին և երաժշտական հանգեր, սահուն և կոկ լեզու, որ լատ չափու կարողության աշխատում է բնագրի ոգին արտահայտել»[1]:

* * *

Նիկրասովի բանաստեղծությունների թարգմանությամբ հանդես է նիկել հայ ժողովրդի ազգային մեծ բանաստեղծ Հովհաննես Թումանյանը: Ժուկովսկու, Պուշկինի, Լերմոնտովի, Կոլցովի առեղծագործությունների Թումանյանի կատա-

1 «Գնդարվեստ», 1908 թ., № 2, էջ 102:

րած թարգմանությունները թարգմանական պոեզիայի կարևոր օրինակներ են համարվում։ Անդրադառնալով Թումանյանի կատարած այդ թարգմանություններին՝ Վալերի Բրյուսովը գրել է. «Գերազանց է պարմանալի խորաթափանցությունը բնագրի ոգուն, թարգմանական երկի բուն էությունը կռահելու ընդունակությունը»[1]։

Ինչպես իր ինքնուրույն երկերի, այնպես էլ թարգմանությունների համար Թումանյանը ցուցաբերել է բացառիկ խիստ արհեստի։ Բազմիցս մշակելով իր թարգմանությունները, Թումանյանն ամեն կերպ ձգտել է մոտենալ բնագրին, հասնել դրանց կատարելության։ Իր հոդվածներից մեկում Թումանյանը գրում է. «Չէ՞ որ բանաստեղծություն թարգմանությունը, էն էլ ասանձին համ ու հոտ, շունչ ու աճ ունեցող բանաստեղծություն թարգմանությունը շատ է դժվար ու հոգիպղուռ բան։ Բանաստեղծություն նույնիսկ լավ թարգմանությունը համար ասված է, թե նա մի վարդ է, որ ապուհու տակ է դրված։ Այսինքն թե ձևը կանանային թույլ բուրմունքը չես զգալ։ Ինչքան շնորհք է հարկավոր, որ ոչ միայն հարազատ ձևը ցույց

[1] „Поэзия Армении", под редакцией В. Брюсова. Москва, 1916 г., стр. 79.

ատ. այլ և ինքնուրույն բուրմունքը հպարտ-ի՝ ևվ շնորհ-ի հետ [ի՞նչքան ակր...»[1]:

Այդպիսի մեծապույն սիրով է Թումանյանը պիտի դնար առաջին պատերազմ, դնար Պուշկինի, Լերմոնտովի, Նեկրասովի ստեղծագործությունների թարգմանությունը: 1896 թվականին Թումանյանը թարգմանում է Նեկրասովի „Внимая ужасам войны" բանաստեղծությունը:

Նեկրասովի այդ բանաստեղծությունը բացառիկ մեծ ընդունելություն է գտել իրենց անկախության համար պայքարող փոքր ու ճնշված ժողովուրդների գրականության մեջ: Դեռևս անցյալ դարի 80-ական թվականներին բուլղարական հոչակավոր գրող Իվան Վազովն այն թարգմանել է բուլղարերենի, 1884 թվականին Ռ. Պալյանի թարգմանությամբ նա լույս է տեսնում հայերեն, իսկ վրաց գրողները այն թարգմանել էին դեռևս 60-ական թվականներին: Մինչև Հոկտեմբերյան մեծ հեղափոխությունը Նեկրասովի „Внимая ужасам войны" բանաստեղծությունը վեց անգամ թարգմանվել է հայերեն (1884, 1889, 1896, 1903, 1905, 1916): Տարբեր հեղինակների կատարած այդ թարգմանությունները բազմիցս

---

[1] «Թումանյանը — քննադատ», Երևան, 1939 թ., էջ 340:

արտասովիլ են պարսկական պատարքներում, պրակտիկ ժողովածուներում, մասնավոր էջերում:

Նեկրասովի այդ բանաստեղծության նման մեծ հաջողություն պայմանավորված էր հայ ժողովրդի քաղաքական վիճակով: Իր այդ լիրիկական առեղծվածության մեջ Նեկրասովը պատկերել է մար վիշտն ու պայմանքները պատերազմի դաշտում ընկած զավակի հանդեպ: Հայտնի է, որ հայ ժողովուրդն իր գոյությունը պաշտպանելու համար միշտ էլ պայքարի մեջ է եղել, այդ պայքարում կորցրել է հազարավոր հերոս զավակներ, հայ կինը վշտի կոշմարային օրեր է ապրել և տանկանալի է, թե ինչու Նեկրասովի բանաստեղծությունն այդպիսի մեծ արձագանք պետք է գտներ հայ իրականության մեջ:

Հովհաննես Թումանյանը սեւեռում էր Նեկրասովի այդ բանաստեղծության գաղափարական հաջողությունը և, չնայած նրա հայելին մի քանի թարգմանություններին առկայության, ինքը նորից է թարգմանում այն: Պետք է ասել, որ Թումանյանի թարգմանությունը ժամանակին նշել է, որ Թումանյանի թարգմանությունը ընդգրկել հավասար գեղարվեստական արժեք ունի և նա չէր անալվում: Ահա Նեկրասովի այդ բանաստեղծությունը և Թումանյանի թարգմանությունը.

Внимая ужасам войны,
При каждой новой жертве боя
Мне жаль не друга, не жены,
Мне жаль не самого героя...
Увы! утешится жена,
И друга лучший друг забудет;
Но где-то есть душа одна—
Она до гроба помнить будет!
Средь лицемерных наших дел
И всякой пошлости и прозы
Один я в мире подсмотрел
Святые, искренние слезы—
То слезы бедных матерей!
Им не забыть своих детей,
Погибших на кровавой ниве,
Как не поднять плакучей иве
Своих поникнувших ветвей...[1]

Լսելով կռվի արհավիրքներին,
Ամեն մի ընկած նոր զոհի մասին,
Ես չեմ ափսոսում կնոջն, ընկերին,
Եվ ոչ էլ նույն իսկ իրան՝ հերոսին...
Կրծխիմարվի, ահ, կինը մի օր,
Ընկերն ընկերին կանի մոռանաք.
Բայց մի հոգի կա մի անգ ազավոր—
Նա հիշելու է մինչև գերեզման...
Այս մեր կեցվածքը, ասար աշխարհքում,
Այսքան գարշելի գործերի շարքում
Ես անկեղծ և սուրբ մի բան տեսա միայն—

[1] Н. А. Некрасов, Полное собрание сочинений, том I, Москва, 1948 г., стр. 148.

Թշվառ մայրերի արտասուքն է այդ
Նրանք չեն մոռանալ իրենց զավակին,
Որ խորտակվել է արյունոտ արտում,
Որպես ազավոր ուռենին կրկին
Չի բարձրացնելու ճյուղերը արտում[1]:

Ինչպես անհնազան էին, հայ բանաստեղծները Հովհաննիսյանը, Օտյանը, Թումանյանն իրենց ակբը դնում էին ազգովրդի մեծ պռնա Նեկրասովը դրսևորել են նաև այդ վայրկյան թարգմանություններով, որ կատարել են նրանք վերջինիս առնդատարծություններից: Թարգմանական այդ կյանքի օրինակները, որ ավել են հայ պոեզիայի նշանավոր էջերը, ամուր հիմք պիտի նեկրասովի առնդատարծությունների թարգմանություն դժվարին, բայց կարևոր ու պատվավոր գործին:

1889 թ. սկսում է լույս տեսնել հայկական լավագույն ժառանգներից մեկը՝ «Մուրճը»: Ազգային ինքնուրույն գրականության զուգընթաց «Մուրճը» մեծ տարի է տալիս նաև թարգմանական գրականության: Թարգմանվում են առասպելը, էպոսները, Ռուսաստանի ժողովուրդների գրականության լավագույն նմուշները: Ռուս գրականությունից «Մուրճը» տպագրում է Պուշկինին, Լերմոնտովին, Գոգոլին, Տուր-

[1] Հով հ. Թումանյան, երկերի ժողովածու, հատոր I, Երևան, 1950 թ., էջ 359:

դեններ, Տղատոյի, Սալտիկով-Շչեդրինի, Կորոլենկոյի, Չեխովի առևտրագործությունների թարգմանությունները: Մարքիս Դը Կուստինի պատմվածքների հայերեն թարգմանությունը ևս առաջին անգամ այդ ժամանակում է տպագրվել: «Մուրճը» մեծ ժամանակ էր հայ իրականության մեջ, որ 90-ական թվականներին իր էջերում լայն տեղ է տալիս նեկրասովից կատարված թարգմանություններին:

«Մուրճի» էջերում համախոհի հոգվածներ են տպագրվում թարգմանական գրվեստի առանձին հարցերի մասին: 90-ական թվականներին յուրջ բռնավճե է սկսում թարգմանական գրականության նպատակների ու սկզբունքների շուրջը: Այդ բանավեճի ժամանակ ընդարձակ հոգվածով հանդես է գալիս «Մուրճի» խմբագիր Ալեքսէր Արտախանյանը: Սկզբունքային բանավեճի մեջ մանելով էսթետ ու պահպանողական գրականագետ Աբշոկ Զոպանյանի հետ, Արտախանյանը գրում է. «Մինչեռ թարգմանական գրականության մեջ դուք ամ գործողություն մեջտեղ եք առնում, մենք՝ դեռ այդ թարգմանական գրականությունը նախ և առաջ տղի կրթության ժամանակ մեջտեղ ենք բերում: Մեր հայացքների մեջ այդ մասին անտարբերություն կա. ձեր տեսությունը ասում է դեպի թարգմանություններն անխտիր. ձեր տեսությունը

ձևված է պրակտիկներին ոճի մեջ կրթելու համար. մերը՝ քարոզմանության ունեցողները ժողովրդի պահանջներին ծառայեցնելու համար։ Ձեզ համար կարելի է ասել, թե ժողովուրդ չկա, այլ կա «պրակտիկներ» պատահարը. դուք ամեն ոտքով էլ պրպտած, քան ժողովրդի կարիքներն իմանաք[1]։

Քարոզմանական պրակտիկության ստորոգումն այսպես ասաղջ, վեհափրատական սկզբունքներով Արտախանյանը ոչ միայն պաշտպանել է վեհափրատական, նաև քահանայական ամեն անասելի չտեսությունները» վեմ, այլև այդ ասաղջ սկզբունքները բավական հետևողականությամբ կիրառել է իր խմբագրած ամսագրի էջերում։ Անպրակտիկական քարոզմանական պրակտիկության ստորոգումն ամսագրի հետագնացած նպատակներին, Արտախանյանը պարզ ու որոշակի գրում է. «Ամսագիրը, ուրեմն, որպես առհասարակ, նաև քարոզմանական պրակտիկության նկատմամբ ոչ այնքան իրը շահեկան պիտի ծառայի, որքան պրպիչ և ուղեցույց օրգան. նրա հրատարակած քարոզմանական վկայերը, պրոյեկտները, գրամատները պետք է ունենան պրպիչ կողմեր, նայած թերի պիտանություններին նրա ժամանակ ներկան և պրակտիկության նկատմամբ։ Ամսագիրը ոչ այնքան պրակտիկությունը հարստացնելու է գալիս, որքան մտքերը պատրաստելու

[1] «Մուրճ», 1899 թ., № 4–5։

ու դրականությունն ուղիղ ճանապարհի վրա դնելու, այն հարատացնելու ուղին հարթելու համար»[1]:

Արտասվելի դիտակցված ու բազմակողմանի-ներին իմաստավորված այն քաղաքականությունը, որ վարել է Աբասխանյանը Թարգմանական դրականության ասպարեզում, ունեցել է իր արդյունավետ հետևանքները: Տարիների ընթացքում «Մուրճի» էջերում տպագրվում են ոչ ռևալիստական, հումանիստական, հայրենասիրական, սոցյալ-դեմոկրատական դրականության, ինչպես և համաշխարհային դրականության լավագույն երկերը:

Աբասխանյանը մենակ չէր, այդ խնդրում նրան արձագանքում են ժամանակի հայ հրապարակախոսները, դրական քննադատները: Այսպես օրինակ, Ալեքսանդր Ծատուրյանի «Բանաստեղծությունների» երկրորդ հատորի մասին դրած հոդվածում Հ. Ջաղարբեգյանը գրում է. «Գաղափարը մեր աչքում էական նշանակություն ունի. մեր ասլ, զգացմունքներ շարժել, դրծի հրավիրել, անհավասիկ ինչ բաների վրա ենք ուշք դարձրել մենք ոչ-ստանյալներ: «Սրվեսա սրվեսի համար» սկզբունքը մեզ համար մի անհասկանալի, նոր կուռք նույնիսկ ծիծաղելի պահանջ է: Ամեն ինչ, ոչպես և դրակա-

1 «Մուրճ», 1899 թ., № 4—5:

նութիւնը, այդպես և նրա բանաստեղծական ձիւղը կյանքի վրա ազդելու, հասարակական մեծութեան մղելու, բարձրացնելու դարձին պիտի ծառայեն»[1]։

Այդ կատակերգութեամբ անդրադառնալով Ռ. Պատկանեանին, քննադատը գրում է, նա ևս «ինչո՞ւ» մեր նշանաւոր ազգային բանաստեղծը,— Գամառ-Քաթիպան, առաւելապէս քնարերգութեան մեծագոյն ներկայացուցիչներին մոգած՝ նեկրասովից է թարգմանութիւններ ու նմանողութիւններ տալիս»[2]։

Պահելով ստորակետում ընդունելով Նեկրասովի ազդեցութիւնը, Աբսոլեանցը ոչ միայն չէր ուզում նրանից կատարած թարգմանութիւններին, այլև նրա ազդեցութեամբ, նրա նմանութեամբ գրուած առանձնադրութիւններին։ 900-ական թուականների սկզբներին «Մուրճը» ստորագրում է բանաստեղծ-թարգմանիչ Կ. Կրասիլնիկեանի Նեկրասովից կատարած մի շարք թարգմանութիւնները, այդ թուում նաև նշանաւոր «Մորդոդածութիւններ հանդիսաւոր ազգ» բանաստեղծութիւնը։ 1905 թ. ռեակցիայի նախօրեակին առանձնապես ուժգին է հնչում Նեկրասովի պահանջկան ձայնը հայ

---

[1] «Լուսաւոր», 1899 թ., Թիւր երկրորդ։

[2] Նոյն տեղում։

իրականության մեջ։ Ալ. Ծատուրյանին, Կ. Կրասիլնիկյանի թարգմանություններին կողքին ներկայում են Նեկրասովից կատարված ուրիշ թարգմանություններ ևս։

Ուշագրավ է այն հանգամանքը, որ հայ իրականության մեջ գոյություն ունեցող այլանդակ բարքերի դեմ պայքարելու խնդության միջոցներից մեկը հայ գրողները համարում են Նեկրասովի սատիրական ոճի օգտագործումը։ Այսպես, Կ. Կրասիլնիկյանը տպագրում է «Նեկրասովի նմանությամբ» գրված «Օլորոցի երգը» բանաստեղծությունը։ Այդ բանաստեղծությունը ցայտուն օրինակ կարող է ծառայել Նեկրասովի սատիրական ոճի հարուստ կենսունակության մասին։ Ահա այդ բանաստեղծությունը.

ՕՐՈՐՈՑԻ ԵՐԳԸ

(Նմանություն Նեկրասովի)

Քնիր, դու մանուկ, անմեղ տակավին,
Քնիր դու անդորր,
Քամաբը սիրեց նիրհող աշխարհին,
Քեզ օրո՛ր, օրո՛ր։
Ես քեզ չեմ պատմի անուշ հեքիաթներ,
Այլ ճշմարտություն.
Իսկ դու լսեն եղիր, քո անուկ աչքեր
Թեւի տրա, նախշուն։

Քո հարազատ մոր երգը չի հնչում
Օրորոցիդ քով,
Թոյլին է, ավաղ, ինչ նանիկ կանչում
Իր սառը հողով։
Ծարիր է ինչ համար մայրենի երգը,
Տխուր, ազամար.
Քնաւն եղիր, հոգիս, քաղ է այդ վիրգը,
Քնիր օրո՛ր, օրո՛ր

Հեռու երկիրներ քո հայրը պտիկեց
Գյուղից հայրենի,
Եվ նանով մինչտցով շատ լուռ վատատկեց՝
Թարմով անմահի։
Իր պիրճ պատառում վարքիտ, երջանիկ
Ապրում է այսօր.
Նա էլ չի հիշում ապր ու հայրենիք,
Քնիր օրո՛ր, օրո՛ր։

Քու կրծածանաս անհոգ և անմիշտ
Կյանքի մեջ վաղուն,
Եվ ջրանաուտս կրիտ ալյան ընդմիշտ
Կրնաս սարսուռ։
Քու չես քաշիտի մայրենի ինդիտ
Քնիր անհարիտ,—
Քնիր, խնդիր մոռանաս, ջնիր անխռով,
Քնիր օրո՛ր, օրո՛ր։

Հոգդ մահից ևս կրնաս մոռանալ
Քու օրհնական,
Խակուդ կսկիծս վարել մի պնդիս կյանք՝
Իմ անատնական...

Ու կանհետանա քո հոր վաստակած
Ոսկին քունավոր...
Քնիր, հայ մանուկ, ընդմիշտ խորխոցած,
Քնիր օրո՛ր, օրո՛ր։

Աշխարհից աշխարհ միշտ կրքափառնս
Ունայն ու անմխիթ,
Եվ պարծենալով դու քնիր կանխանոս
Հայ կոմսոպոլիտ...
Ա՛յդպես դու կանցնես անօգուտ, դատարկ
Քո կյանքը բոլոր,
Եվ մահ կգտնես օտար երկնի ատակ,
Քնիր օրո՛ր, օրո՛ր[1]։

1906 թ. լույս է տեսնում «Ուսս բանաստեղծների» ժողովածուի երկրորդ գրքույկը Ալեքսանդր Ծատուրյանի թարգմանությամբ։ Այդ ժողովածուի մեջ իշխող էին հանդիսանում Նեկրասովի ստեղծագործություններից կատարված թարգմանությունները։ Ժողովածուն լայն ընդունելություն է գտնում։ Ժողովածուի մասին լույս տեսած հոդվածները մի անգամ ևս ընդգծում են Նեկրասովի պոեզիայի բացառիկ նշանակությունը 19-րդ դարի ռուս և մյուս ժողովուրդների գրականության զարգացման գործում։ Առաջավոր գրական քննադատությունը օգտագործում է Նեկրասովի ու Գլեբ Ուսպենսկի ստեղծագործությունների Ծատուրյանի կատարած այդ

[1] «Մուրճ», 1901 թ., № 6։

թարգմանությունները ցարիզմի, «ազակցության ու բանության» դեմ մղվող պայքարում: Ի հակադրություն ազակցության տարրերին իշխող գեղագեղատական, անկումային գրականության, քննադատությունը՝ ոգևորվելով Ծատրյանի թարգմանությունները՝ միաժամանակ կոչ էր անում թարգմանել ռուս բանաստեղծներին, հատկապես Նեկրասովին և Պլեշչեևի ըմբռաս, ազատության երգերը: «Դժվար է իմարկե,—գրում է քննադատ Հ. Սոլովյանը,— փոքրիկ ստրներից մի ամբողջություն հանել: Մանավանդ Նեկրասովի և Պլեշչեևի մասին մի դատափետ կազմել մի քանի ստրներով անկարելի է: Այդ երկու հսկա բողոքող բանաստեղծներին պատկերացնելու համար պետք էր բերել քիչ ավելի: Օրինակ, Նեկրասովից չեն թարգմանված „Размышления у парадного подъезда“, „Песня Еремушке“, „Крестьянские дети“, մանավանդ „Кому на Руси жить хорошо„ պոեման: Այս գրվածքներն են, որ գլխավորապես բնորոշում են Նեկրասովի բողոքը գեղեցության, բանության և ազատության դեմ: Այս քաղաքացի-բանաստեղծի հյուսվածքներից ցանկալի էր ավելի շատ ստրներ թարգմանել, մանավանդ եթե աչքի առաջ ունենանք այն հանգամանքը, որ Նեկրասովի ռուս լեզվով հրատարակությունն էլ անմատչելի են շատերին...»[1]:

[1] «Գեղարվեստ», 1908 թ., № 2, էջ 101:

Ռեակցիայի տարիներին պահանջ դնել թարգմանելու Նեկրասովի վերոհիշյալ բանաստեղծությունները, հատկապես «Ո՞վ է ուրախությամբ լավ ապրում» պոեմը, նշանակում էր պայքարել գրականության ժողովրդական առողջ տրադիցիաների համար, պայքարել հայ գրականության մեջ ամուր կերպով պահպանելու Նեկրասովյան տրադիցիաները:

Նեկրասովի բանաստեղծությունների թարգմանությամբ հանդես է եկել նաև Ա. Թաթևիկ Ինկոյանը՝ մանկական գրականության լավագույն վարպետներից մեկը: Ինկոյանը ևս ուսյանաստեղծներից հաճախ թարգմանություններ է կատարել: Այդ թարգմանությունները լայնորեն օգտագործվել են դպրոցական դասագրքերում: 1914 թ. Ինկոյանը թարգմանում է Նեկրասովի «Չհնձած արտը» և տպագրում այն «Հասկեր» մանկական պատկերազարդ ամսագրում: Այդ թարգմանությունն արժանանում է Թումանյանի հավանությանը: «Չհնձած արտը» թարգմանվել էր հայերենի դեռևս 1889 թվականին[1]: Թարգմանիչ Զ. Բալուկյանը իր ժամանակին աշխատել է ժողովրդական համապատասխան դարձվածքներով տալ Նեկրասովի այդ նշանավոր բանաստեղծության հայերեն համաննչուն թարգմանությունը, թարգմանչին որոշակի հաջողվել է Նեկրասովի

1 «Ազդյուր», 1889 թ., № 12:

որոշ պատկերներ հատցնել հայ ընթերցողին, սխալ չդիտենք, թե ցնդուբանական կամ այլ ինչ նկատառումով դուրս է մնացել այդ թարգմանությունից «Հնձած արտ» վերջին ութ տողը։

Ամարևի Խնկոյանի թարգմանությունից էլ դուրս են մնացել այդ նույն տողերը։ Խնկոյանը փոխել է բանաստեղծության չափը և մանուկներին դյուրըմբռնելի, կարճ ու պահուն տողերով ավել Նեկրասովի այդ բանաստեղծության արանչելի թարգմանությունը, որը տպագրվել է նախասովետական և սովետական դպրոցական դասագրքերում։ Խնկոյանի այդ թարգմանության մասին համարձակ կարելի է ասել, թե «Արծնա Նեկրասովը հայերեն է գրել»։ Ծանոթանանք այդ թարգմանությանը

ՀՀՆՁԱԾ ԱՐՏԸ

Աշուն է խորին,
Համքերը չկան,
Ծառը մերկացավ,
Տերևներն ընկան։

Մերկ դաշտում միայն
Մի արտ կա անքաղ,
Կարծես անցնողից
Ինդրում է մանգաղ։

Հասկերը կարծես
Ասում են իրար.
—Մեզ աշնան քամին
Արագ ցրատհար։

Հերիք է նա մեզ
Տա գետնե-գետին,
Մեր հատիկները
Շատ գան, վոշոտին։

Նույնն է մեզ համար
Վաղը կե այսօր,
Քամու առաջին
Թողում ենք անդոր։

Մուկն է մեզ կտրում
Գիշեր ու ցերեկ,
Ո՞ւր է մեր տերը,
Չեն ովիք, բերեք։

Ո՞ւմ համար վարկց,
Ո՞ւմ համար ցանեց,
Չէ՞ որ մեզ քամին
Ձիր ու ցան արեց։

Պատահան ովեց
Քամին այդ հարցին.
Չեր տերն հիվանդ է,
Գլուխը բարձին[1]։

---

[1] «Հասկեր», 1914 թ., № 9—12։

Հետագայում Աթաբեկ Խնկոյանը նորից պիտում է Նեկրասովի առնձնապարծութիւններին։ Այս անգամ նա թարգմանում է «Գյուղացի երեխաները» շարքից այն նշանաւոր հատուածը որտեղ պատմւում է մի փոքրիկ գյուղացի երեխայի մասին, որը օգնում էր իր հորը անտառից փայտ կրելու։ Այդ հատուածը միշտ էլ օգտագործվել է, որպես ուրույն բանաստեղծութիւն դրական զանազան ժողովածուներում, դասագրքերում, պրոցեսական ընթերցարաններում։ Խնկոյանը հաջողութեամբ թարգմանել է այդ հատուածը, վերնագրելով այն «Փոքրիկ գյուղացի»։ Պահպանելով Նեկրասովի ժողովրդական ձևերը, Խնկոյանը ձգտել է պատկերել փոքրիկ գյուղացուն հայ գյուղի բնական պայմաններում, վերջինիս անունն անգամ փոխել՝ վլասից դարձրել է Պողոս։ Եվ պետք է ասել, որ ընթերցողը մի պահ մոռանում է, որ դա թարգմանութիւն է, որ գնդքը տեղի է ունենում ռուսական գյուղում։ Դա, անկասկած, թարգմանութեան հաջողութեան մասին է վկայում։ Գոգոլն իր մի նամակում պահանջում է հենց այդպիսի թարգմանութեան. «Բնագրին մոտ մնալու համար, հարկավոր է հեռանալ բնագրի բառերից»[1] — ասում է նա։

---

[1] Н. В. Гоголь. О литературе. Москва. 1952 г., стр. 54.

Աբարևի Աննկյանի թարգմանությունները, Հովհաննիսյանի, Ծառուկյանի, Թումանյանի կատարած թարգմանությունների հետ միասին, մեր թարգմանական գրականության լուրջ նվաճումներն են:

Սովետական կարգերի հաստատումը հայաստանում լայն ու աննախընթաց հնարավորություններ ստեղծեց հայ իրականության մեջ ռուս կլասիկ գրականության թարգմանության ու տարածման համար: Սովետական ժողովուրդների կուլտուրական ընդհանուր համագործակցության ասպարեզում հսկայական նշանակություն ունեն ռուս կլասիկ գրականությունից կատարված թարգմանությունները: Սովետական շրջանում ռուս կլասիկների ստեղծագործությունների թարգմանությունը ազգային լեզուներով դասնում է ժողովրդական ու պետական պատասխանատու գործ:

Սովետական շրջանի ամենամեծ հայ բանաստեղծը՝ Եղիշե Չարենցը, մեծագույն սիրով ու երախտագիտությամբ է խոսել Նեկրասովի ստեղծագործությունների մասին: Նեկրասովի պոետական տողերը ոչ միայն էպիգրաֆ են դառացել Չարենցի առանձին բանաստեղծություններին, այլև իր ստեղծագործությունների ամբողջ ժողովածուն («Էպիքական լուսարացը») Չարենցը բաց է անում Նեկրասովի ուղեցույց քառյակով.

И Музе возвращу я голос,
И вновь блаженные часы
Ты обретешь, сбирая колос
С своей несжатой полосы.

Զարևնցը սովետական պոետներից առաջինն էր, որ թարգմանեց Նեկրասովի բանաստեղծությունները։ Նրա գրչին է պատկանում Նեկրասովի «Երկաթուղին» բանաստեղծության հայկական թարգմանությունը։ «Գեղարվեստական երկի նույնպիսի թարգմանություն,— գրում է Զարևնցը,—հավասար է ինքնուրույն ստեղծագործության։ Հանդիսա խղճով կարելի է ասել, որ Զարևնցի թարգմանություններն իսկապես ինքնուրույն ստեղծագործություններին հավասարարժեք գործեր են։ Զարևնցը թարգմանել է «Երկաթուղին» բանաստեղծության միայն երկրորդ մասը։ Հաջողությամբ նա կարողացել է պահպանել բանաստեղծության չափը, ժողովրդական խոսակցական լեզվի առանձնահատուկ դարձվածքները, մելոդիկ հնչեղությունը։ Պոետական մեծ վարպետությամբ կատարված այդ թարգմանությունը լիովին տալիս է բնագրի հմայքը, պաթոսը, իսկական նպատակասլացությունը։ Ահա մի հատված այդ թարգմանությունից.

Դու նայիր՝ այդ մեջքը, որ հիմա կռացած է,
Չի շտկել նա դեռ իր օրում.
Լուռ կանգնած՝ աշխատում է, ժանգոտած բահով իր
Նա հողն է փորում ու փորում։

Երանից այդ սերը դեպի աշխատանքը
Մեզ էլ է հարկավոր սովորել.
Դե, օրհնիր դու, վանյա, այդ ազնիվ աշխատանքը,
Սովորիր մուժիկին սիրել։

Եվ մի վհատիր մուժիկի համար դու.
Ինչքան չարչարանք է արդեն նա կրել,—
Կրել է նաև այս երկաթ ճանապարհը,
Եվ ինչքան է, ինչքան է կրելու նա դեռ։

Կկրի նա ամրողջը,— և կրծքով իր համար նա
Կհարթի ճանապարհ լուսավոր,—
Բայց ավելա՛ն որ, վանյա, դեղնցիկ կյանքին այդ
Ձենք հասնի ոչ դու և ոչ ես[1]։

Ձարևնցը թարգմանել է նաև Նեկրասովի առ-ցխալական խորհրդատու, սուբ ու ազդու քաղաքական որոշ կտորներ։ Նա ծրագրել էր թարգմանել ռուս ժողովրդական մեծ պոետի մի շարք գործերը, բայց, ցավոք սրտի, այդ ծրագիրը մնացին անկատար։

Բանասեր Հայրապետ Հայրապետյանը երևանների համար թարգմանել է Նեկրասովի «Գեներալ Տատախինը» ու «Մորոյ պապը և նա-

1 Ե. Ձարենց, երկեր, Երևան, 1932 թ., էջ 238։

պատմականները։ Հայրապետյանի կատարած այս երկու թարգմանությունները էլ հաջող են և մի շարք անգամ վերահրատարակվել են։ Փորձառու թարգմանիչը չանք չի խնայել իր թարգմանությունները հղկելու, ամուն ու երևմաներին դյուրըմբռնելի դարձնելու համար։

Սովետական շրջանում Նեկրասովի ստեղծագործությունների հետևողական պրոպագանդայով հանդես է եկել բանաստեղծ Գևորգ Աբովը։ Նա թարգմանել է Նեկրասովի մի շարք բանաստեղծություններ և ապա «Ո՞վ է ուրախ յուր ապրուստ» պոեմը։ Այդ պոեմի թարգմանությունը նշանակալից երևույթ էր հայ գրականության մեջ։ Հայ ընթերցողն իր մայրենի լեզվով ծանոթացավ ռուս ժողովրդի հանճարեղ պոեմի ամենախոշոր ստեղծագործության հետ։ Իր ամբողջության մեջ վերցրած այդ թարգմանությունն ունի նաև դրական թերություններ, նա չէր էլ կարող այդ թերությունները չունենալ։ Այդպիսի մի գործի թարգմանությունը երկար տարիների քրտնաջան, ոգեշնչված պատասխանատու աշխատանք է պահանջում։ Նեկրասովի տարբեր բանաստեղծությունները թարգմանվել են 5—7 անգամ, դրանք թարգմանել են մեր անվանի գրողները, բայց առանձին դեպքերում այդ թարգմանություններից և ոչ մեկը չի բավարարում մեզ, ուր մնաց թե այնպիսի մի

խաղար գործ, ինչպիսին է «Ո՞վ է Թուխայում լավ ապրում» հենց առաջին թարգմանությամբ լիովին բավարարվեր մեր ընթերցողի խառնապահանջությանը։ Նեկրասովի մի շարք բանաստեղծություններին, ինչպես և «Ո՞վ է Թուխայում լավ ապրում» պոեմի տարբեր գլուխների հաջող թարգմանությունը ցույց է տալիս, որ Ա.Լոռիը հատկանում է Նեկրասովի պոեզիայի ոգին, նրա պոետիկայի առանձնահատկությունները և, ավելի խառնապահանջ լինելու դեպքում, նա կարող է բավական լավ թարգմանություններ տալ Նեկրասովի առեղծագործություններից։

Նեկրասովի բանաստեղծությունների թարգմանությամբ հանդես է եկել բանաստեղծուհի Վարսենիկ Ադամյանը։ Այդ թարգմանությունների մեջ իր պոետական հնչեղությամբ աչքի է ընկնում հատկապես «Զինվորի մայր Արինան» բանաստեղծությունը։ Բանաստեղծուհին կարողացել է ոտա կնոջ զգացումունքները, նրա հոգեվիճակի պատկերը հաջողությամբ հասցնել հայ ընթերցողին։

Վերջին տարիներս Նեկրասովի լիրիկական բանաստեղծություններից երկու փոքրիկ կտոր թարգմանել է Ա.Ավետիք Իսահակյանը։ Ինչպես հայտնի է, Իսահակյանն առհասարակ թարգմանություններ քիչ է կատարել, բայց այն մի քանի բանաստեղծությունները, որ նա թարգմանել է ոուսերենից, արժանի են ուշադրու-


ուշագրությանս: Նեկրասովի Բառնակյանի մասին պատմածներից մեկն է: Նրա ժողովրդական մոտիվները համահնչուն են հայ մեծ բանաստեղծի լիրիկական մոտիվներին: Բառնակյանի այդ խորհրդանշությունները գեղեցիկ են, բայց մենք սրտով մեջ ենք բերում պրոնք.

Երեկ ժամը վեցին մենակ,
Անցնում էի ես Սեննայով,
Այնտեղ մատաղ մի պնդկուհու
Սենժում էին թաղազանով:

Ձայն չէր գնում խեղճի կրծքից,
Լոկ մարմինն էր շաչում ապատ...
Ես ասացի իմ մուսային.—
«Տես, սա քույրն է քո հարազատ»:

Կան այս բանաստեղծության մի քանի այլ խորհրդանշություններ ևս, բայց Բառնակյանի խորհրդանշությունը, թերի բնագրին հարազատ լինելուց, խորտակում գեղատեսիլն է, մեղսիկ ու հուզիչ: Ուշագրավ է նաև Բառնակյանի երկխոսող խորհրդանշությունը.

Մայրաքաղաքում ճառեր շռնդալից,
Բանակով է բուռն, կատաղի.
Իսկ այնտեղ հիմա, Ռուսիայի խորքում,
Խաղաղություն է գարնային այնտեղ.
Միայն հողմն է, որ հանգիստ չի տալիս



Ն. Ա. Նեկրասովի «Մայրաքաղաքում ճառեր շռնդալից...»
բանաստեղծության Ավ. Իսահակյանի թարգմանության
ինքնագիրը

Ձամփու եզերքի առաջիններին.
Եվ կրանում են աչքի նման
Հասկերը անծայր, անվերջ արտերի,
Եվ համրուվում են մայր մեր հողի հետ։

Նեկրասովի այս բանաստեղծությունն առաջին անգամն է թարգմանվում հայերեն, և Բահահկյանի պրչի տակ նա պարձել է բնագրին հավատարիմ պահպանել մի երգ։

Նեկրասովի առեղծագործությունների թարգմանություններ են կատարել ամենահայ մի շարք բանաստեղծներ։ Տարբեր է այդ թարգմանությունների արժեքը։ Բայց ակնհայտ է, որ ամենահայ բանաստեղծները չեն կարող հայ ընթերցողին ներկայացնել Նեկրասովի պոեզիայի լավագույն նմուշները։ Նախասովետական շրջանում կատարված թարգմանությունների փորձը արժանի է լուրջ ուսումնասիրության։ Բանաստեղծներ Հովհաննես Հովհաննիսյանին, Հովհաննես Թումանյանին, Ալեքսանդր Շահազիզյանին, Ավետիք Բահահկյանին, Եղիշե Չարենցին և մեր մյուս անվանի գրողների թարգմանությունները ցույց են տալիս, թե ինչպիսի մեծ նվաճումներ են ձեռք բերել հայ գրողները Նեկրասովի առեղծագործությունների թարգմանության ասպարեզում։ Լուրջ ու քննադատորեն օգտագործելով այդ գրողների փորձը ամենա-

հայ բանաստեղծները պետք է քարոզմանական արվեստի կուլտուրան բարձրացնեն մի նոր, ավելի բարձր աստիճանի, առնչեն նեկրասովի երկերի բնագրերին հարազատ, լիարժեք թարգմանություններ:

Ն. Ա. ՆԵԿՐԱՍՈՎԸ
ԵՎ
ՀԱՅ ԱՐՎԵՍՏԸ



Հայ արվեստի նշանավոր վարպետները միշտ գոյություն ունեցել են ժողովրդի մեծ ու հարուստ կուլտուրան։ Այդ աղբյուրն իր ցայտուն արտահայտությունն է գտել հայ թատրոնի, երաժշտության, կերպարվեստի անվանի մարդկանց ստեղծագործությունների մեջ։

19-րդ դարի հայ արվեստը խորապես կապված էր ռուս առաջավոր կուլտուրայի, դրամատուրգիայի ու արվեստի հետ։ Ալեքսանդր Սպենդիարովը, Եղիշե Թադևոսյանը, Հովհաննես Աբելյանը, Ալեքսանդր Թամանյանը, Արմեն Տիգրանյանը, Մարտիրոս Սարյանը և հայ արվեստի նշանավոր շատ վարպետներ պատասխանվել են ռուս առաջավոր կուլտուրայի լավագույն ուղղություններով, մտերմական հարաբերություններ ու շփման մեջ են եղել ռուս գրողների, նկարիչների, երաժիշտների հետ։ Ստեղծագործական կապն շատ օրինակներ կան երկու ժողովուրդների արվեստի պատմության մեջ։ Պուշկինի, Լերմոնտովի, Գոգոլի, Տուրգենևի, Նեկրասովի, Տոլստոյի,

Զեխովի, Գորկու պայծառ կերպարներն իրենց արտացոլումն են գտել հայ արվեստագետների առեղծագործություններում։

Նեկրասովը ոչա այն գրողների թվին է պատկանում, որոնց կյանքն ու գործունեությունը մեծ ու բազմակողմանի հետաքրքրություն են առաջացրել հայ հասարակական կյանքում, հայ գրողների ու արվեստագետների շրջանում։ Տարբեր ուղիներով ու տարբեր ձևերով են Նեկրասովի առեղծագործությունները տարածվել հայ իրականության մեջ։

Նեկրասովի բանաստեղծությունները մեր իրականության մեջ մասսայականացնելու գործում նշանակալից դեր են կատարել հայ բեմական վարպետները։ Դեռևս անցյալ դարի 60—70-ական թվականներից սկսած ռուսերեն ու հայերեն լեզուներով նրանք արտասանել են մեծ պոետի հանճարեղ բանաստեղծությունները և ունկնդիրների լայն շրջաններում առաջացրել ջերմ հետաքրքրություն ռուսական պոեզիայի, հատկապես Նեկրասովի առեղծագործությունների նկատմամբ։

Բեմից արտասանվել են Նեկրասովի տարբեր ժանրերի բանաստեղծությունները։ Մի առանձին հետաքրքրություն են առաջացրել հանդիսականների մեջ Նեկրասովի սատիրական բանաստեղծությունները, որոնց մեջ հեղինակը

մերկացրել է բուրժուական և լիբերալ բուրժուական շրջանների բարքերն ու սովորությունները, աշխատավոր դասակարգության շահագործման խորամանկ միջոցները։ Ուշադրավ է այդ առնահատից Նեկրասովի „Осторожность“ բանաստեղծությունը, որը, ինչպես հայտնի է, վայրկեն կերպով օգտագործել է վ. Ի. Լենինն իր քաղաքական պայքարում։ Այդ բանաստեղծությունն արտասանվել է հայ բեմից դեռևս անցյալ դարի 60—70-ական թվականներին, նրա կենցաղային մի հատվածը իր ժամանակին արժանացել է հայ մամուլի ուշադրության.

У солидного папаши
Либералка вышла дочь
(Говорят, журналы наши
Всё читала день и ночь),
Жениху с хорошим чином
Отказала, осердясь,
И с каким-то армянином
Обвенчалась, не спросясь.
В свете это сплошь бывает,
Это тиснуть мы могли б,
Но ведь это посягает
На родительский принцип!
За подобную оплошность
Не постигла б нас беда?

Осторожность, осторожность,
Осторожность, господа![1]

Այս բանաստեղծության մասին «Հայկական աշխարհ» ժուռնալը գրել է, որ 1870 թ. մարտի 12-ին, Ներսիսյան դպրոցի դահլիճում հանդերգի ժամանակ վերատան Հովհաննիսյանը կարդաց Նեկրասովի „Осторожность" բանաստեղծությունը և որ վերատանի կողմից առանձնապես ընդգծվեցին բանաստեղծության հետևյալ տողերը. „И с каким-то армянином обвенчалась, не спросясь"[2].

Նեկրասովի բանաստեղծություններն արտասանության համար հանդես է եկել հայ բեմի մեծահոչակ վարպետ Պետրոս Ադամյանը: Անցյալ դարի 80-ական թվականներին Ադամյանը հանդամանորեն ուսումնասիրում է ռուսական դրամատուրգիան, արձակն ու պոեզիան: Շատով նա բեմականացնում է Լերմոնտովի «Դևը» և հրաշակավոր վերատանուհի Ա. Հրաչյայի հետ միասին կատարում այն: Այն մեծ հաջողությունը, որ ունենում է այդ երկի կատարումը, ոգևորում է Ադամյանին է՛լ ավելի խորանալու ռուս մեծ դրողների ստեղծագործությունների ուսումնասի-

---

[1] Н. А. Некрасов, Полное собрание сочинений, том II, стр. 240—241.

[2] «Հայկական աշխարհ», 1870 թ., № 3։

թուքյան մեջ։ Որոշ ժամանակից հետո նա հաստատակուքյան առաջ հանդես է գալիս Գոգոլի «Ինչպարի օրագիրը» դրվածքի արտասանուքյամբ, որը հատուկ նրա համար քարգմանել էր Շերվանզտյանը։ Ադամյանի ասմունքի վարպետուքյամբ հիանում են հատորակական լայն շրջանները, հայ և ռուս բևեռ նշանավոր գործիչները։

Ռուսաստանում կատարած գաստրոլների ժամանակ Ադամյանը շատ ավելի մոտիկից ծանոքանում է ռուսական կուլտուրային, նրա արվեստին ու գրականուքյանը։ Նա ուսումնասիրում է ժամանակի նշանավոր գրողների ստեղծագործուքյունները, վիճում Տուրգենևի հետ Համլետի մեկնաբանուքյան հարցում, քարգմանում ու արտասանում է ռուս բանաստեղծների լավագույն ստեղծագործուքյունները։ Այդ ժամանակ էլ Ադամյանը ծանոքանում է Նեկրասովի ստեղծագործուքյուններին, որոնք պոեզիայի մի նոր աշխարհ են բացում նրա առաջ։

Առանձնապես ուժեղ ու անջնջելի տպավորուքյուն է քողնում Ադամյանի վրա Նեկրասովի «Դորբոլյուբովի հիշատակին» բանաստեղծուքյունը, որը և 1885 թվականին Տագանրոգում քարգմանում է նա ու հայկական շրջաններում կատմակերպված գրական-գեղարվեստական երեկոներին ոգեշնչված արտասանում։ Այդ քարգ-

մանուկյանը չի դևտևղվում ոչ Ազամյանի կենդանության օրոք և ոչ էլ նրա մահվանից հետո լույս տևտած «Բևթվածքնևրից»-ի կամ Թարգմանությունների ժողովածուների մեջ։ Ինչ-ինչ պատճառով նա մնում է ձեռագիր վիճակում և լույս է տևսնում միայն Ազամյանի մահվանից տասը տարի հետո, 1902 թվականին[1]։

Ահա այդ Թարգմանությունը.

Ինսա էիր դու երիտասարդ հասակում,
Երբոր կերպով գիտցար կրքից տալ բնկճում,
Ուսուցիր՝ վասն ազատության փառքերու
Համար տալել, ևս առավել մեռնելու։
Եվ մերժեցիր խղճի մբառը, այդ ատար
Հաճույքները, պահելով անձդ անպղտոր.
Ու ծարաված արտիդ մի անունդ չի տվիր,
Այլ երբև կին, հայրենիքիդ լոկ սիրեցիր.
Քոկմունը, հույսերդ ու ջանքդ նրան նվիրելով։
Վասն հայրենյաց զոհեցիր քո սիրտն ազնիվ.
Կոչելով նրան ի նոր կյանքս, և ի տես
Լուսերին պրախտ, մարդարիտներ պըտակին
Գատրատեցիր քո անաչառ հարցնևկին։
Այլ շատ կանուխ հնչեց վերջին քո րոպեն,
Գատպամախոս դրիչըդ ինկավ քո ձեռքեն
Ի՞նչ լուսավոր խելք էր, ավաղ որ չիջավ,
Եվ ոն, ինչ սիրտ բարախելուց զադրեցավ.
Անցան տարիք, և մարեցան լոկ կրքեր,
Եվ սլացար դու բարձրանալով յերկինս վեր։
Լաց, հայաստան, այլև այնպես հպարտացիր։
Քանի որ կաս, երկնքի տակ լայնածիր,

[1] «Տարազ», 1902 թ., № 37։



«Տարափ» այն էջը, ուր տպագրված է
Գ. Ադամյանի թարգմանությունը

Թեև կյանք չես տված այսպիսի մեկ զավակի,
Թեև այնպիսին չես կրած ի ծոց մայրենի.
Գանձ հազվագյուտ. դեղեցկությանց հոգեկան
Նորա մեջ խառն, միացյալ զեղով ազնվական.
Ո՛վ մայր բնության, եթե երբևիցե դու քաղցրիկ
Զուգաբկենը մեզ հոգիներ այդպիսիք՝
Կնաց արար շուտ կրցամբեր խարուսիկ։

Ընթերցողը նկատում է, որ Ադամյանն իր թարգմանության մեջ հիմնականում հարտպատ է մնացել բնագրին, միայն բանաստեղծության հինգերորդ տունը, ուր ասված է.

Плачь русская земля! но и гордись—
С тех пор, как ты стоишь под небесами...

Ադամյանը թարգմանել է.

Լաց, Հայաստան, այլև այնպես հպարտացիր։
Քանի որ կաս, երկնքի տակ լայնաձիգ...

Բանաստեղծության մեջ „Плачь, русская земля“— թարգմանելով «Լաց, Հայաստան», մեր կարծիքով, Ադամյանը Թորոյլյուռովի մտքը այսպիսով դիտել է որպես նաև հայ ժողովրդի մեծ կորուստ։ Նա համոզված էր, որ Թուռանյանի հետ միասին Հայաստանն էլ պիտի ողբա և նրա հետ միասին հպարտանա, որ Թորոյլյուռովի պես զավակ է ունեցել։

Ինքնըստինքյան հասկանալի է, որ նեկրասովի «Թորոյլյուռովի հիշատակին» բանաստեղծու-

թյունը սովորական մի բանաստեղծություն չէր և ոչ էլ Ադամյանը՝ սոսկ մի թարգմանիչ։ Անցյալ դարի 80-ական թվականներին, երբ ցարական ռեակցիան ամենուրեք հարձակման էր անցել, երբ փակվում էին հայկական դպրոցները, ավերվում հայ կուլտուրայի ամեն մի օջախ, Ադամյանի թարգմանությունը մի նշանակալից երևույթ էր և որոշակիորեն ուղղված էր ցարական կառավարության դեմ, և պատահական չէ, որ այդ թարգմանությունն իր ժամանակին չտպագրվեց։

Նեկրասովի բանաստեղծություններն ժողովածուից ընտրելով այդ բանաստեղծությունը և թարգմանելով այն հայերեն, Ադամյանը դրանով, անկասկած, դրսևորել է իր դեմոկրատական առաջավոր հայացքները ժամանակի խավար ու ծանր պայմաններում։ Այդ հանգամանքն ընդգծվում է հատկապես նրանով, որ թե՛ մինչ Ադամյանը և թե՛ նրանից հետո, ընդհուպ մինչև սովետական կարգերի հաստատումը, Նեկրասովի հայ թարգմանիչներից և ոչ մեկը չի թարգմանել ոուս մեծ քննադատի հիշատակին նվիրված այդ բանաստեղծությունը։

Նեկրասովի հիշյալ բանաստեղծության հայերեն թարգմանության անբաստը վկայում է նաև այն մասին, որ Ադամյանը ճիշտ է ըմբռնել այդ բանաստեղծության խոր իմաստը, նրա սոցիա-

լական հոգեցվածությունը, նրա նշանակությունն ու տեղը ռուս հասարակական կյանքում։ Թարգմանելով այդ հայելուն, Ադամյանը մեծ ծառայություն է մատուցել մեր ժողովրդին, տալով նրան ռուս մեծ բանաստեղծի քաղաքական ամենաուժեղ երկերից մեկը։

1895 թ. Դրիգրիև Էնգելսի մահվան առթիվ գրած ընդարձակ հոդվածի համատեքստում Լենինը դնում է Նեկրասովի «Դարբնյուրովի հիշատակին» բանաստեղծության հետևյալ երկու տողը.

Какой светильник разума угас!
Какое сердце биться перестало![1]

Այս տողերի օգտագործումը Լենինի կողմից պատմական այդպիսի մի կարևոր հոդվածում լավագույն դնահատականն է Նեկրասովի վերոհիշյալ բանաստեղծության։

Նեկրասովի անգամների գրված երգերը լայն տարածում են գտել հայ իրականության մեջ։ Այդ երգերը բերանացի դիտելին ոչ միայն Ռուսաստանում ապրող հայ ուսանողությունը, հայ երաժիշտները, արտիստները, այլև՝ գրողները, ինչպես, օրինակ, Դաշտոցս Ադայանը, Հովհաննես Թումանյանը, Հակոբ Հակոբյանը և շատ ուրիշները։ Երաժշտագետ Մուշեղ Ադայանը՝ իր հոդ-

[1] В. И. Ленин, Сочинения, том II, стр. 5.

վածներից մեկում անդրադառնալով Հովհաննես Թումանյանի վերաբերմունքին երաժշտության հանդեպ, գրում է. «Թումանյանը սիրում էր և հմայված էր Պուշկինի հանճարով և շատ հաճախ արտասանում էր նրա «Հողմը» և զմայլված էր նրա երաժշտությամբ։ Սիրում էր Նեկրասովին և ժողովրդական երգերը Նեկրասովի տեքստերով, Առենկա Ռապինի, Վոլգային նվիրված երգերը, բիլինաները և հեղափոխական երգերը»[1]։

Մի այլ հոդվածում, խոսելով Ղազարոս Աղայանի և Հովհաննես Թումանյանի բարեկամության մասին, Մ. Աղայանը շատ ավելի որոշակի է նշում, թե Նեկրասովից ինչ երգեր էին նրանք սիրում ու երգում։ «Երկուսն էլ,— գրում է Մ. Աղայանը,— սիրում էին ռուսական ժողովրդական երգերն ու ռոմանսները։ Նրանց վրա խոր ազդեցություն էր թողնում Նեկրասովի „Укажи мне такую обитель“ երգը. երբ երգում էինք՝

Волга, Волга!.. Весной многоводной
Ты не так заливаешь поля,
Как великою скорбью народной
Переполнилась наша земля!

երկուսն էլ հուզմունքից արտասվում էին, այնքան խորն էին ապրում նրանք այդ երգը»[2]։

---

1 «Գրական թերթ», 1938 թ., № 14։

2 «Խորհրդային գրականություն», 1939 թ., № 3—4։

Նեկրասովի հուզիչ ժողովրդական երգերը չերմարեն սիրել է Հակոբ Հակոբյանը։ Մի առանձին սեր ունենալով դեպի ռուսական ժողովրդական երգերը, Հակոբյանը այդ երգերի լավագույն նմուշները գրի է առել իր «Հիշատակարանում», գրել իր տպավորությունները դրանց մասին։ Այսպես, օրինակ, 1890 թ. հուլիսի 13-ին, Հակոբյանն իր «Հիշատակարանում» արտագրում է Նեկրասովի „Коробейники" պոեմի առաջին 24 տողը. ինչպես հայտնի է, 70—80-ական թվականներին Նեկրասովի պոեմի այդ հատվածը դուրեկան էր ռուսական երգարաններում և սիրված ու տարածված ռուսական երգերից մեկն էր այդ ժամանակաշրջանում։ Հակոբյանի «Հիշատակարանում» կարդում ենք. «Ահա և երկրորդ երգը Նեկրասովի, որի կրակոտ, այրող եղանակի և խոսքերի ազդեցության տակից երկար ժամանակ չէի կարողանում դուրս գալ.

Ой, полна, полна коробушка,
Есть и ситцы и парча.
Пожалей, моя зазнобушка,
Молодецкого плеча!

Выди, выди в рожь высокую,
Там до ночки погожу,
А завижу черноокую—
Все товары разложу.

Цены сам платил немалые,
Не торгуйся, не скупись:
Подставляй-ка губы алые,
Ближе к милому садись!

Вот и пала ночь туманная,
Ждет удалый молодец.
Чу, идет!— пришла желанная,
Продает товар купец.

Катя бережно торгуется,
Всё боится передать.
Парень с девицей целуется,
Просит цену набавлять.

Знает только ночь глубокая,
Как поладили они.
Распрямись ты, рожь высокая,
Тайну свято сохрани!

Ահա այդ սիրտ փշրող, վշտացնող ու թախծալի տողերը, որոնք ևս երգում էի մեննակ. ընտիրյան լռության մեջ[1]:

Ժամանակակիցներդ վկայում են, որ Հակոբյանը մինչև իր կյանքի վերջին օրերն էլ սիրով կատարում էր Նեկրասովի տեքստերով գրված երգերը:

Դուրս գալով ժողովրդի ծոցից դեմոկրատ գրողներ Աղայանն ու Թումանյանը, ինչպես և ու-

1 Գրականության և արվեստի թանգարան, Հ. Հակոբյանի ֆոնդ:

վոլյուցիոն պոեմ Հակոբ Հակոբյանը, բնակա-նորեն պետք է սխալին մի բանաստեղծի, որի հանճարեղ ստեղծագործություններն ամբողջո-վին համակված էին ժողովրդական անսահման վշտի ու պայքարի բուռն արտահայտություն-ներով, սոցիալական խորքի ու ընդվզումների արտահայտություններով։

Հայ կոմպոզիտորները, պետևս Հոկտեմբերյան մեծ ռևոլյուցիայից շատ առաջ, ուսս բանաս-տեղծների, այդ թվում նաև Նեկրասովի, պատ-ռական տեքստերով երգեր են գրել։ Հայտնի են Ալեքսանդր Սպենդիարովի մի ամբողջ շարք վոկալ ստեղծագործություններ գրված Պուշկի-նի, Լերմոնտովի, Շևչենկոյի, Մայկովի, Զեխո-վի, Գորկու տեքստերով։

Ալեքսանդր Սպենդիարովն իր ստեղծագոր-ծական կյանքի մեծ մասն անց է կացրել ուսս կոմպոզիտորների շրջանում, խորապես ծանոթ էր ուսս երաժշտական կուլտուրային, նրա խոշոր ներկայացուցիչներին։ «Ես ինձ հաշվում եմ ուսական այն պլոցի հետևորդը,— գրում է Սպենդիարովը,— որը ստեղծել են Գլինկան, Բա-լակիրևը, Բորոդինը, Ռիմսկի-Կորսակովը և ուրիշ-ները։ Այդ կոմպոզիտորների, ինչպես նաև Գլա-զունովի և Լյադովի ստեղծագործությունները ամենից ավելի էին համապատասխանում իմ ճաշակին, թայց և այնպես իմ խնամն այն կոմ-

պոլիտորն էր, որն իր գործունեության ոլորտը չի սահմանափակում առեղծագործության որևէ մեկ բնագավառով, այլ համատարածորեն հիանալի է առեղծագործում սիմֆոնիկ, օպերային և կամերային երաժշտության բնագավառում: Այդ իմաստով էլ չեմ խոսում Բեթհովենի և Մոցարտի մասին, ինձ թվում է, իտալական ամենից ավելի մոտ են կանգնած ռուս կոմպոզիտորներից Չայկովսկին, իսկ օտարերկրյա կոմպոզիտորներից՝ թերևս Սեն-Սանսը»[1]:

900-ական թվականների սկզբին, Նեկրասովի «Չհնձած արտը» բանաստեղծության խոսքերով Սալնպիտրոմը գրում է իր լավագույն վոկալ առեղծագործություններից մեկը: «Չհնձած արտը» էլեգիան գրված է խառն խմբի և բասի սոլոյի համար, օրկեստրի նվագակցությամբ: Նեկրասովի այդ բանաստեղծության բովանդակության լիակատար բացահայտման նպատակով, կոմպոզիտորը առնչվել է լայն երգային մելոդիա, որն իր բնույթով համապատասխանում է ռուսական ժողովրդական երգի առանձնահատկություններին: Ամբերգի մելոդիկ ու դեղեցիկ, խորն ու հուզական ամրողջությունը, սոլոյի արտահայտիչ միջամտությունը մեծ հաջողությամբ բացահայտում են Նեկրասովի տեքստի

[1] „Советская музыка", 1938 г., № 4.

ոգին, սոցիալական խոր հագեցվածությունը։ Առհասարակ պիտի նշել, որ Նեկրասովի «Հին-ձած արտը» բանաստեղծությունը բացառիկ մեծ ընդունելություն է գտել հայ իրականության մեջ։ Այդ բանաստեղծության մեջ շոշափած գաղափարը չէր կարող խորթանալ չհուզել ճնշված ու իրավազուրկ մի ժողովրդի, ինչպիսին էր հայ ժողովուրդը։ Ահա թե ինչու հայ բանաստեղծները սիրով թարգմանել են այդ բանաստեղծությունը, հայ նկարիչները նկարազարդել այն, հայ կոմպոզիտորները այդ ստեղծով հուզիչ երգեր գրել։

1902 թվականին Պետերբուրգում առանձին գրքով լույս է տեսնում Սպենդիարովի «Հհնձած արտը» էլեգիան և լայն տարածում գտնում Ռուսաստանի ամենահեռավոր անկյուններում։ Այսօր էլ Սպենդիարովի այդ ստեղծագործության կատարումն ուժեղ տպավորություն է գործում հանդիսականների վրա։ Նեկրասովի տեքստերով երգեր են գրել նաև հայ մյուս կոմպոզիտորները։

Նեկրասովի ստեղծագործությունները, նրա պայծառ կերպարը կենդանի հետաքրքրություն են առաջ բերել հայ նկարիչների ու քանդակագործների շրջանում։ 1950 թվականին, Համամիութենական Գեղարվեստական ցուցահանդեսում տպանդամավոր քանդակագործ Ն. Նիկոդոս-

Посвящается

Николаю Николаевичу

Аманн

Несжатая полоса



для смѣшаннаго хора и баса-соло

съ оркестровымъ сопровожденіемъ

Слова Н. Некрасова

Музыка

А. Спендіарова

Op 8

Партитура	net 1р 50 к
оркестровые голоса	„ 3р — „
Оркестровые дополнительные по	— 25 к
Хоровые голоса С.АТ.Б по net	— 10 к
К-ширкуются	1р 50 к

В. БЕССЕЛЬ и К°

Поставщики Двора Е. И. ВЕЛИЧЕСТВА

С ПЕТЕРБУРГЪ | МОСКВА

Невскій 54. | Петровка 12.


Ա. Սպենդիարովի ձեռնադիր արտը էլեկտրական տառերի հրատարակության շաբիկը

յանը ցուցադրում է Նիկրատովի մարմարե կիսանդրին, որը երկար ժամանակ այցելուների ուշադրության կենտրոնում էր։

Նիկողոսյանը երիտասարդ քանդակագործ է, բայց նրա ստեղծագործություններն արդեն հայտնի են ողջ Միության մեջ, ինչպես նաև նրա սահմաններից դուրս։ Հայ քանդակագործներից նա սերել է Հ. Գյուրջյանի և Ա. Տեր-Մարուքյանի ստեղծագործությունները, որոնց մեջ առանձնակի վարպետությամբ դրսևորված են մարդու ներքին աշխարհը, տիպական առանձնահատկությունները երևոյթ արտահայտիչ ու բնորոշ երանգներով։ Գյուրջյանի և Մարուքյանի քանդակները հիացնում են երևոյթ մոնումենտալ մտահղացումներով ու ստեղծագործական խոհքներով։

Նիկողոսյանի քանդակած Վև Տոլստոյը, Ավետիք Իսահակյանը, Մանուկ Աբեղյանը, մարշալ Իվան Բագրամյանը և ուրիշները կերպարվեստի հայկական ու ընդհանուր ստեղծագործությունները են։

Այդ պորտրետների մեջ առանձնակի տեղ է գրավում Նիկրատովի քանդակը։ Մեծ բանաստեղծի կյանքի ու ստեղծագործության բազմակողմանի ու խոր ուսումնասիրությունը հնարավորություն է տվել Նիկողոսյանին իր քանդակում արտահայտել Նիկրատովի կերպարի համար ամե-



Ն. Ա. Նեկրասով (քանդակ)
գործ՝ Ն. Նիկոգոսյանի

նարնորոշ ու մխսկան գծերը։ Նեկրասովի արձանի համար հայտարարված Համամիութենական կոնկուրսում, 1950 թվականին, հատուկ ուշադրության արժանացավ Նիկողոսյանի աշխատանքը, մամուլը նշեց տաղանդավոր քանդակագործի այդ աշխատանքի մեծ հաջողությունը։

Քանդակագործը Նեկրասովին պատկերել է ձեռքերը կրծքին խաչաձև, ոչ ձեռքին բևեռնակու հատորյակը, որը մի առանձ սիմվոլիկ ձևով ընդգծում է Նեկրասովի աշխարհայացքի և գաղափարի հիմնական ուղղությունը։ Ինչպես հայտնի է, Նեկրասովը մինչև իր կյանքի վերջը եղել է ռուս մեծ մտածողի գաղափարների երկրպագուն։ Նեկրասովը ոչ միայն առանձին բանաստեղծություն է գրել Բևեռնակու մասին, այլև՝ մի ամբողջ պոեմ։ Այնպես որ խիստ օրգանական է Նեկրասովի ձեռքին տեսնել Բևեռնակու հատորյակը։

Պոետի դեմքը խրոխտ է, վեհ, հայացքը զարմանալի խստաշունչ ու արտահայտիչ։ Կարծես կենդանի Նեկրասովը ահա կխոսի, կարտասանի իր վշտի ու վրեժի բանաստեղծություններըն։ Նիկողոսյանի պորտրետային քանդակների համար ատհատարակ բնորոշ է ոչ միայն արտաքին նմանությունը, այլև կերպարի հոգեկան աշ-

խարխլ յուրովի բացատրությունը, նրա ոմ և ինչպիսին լինելու ընդգծվածությունը։

Հայ նկարիչները բազմիցս նկարել են Նեկրասովի պոեմները։ Դեռևս նախահեղափոխական հայ մամուլի էջերում մենք հանդիպում ենք Նեկրասովի գրավչությանը պոեմներին, որ կատարել էին հայ նկարիչները։ Սովետական տարիներին Նեկրասովի ստեղծագործությունների հայերեն առանձին հրատարակությունների համար սովետահայ նկարիչները պատրաստել են Նեկրասովի յուղանկարչ ու գրավչությանը պոեմները, պատկերազարդել են նրա ստեղծագործությունները։ Այդ ասպարեզում առանձին ուշադրության արժանի են Կ. Տիրատուրյանի, Հ. Մնացականյանի, Լ. Մելքումյանի և մի շարք այլ նկարիչների աշխատանքները։

Նեկրասովի դրամատուրգիան նույնպես որոշակի հետաքրքրություն է առաջացրել հայկական շրջաններում։ Դեռևս 1846 թվականին Թիֆլիսում բեմադրվել է Նեկրասովի «Պապի թութակը» պիեսը ռուսերեն, որն աշխույժ հետաքրքրություն է առաջացրել հայ հանդիսականների լայն շրջաններում։ Հայ մամուլի էջերում մենք հանդիպում ենք առանձին հաղորդումների Նեկրասովի մյուս պիեսների բեմադրության մասին։ Այսպես, օրինակ, «Տարազ» ժուռնալը, 1902 թ. գրում է, որ Թիֆլիսի ռուս

պրամատիկ սրտխտոնների խումբը Նեկրասովի մահվան 25-ամյակի կապակցությամբ խաղացել է «Աշնանային ձանձրույթ» պիեսը, իսկ երկրորդ քաժնում արտասանվել են Նեկրասովի քառատողերը[1]։

Տարեց սերի հայ արվեստի վարպետներն ավելի ու ավելի են խորանում Նեկրասովի հուզիչ կերպարի, նրա անմահ ստեղծագործությունների բազմակողմանի ուսումնասիրության մեջ։ Նեկրասովի պոեզիան ստեղծագործական հարուստ նյութ է տալիս հայ արվեստագետներին, և նրանք ջանք չեն խնայի ռևոլյուցիոն դեմոկրատական մեծ պոետի անմահ ստեղծագործությունները հայ իրականության մեջ լայնորեն պրոպագանդելու գործում։

---

[1] «Տարազ», 1902 թ., № 50։

Ն. Ա. ՆԵԿՐԱՍՈՎԻ ՊՈԵԶԻԱՆ ՀԱՅ ԳՐԱԲՆԱԴԱՏՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՄԲ



Հայ գրական քննադատությունը ռուս գրականության և ռուս առանձին գրողների մասին լայնորեն արտահայտվել է Աբեղյան Հայաստանը Խորհրդային միանալուց հետո, 19-րդ դարի 30—40-ական թվականներից սկսած։

Հետաքրքրությունը դեպի ռուս գրականությունն ու գրողները հայ իրականության մեջ ավելի է աճում, երբ ռուս այնպիսի գրողներ, ինչպիսիք են՝ Ա. Պուշկինը, Ա. Գրիբոյեդովը, Մ. Լերմոնտովը, Ա. Մալինովկին, Դ. Դավիդովը և ուրիշները ռուս-պարսկական, ռուս-թյուրքական պատերազմների ժամանակ և դրանից հետո գալիս են Անդրկովկաս ու Հայաստան և շփվում ժողովրդի հետ, հետաքրքրվում նրա կյանքով, պատմությամբ, բանահյուսությամբ, գրականությամբ և ապա իրենց ստեղծագործություններում պատկերում կովկասյան ժողովուրդների կյանքի հերոսական ու ուշագրավ էջերը։

19-րդ դարի առաջին կեսին Մոսկվայի, Պետերբուրգի, Կազանի համալսարաններում սով-

լող հայ ներխուժարարությունը ոչ միայն կանգնած կարգում էր ռուս պրոլների կոմկուսին ներքած առեղծվածությունները, այլև ուսումնասիրում էր այդ պրոլների կյանքը, նրանց պրակտիկ հարուստ ժառանգությունը: Մեծ հետաքրքրություն է հանդես բերում գեղի ռուս պրակտիկությունը: Մոսկվայի Լազարյան ճեմարանի ուսուցչությունը, որը կենդանի շփման մեջ էր ժուկովսկու, Պուշկինի և ռուս շատ անվանի գրողների հետ:

Լազարյան ճեմարանի սան Մկրտիչ Էմինը գեռևս անցյալ դարի 30-ական թվականներին թարգմանում է Ա. Պուշկինի «Բախչիսարայի շատրվանը» և «Կովկասի գերին»: Հետագայում, Մոսկվայի համալսարանն ավարտելուց հետո, Էմինը Լազարյան ճեմարանում պրակտիկություն դասավանդելու ժամանակ լայնորեն պրոպագանդում է ռուս պրակտիկությունը, ջերմ հետաքրքրություն ունենալով գեղի Պուշկինի, Լերմոնտովի և մյուս գրողների առեղծվածությունները: Հայ անվանի բանաստեղծ Ռափայել Պատկանյանը, որ 40-ական թվականներին աշակերտել էր Մկրտիչ Էմինին, իր հիշողություններում գրում է. «Պուշկինի և Լերմոնտովի գրվածքն առաջին անգամ մեզ ծանոթացուց նա (Էմինը), շատ անգամ, հենց իր դասի միջոցին, ձեռքը առնում էր նոցա շարադրությունները և կարդում

էր մեզ համար, և այդ կերպով մեր մեջ սեր և ճաշակ էր ձգտում այդ և ուրիշ ռուս հեղինակների մասին։ Եվ այդ խոկ էր պատճառը, որ պ. Էմինի աշակերտների մեջ բավականին շատ կվով բանաստեղծական ոգով և ճաշակով երիտասարդներ երևան եկան, ինչպես՝ Ալպարյանցը, Փափազյանը, Մխիթարյանը, Դոդոխյանը, Շահազիզյանը և այլն[1]։

Ռուս գրականության նկատմամբ լայն հետաքրքրություն է հանդես բերում Ներսիսյան դպրոցի պատմաբանական և աշակերտական կազմը։ Ներսիսյան դպրոցն է այցելում Ա. Գրիբոյեդովը, որը մոտ հարաբերություններ մեջ էր դպրոցի տեսուչ, ռուս գրականության ու լեզվի քաջածանոթ մանկավարժ Հարությունյան Ալամդարյանի հետ։

Ռուս կուլտուրայի բազմակողմանի ու կապակցված պրոպագանդայով հանդես է եկել հայ նոր գրականության հիմնադիր Խաչատուր Աբովյանը, որը դեռևս Թերպատում ուսանելու տարիներին լրկար ու մտերմական դրույց էր ունեցել ռուս նշանավոր բանաստեղծ Ժուկովսկու հետ՝ երկու ժողովուրդների բարեկամության, գրականության ու կուլտուրայի հարցերի շուրջը։

50-ական թվականներին Անդրկովկաս այցելած ռուս գրողներից Յա. Պոլոնսկին մասնավոր ձանոթանում է հայ գրողների ու գրականության

---

1 Ե. Պ ա ռ կ ա ն յ ա ն, Երկեր, Երևան, 1935 թ., էջ 696։

հետո և „Кавказ“ թերթում ընդարձակ հոդված տպագրում Սայաթ-Նովայի ստեղծագործությունների մասին, որտեղ իր հետազոտություններն է հայտնում հանճարեղ Սայաթ-Նովայի անմահ երգերի նկատմամբ[1]:

Հայ մամուլի էջերում առաջ գրողների ու գրականության մասին հանգամանորեն խոսվում է միայն 50-ական թվականներին: Նազարյանի և Նալբանդյանի «Հյուսիսափայլի» էջերում բարձր գնահատականի են արժանանում Պուշկինին, Լերմոնտովի, Գոգոլի և առաջ մյուս գրողների ստեղծագործությունները: Հասարակական կյանքի նենթագործությունը, խոչերն ու արատները անխնա մերկող և մերկացնող գոգոլյան գրական ուղղությունը լայն ընդունելություն է գտնում հայ առաջավոր գրական շրջաններում:

Հայ հասարակական-քննադատական մտքի զարգացման վրա խոշոր ազդեցություն են ունենում Նեկրասովի, Չերնիշևսկու, Դոբրոլյուբովի «Սովրեմեննիկ» ամսագիրը, նրա մեջ քարոզվող դեմոկրատական-ռևոլյուցիոն գաղափարները: «Սովրեմեննիկից» հոդվածներ, բանաստեղծություններ և գրախոսական նյութեր են թարգմանվում ու տպագրվում «Հյուսիսափայլի» էջերում:

Առաջ գրողների և գրականության առանձին

[1] „Кавказ“, 1851 г., № 1, 2.

հարցերի մասին հոդվածներ են տպագրվում 60—70 թվականներին։

Նեկրասովի կյանքին ու ստեղծագործությանը նվիրված հատուկ հոդվածներ տպագրվում են նրա մահվան կապակցությամբ, 1878 թվականին։ Ուշադրավ ու հետաքրքիր են այդ հոդվածները, նրանց մեջ լայնորեն քննարկվում են Նեկրասովի կյանքի, գրական ու հասարակական գործունեության մի շարք հարցեր։

Առաջին ծավալուն հոդվածը տպագրում է «Մշակ» թերթը։ Այդ հոդվածը թարգմանություն էր Թիֆլիսում հրատարակվող „Обзор" թերթից։ Այդ առթիվ «Մշակի» խմբագրությունը գրում է. «Թիֆլիսում հրատարակվող „Обзор" լրագրի 2-րդ համարի ֆեյլետոնական բաժնում մի բավականին հետաքրքրական հոդված է հրատարակված, որի մեջ հանգուցյալ Նեկրասովի թե օրագրական գործունեությունը և թե բանաստեղծական ստեղծագործությունները մի անաչառ բանաքննության են ենթարկվում։ Մենք հարմար ենք համարում մեր ընթերցողաց ծանոթացնել այդ հոդվածի պարունակության հետ»[1]։

Հետաքրքիր է, թե ինչու Նեկրասովի մահվան առթիվ ռուսական մամուլում տպագրված բազմաթիվ հոդվածներից «Մշակը» հատկապես ընտ-

1 «Մշակ», 1878 թ., № 2։

րել է այդ հոդվածը։ Թուցի նրա աննախանձ հոդինակն ինքն է առաջարկել իր հոդվածը «Մշակին» տպագրելու, կամ մի ուրիշ դրդապատճառ է եղել տպագրելու հենց այդ հոդվածը։ Անկախ այդ հանգամանքներից, Նեկրասովի մասին «Մշակում» զետեղված հոդվածը մեծ հետաքրքրություն է ներկայացնում։ Նրա հեղինակը քաջ ծանոթ էր 60-ական թվականների գրական-հասարակական կյանքին ու պայքարին, նա մի առանձին սիրով ու համակրանքով էր խոսում Բելինսկու, Չերնիշևսկու, Դոբրոլյուբովի, Նեկրասովի մասին։

Խոսելով Նեկրասովի 40-ական թվականների գրական գործունեության մասին, հոդվածագիրն առաջին հերթին ընդգծում է Նեկրասովի հրատարակած «Պետերբուրգյան ժողովածուն» և նրա նշանակությունը ոչ միայն գրականության, այլև Նեկրասովի ապագա գործունեության համար։ Հոդվածի հեղինակը գրում է. «Այդ մեջբերումում նրա հրատարակած «Պետերբուրգյան ժողովածուն» ասված դիրքը մի նոր լուսաբանություն է գտնում։ Դրա մեջ տեղավորված էին Գոգոլի «Քշվող մարդիկ» կոչված հեղինակության հետ, Տուրգենևի «Կալվածատերը», Օդոևսկու «Մարմնոգալ» գլխավոր գործերը և Գրոնեններբերգի թարգմանած «Մակբետը»։ Այս հոդվածները բացակայում էին Խանիկովների և Բելինսկու առանձնատիրության

Այդ գրքի ունեցած հաջողությունը անսպասելի էր և մինչև այդ օրը չտեսնված բան էր։ Այդ հաջողությունը վճռական ազդեցություն ունեցավ Նեկրասովի բախտի վրա[1]։

Հոդվածում առանձնապես ընդգծվում է այն խոշոր դերը, որ ունեցել է Նեկրասովի կյանքում Բելինսկին։ Ինչպես հայտնի է, Նեկրասովն իր ամբողջ կյանքում սրբությամբ պահպանել է ռուս հառաջադիմական մտքի այդ հսկայի թողած մարտական ուրախ իշխանները և երախտագիտությամբ նրա հիշատակին նվիրել մի քանի գեղեցիկ պոեմ։

Այնուհետև հոդվածագիրն առանց անունը տալու հիշում է Չերնիշևսկուն, Նեկրասովի և նրա մոտերմությունը, նրանց միասյալ աշխատանքը «Սովրեմեննիկը» ժամանակի առաջավոր ժուռնալ պարձնելու գործում։ «Բելինսկու մահից հետո,—կարդում ենք այդ հոդվածում,—մինչև 1856 թիվը Նեկրասովի օրագիրը համարյա ընկնում է, բայց այդ միջոցին նա մի նոր առաջադիմող աշխատակից է ձեռք բերում, որը պակաս չէր Բելինսկուց։ «Ավվեսաի հարաբերությունը դեպի իրականությունը» անունով բանակովական հոդվածը, որը գրական շարժողության հիմք եղավ, Նեկրասովի ուշադրությունը նրա հեղինակի վրա

[1] «Մշակ», 1878 թ., № 2։

դարձրեց։ Նրա օրագիրը նորից սկսում է պայծառ քայլերով առաջ երթալ մինչև 1862 թիվը»[1]։

1861 թ. նոյեմբերին մահանում է Դոբրոլյուբովը, 1862 թ. հուլիսին ձերբակալվում է Չերնիշևսկին և, ինչպես հոդվածագիրն է նշում, Նեկրասովը զրկվում է իր «ամենից ընտիր ու ազատնդավոր աշխատակիցներից»։ Խոսելով Նեկրասով ժուռնալիստի մասին, հոդվածի հեղինակը գրում է. «Ոչպես մատենագիր, Նեկրասովը գիտեր իր շուրջը ժողովել այնպիսի անձինքներ, որոնք առաջադեմ մտքերի ամենից երևելի գործիչներն էինն։

Բացառիկ է Նեկրասովի դերը 19-րդ դարի ռուս հասարակական մտքի պատմության մեջ. նա հսկայական ազդեցություն ունեցավ ռուս գրականության զարգացման ընթացքի վրա, կազմակերպեց այդ գրականությունը և կատարի պայքարի բովով այն հասցրեց զարգացման բարձր աստիճանի։ Խոսելով ռուս գրականության ու գրողների շրջանում Նեկրասովի ունեցած ազդեցության մասին, հոդվածագիրը գրում է. «Երկար ժամանակ Նեկրասովը կարողացավ այնպիսի զորեղ ազդեցություն ունենալ ռուս հեղինակների վրա, որ Թե իրանից Թույլ գրողները և Թե հակառակորդները վախենում էին նրա հետ բանա-

[1] «Միշակ», 1878 թ., № 2։

հովության մոնոպոլ։ Նա այնպիսի մի ուժ էր, որ ամենից նշանավոր և լուսո լերևույթին անկախ խմբագիրները, որպիսին որ կեղծ-անդրկյուզ Սուվորինը, ուղղակի խոստովանում էին, որ չեն համարձակվում ոչ մեկն նրա հետ մաքառել, այլև դիպչել անդամ[1]։

Առաջին պլանի վրա դնելով Նեկրասով գրական-կազմակերպչի ու խմբագրի գործունեությունը, հաջողությամբ լուսաբանելով այդ ասպարեզում Նեկրասովի հակայական դերը, հոդվածագիրը քիչ է անդրադառնում և չի կարողանում բացահայտել Նեկրասովի պոեզիայի առանձնահատկությունները, նրա պոետական դպրոցի հետագրջող նշանակությունը։ Թուցե հոդվածագիրն անհրաժեշտ է համարել Անդրկովկասում հրատարակվող բազմաթիվ թերթերի ու ժուռնալների, նրանց խմբագիրների ու աշխատակիցների համար հատկապես շեշտել Նեկրասովի ժուռնալիստական գործունեությունը, հիշեցնել այն հոյակապ ավանդությունները, որ թողել էր Նեկրասովը, որպես խմբագիր ու ժուռնալիստ։ Այսպիսի հոդվածագրումը հավանորեն իր նշանակությունն ուներ Անդրկովկասի, և ոչ միայն Անդրկովկասի, մամուլի համար։ 70-ական թվականների Անդրկովկասի մամուլը նահանջել էր ուսյուցիոն-դե-

---

[1] «Մշակ», 1878 թ., № 2։

մոկրատների Թողած մարտական տրադիցիաները և հիշեցնել նրան 50 – 60-ական թվականների «Մոլրևոննիկի» գործունեության, շնչել այն, անհրաժեշտ էր և արժանի լուրջ ուշադրության։ Բայց հոդվածը շատ ավելի լայն արձագանք կունենար, եթե նրա հեղինակը գոնե հանուրար ցույց տված լիներ նաև ժողովրդական մեծ պատի դերն ու նշանակությունը։

Այս բացը հաջողությամբ վերացնում է երկրորդ հոդվածը, որ ուղարկվել էր Պետերբուրգից ու տպագրվել «Բազմավեպում», 1878 թվականին։ «Նեկրասով ազգային բանաստեղծն Ռուսաստանը» հոդվածը կրող այդ հոդվածն ամբողջովին նվիրված է Նեկրասով բանաստեղծի առեղծագործության։ Հոդվածի հեղինակը՝ բանաստեղծ Թարգմանիչ Բևերովին Քուշներյանը, երկար տարիներ ապրելով Ռուսաստանում, լավ ծանոթ էր ռուս գրականությանը, հատկապես ռուսական պոեզիային։

Քուշներյանը մանակից է Նեկրասովի հուղարկավորությանը և իր հոդվածը գրել է այն թարմ տպավորությունների տակ, որ նա ստացել էր Նեկրասովի մահվան առթիվ արտասանված ճառերից և երեսաստղությանն ցուցաբերած կրքոտ սիրուց դեպի ժողովրդի մեծ բանաստեղծը։

Իր արժեքավոր հոդվածում Քուշներյանը

նշում է, որ հանձին Նիկրատովի Ռուսաստանն ուներ մի զգերահանճար քերթող, մի բանաստեղծ, որի անապատելի կորուստը ազգային սուգ առաջացրեց ողջ Ռուսաստանում։

Գուշներյանը բնորոշում է Նիկրատովին, որպես ռուս ժողովրդի վիշտն ու տառապանքը, կեղեքումն ու ճնշումն արտահայտող, ցարական օրենքները մատակող խիզախ բանաստեղծի, որի «ոգելից տողերը» ժողովուրդը մեծագույն ջերմեռանդությամբ ընդունեց, որովհետև այդ տողերը ճշմարտախոսորեն ու ցայտուն կերպով արտահայտում էին ճնշված ու հարատահարված ռուս ժողովրդի ճնառարակաց զգացումը ու մատուցանող ձգտումները։ «Հարմարագույն միջոց էր,—գրում է Գուշներյանը,—ճարտար հնդինակի մը համար՝ սուր գրիչն ուղղել գեպի ապօրէն և անխիղճ վարիչս և առ կեղեքիչս ժողովրդյան. չփախուց Նիկրատով այս միջոցը, բոլորովին նվիրեց յուր հանճարը և գրիչը ժողովրդյան նիւն և հարատահարյալ մասին, պաշտպանելով դնոստ և ողբալով և հանդիմանելով դհարատահարիչս։ Արդեն ժողովրդյան մեծագույն մասը հակամետ Նիկրատովի նկատմանց՝ ծափահարեց յնծութիւամբ գովեց նորա ոգելից տողերը։ Նիկրատովին առաջինն եղավ, որ համարձակորեն կրցավ բացատրել գրով՝ այն ալ առանավոր չափերամբ, հասարակաց զգացումը, և այն մատուցանէ

ձգտումները, որ զազգը կը խլրտային, ոտքի և գործի տողերու առջև սմքած. ազգը այս տողերով գմայլած՝ գրողին ամեն ներքև այնպիսի պատվանդան մը գրավ, որ հասնիլը կարելի չէր[1]:

Աշխարհի մեծագույն բանաստեղծներուն հետ համեմատում Բուշնեյանը Նեկրասովին: Նա գտնում է, որ Նեկրասովը ուներ Դանտեի մեծ մտքին ու խոչքը, նրա ընդարձակ պատկերներն ու կատարի զորությունը: Բայց Դանտեի համեմատությամբ նա ժողովրդի ընդերքից էր գալիս, ունայ կյանքի խոր ճանաչողությամբ, այդ կյանքը կաշկանդող դարավոր շղթաները խորտակելու ու այն հիմունքին վերափոխելու պատմական մեծ նպատակադրումով: Բուշնեյանը գրում է. «Ինչպես որ այս բանաստեղծին առանձնահատկությունները նոր էին, նույնպես ոճին և լեզվին ալ նոր ձև տվավ: Ի բաց առյալ անձին անհատական, ցասկոտ և հանդիմանիչ և մոգական ոճը, նորամուծային շատ հետևողներ ունեցավ, բայց նորա բարձր և խոր զգայմանց և վեհանձնության չհասան ցայսօր հավասարող մը: Նեկրասով, Ամասիացին Տեպերտանաց հեղինակին նման, երբ մուսայն պատեցյալ՝ նա կը շնչե, անհավոր բանաստեղծություններ հղկյալ, չափյալ և հանգյալ հրաբուխներն դուրս կը ժայթքե, իրավ նա Տան-

[1] «Բազմավեպ», 1878 թ., հատոր Լ:

դեմ նման երկինս չի վերանար և ի սանդարս չիջներ, և մտացածին պատիժներ չի հանճարեր՝ դանօրինությունս խայտառակելու և պատժելու համար, այլ գեղերու, սնամիներու մեջ կը բանա նա դժոխքը, նույն Վեսերպուրկի ազնվականաց պահլճաներուն մեջ կը դնե. ի՞նչ գեղեցիկ, ի՞նչ սրատպին և միանգամայն ահավոր է, այս ոճով գրված իր «Հայրիկ» ոտանավորը, և քանի՞ ողբոց արժանի անօրեն Հայրիկին Քշվառ դատրիկը նատաշա»[1]։

Ձիշտ մեկնաբանելով Նեկրասովի պոեզիայի բնորոշ մի քանի առանձնահատկությունները, այնուհետև Ռուշներյանն անցնում է Նեկրասովի դեպարվեստական խոսքի հակայական ազդեցությանը, այդ խոսքի ազնիվ ու արդարացի հնչեղությանը։ «Մոլությանց հակառակամարտ գրիչ է Նեկրասովը, առաքինության գեղեցկությունը ընթերցողը պետք է ինքը աշխատի և հեռևարար դուրս հանե։ Կարդի նա մարդու սրտին խորերը, ոսկորները դող կ'տանե. բայց ավա՛ղ, չի հանդչեցնե։ Առ մայրն գրած ոտանավորը իր վերջին և ընտրելագույն գրվածքներեն է, հորում վսեմության հետ ի միասին զառնություն, վիշտ, և տագնապք, մի քան զմի երևել կընեն։ Կը խոստովանի, որ յուր բարձր և ազնվական զգացմունք,

1 «Բազմավեպ», 1878 թ., հատոր Լ.Զ։

սեր գեղեցիկ պարուհյան, ճաշակ Տանգեի և Շեքսպիրի, մարմնեն անցեր են իրեն ժառանգություններ»[1]։

Այս արժեքավոր հոդվածը հեղինակին ամաչում է մարդաբերներեն նշելով այն ապագան, որ սպասվում է Նեկրասովին, նա կանխատեսում է, որ պիտի գան այն երջանիկ ժամանակները, երբ մեծիկը պիտի կարդա ու հասկանա Նեկրասովի բանաստեղծություններըև զրպում մահարձաններեր պիտի կանգնեցնի մեծ բանաստեղծի հիշատակին։ Պատմությունը ևկավ հաստատելու, թե որքան ճշմարտացի էր հոդվածի հեղինակը։

Յարական գենզուրայից խուսափելու համար Բուշնեվյանն իր հոդվածն ուղարկել էր արտասահմանյան հայ մամուլին՝ տպագրելու։ Այդ հոդվածը 70-ական թվականների հայ իրականության համար ուշադրավ մի երևույթ էր։ Նա ընդհատակ մտնելով Նեկրասովի հարուստ ստեղծագործությունների մի շարք կողմերի ճիշտ ըմբռնմանն ու մեկնաբանմանը։ Ինչ խոսք, որ հայ իրականության մեջ քննադատական մեծքը այդ տարիներին դեռ չէր հասել զարգացման այն աստիճանին, որ կարողանար ամբողջովին ու բազմակողմանիորեն բացահայտել Նեկրասովի

[1] «Բազմավեպ», 1878 թ., հատոր I,2։

պոլիտայի դեմոկրատական-ռևոլյուցիոն էությունը:

80-ական թվականներին հայ գրական քննադատությունը քաջալերում է Նեկրասովի բանաստեղծությունների թարգմանությունը, առանձին գրական-հասարակական հարցերին նվիրված հոդվածներում մեջբերումներ է կատարում Նեկրասովի բանաստեղծություններից, ջերմորեն պաշտպանում նրա գրական վեհ սկզբունքները: Ուշագրավ է հատկապես այն փաստը, որ հայ գրական քննադատությունը հաճախակի անդրադառնում է Նեկրասովի այն ստեղծագործություններին, որոնք նվիրված են ռուս ռևոլյուցիոն-դեմոկրատների հիշատակին: Այսպես օրինակ, 1889 թ. «Արձագանքը» շարադրանքին իր հունիսի 18-ի առաջնորդող հոդվածում, անդրադառնալով հայ ուսանողության աննկուն, նշում է այն հանգամանքը, որ ունի ուսանողությունը հայ հասարակական կյանքի վերափոխման ու զարգացման գործում: Առաջնորդում օրինակ է բերվում Մոսկվայի ու Պետերբուրգի համալսարանների ուսանողության նույն դերը ժողովրդի կյանքում: Ապա՝ քննադատելով հայ ուսանողության այն հատվածին, որ օտարության մեջ հեռանում է մայրենի լեզուն, անտարբեր է դառնում գրելի իր ժողովրդի կուլտուրան, առաջնորդողի հեղինակն ավարտում

է իր հոդվածը հետևյալ ուշադրավ տողերով. «Եթե չմոռանք այդ մեծ երևույթը, կշարունակվի և նորա ճառագայթ և կրակոտ ներգործությունը: Թշնամությունը չի բարձրանալ, եթե շարունակվի մեր ուսանողության այժմյան ընթացքը: Մամուլը չի աղավաղել, երբ նորա պաշտպանները անձնանուեր են կյանքին և գիտության: Մենք հուսով ենք, որ մի օր այդ կլինի, ուսոի և թող հետու լինի մեզանից տարակուսանքը, հուսահատությունը... Եթե այդ հույսն էլ կորչենք, այն ժամանակ, Նեկրասովի խոսքով ասած.

Заглохла б нива жизни...[1]

Գեղեցիկ այս տողն, ինչպես հայտնի է, վերցված է Նեկրասովի «Դորբոլյուբովի հիշատակին» նվիրված նշանավոր բանաստեղծությունից:

Նեկրասովի պատկառելի խոսքը լայնորեն օգտագործվում է Բելինսկու ու Դորբոլյուբովի մասին գրած հոդվածներում: Պ. Ն. Սաքունցը Բելինսկու մահվան 50-ամյակին առթիվ գրած իր հոդվածի համար իրրև բնաբան գրել է Նեկրասովի նշանավոր բանաստեղծությունից հետևյալ երեք տողը.

Молясь твоей многострадальной тени,
Учитель! перед именем твоим
Позволь смиренно преклонить колени.

[1] «Արձագանք», 1889 թ., № 23:

Հանգամանորեն անդրադառնալով Բելինսկու կյանքին ու գործունեությանը, ինչպես և նրա դերին ու նշանակությանը ռուս գրականության զարգացման գործում, հեղինակն իր հոդվածն ավարտում է դարձյալ Նեկրասովի պոետական հոյակապ տողերով.

Ты нас гуманно мыслить научил,
Едва-ль не первый вспомнил о народе,
Едва-ль не первый ты заговорил
О равенстве, о братстве, о свободе...

Ուշագրավ ու բնորոշ են Նեկրասովի պոետական այն տողերը, որ հայ քննադատները տարբեր առիթներով ու տարբեր պարագաներում մեջ են բերել իրենց հոդվածներում: Այդ տողերն օգնել են ավելի դիպուկ, ավելի ցայտուն գարձնելու նրանց միտքը, ավելի որոշակի՝ նրանց գաղափարական նպատակասլացությունը:

80—90-ական թվականներին Նեկրասովի կյանքին ու գրական գործունեության նվիրված հոդվածներից առանձին ուշադրության է արժանի Թարգմանիչ-քննադատ Տիգրան Հովհաննիսյանի հոդվածը: Տիգրան Հովհաննիսյանը ռուս գրականության դեմոկրատական-ռեալիստական սրտապնդիսանների լավագույն պրոպագանդիստներից մեկն էր հայ իրականության մեջ: 90-ական, ինչպես և 900-ական թվականների նրա հոդված-

1 «Մշակ», 1898 թ., № 88—89:

նները ռուս գրականության մասին արժանի են ամենայն ուշադրության։ Բայց Տ. Հովհաննիսյանը հայ գրականության մեջ շատ ավելի հայտնի է, որպես ռուս անալխատական գրականության վարպետ թարգմանիչներից մեկը։ Նրան են պատկանում Տուրգենևից, Տոլստոյից, Դարշինից, Չեխովից, Գորկուց կատարված լավագույն թարգմանությունները։ Լեվ Տոլստոյի «Հարության» վրա Հովհաննիսյանի թարգմանությունը մինչև այսօր էլ մնում է որպես թարգմանական գրականության մի ուշագրավ նմուշ։ Տ. Հովհաննիսյանն ավարտել էր Մոսկվայի համալսարանը և խորապես ծանոթ էր ռուս գրականությանը և արվեստին, ռուս հասարակական մտքի առաջավոր ներկայացուցիչների առնձագործությունները։ Մի առանձին հետաքրքրությամբ է Հովհաննիսյանը խոսում ռուս 60-ականների, նրանց գերի ու նշանակության մասին։ Նեկրասովի մահվան քառամյակի առթիվ հրատարակած իր հոդվածում Հովհաննիսյանը գրում է. «Մեզ քան տարի առաջ, 1877 թ. դեկտեմբերի 27-ին, մեռավ ռուս ազգի ամենամեծ գրականներից մեկը՝ բանաստեղծ Նեկրասովը, որի գրվածքները բարերար ազդեցություն են ունեցել և մեր գրչեների շատերի վրա։ Այսօր Ռուսաստանի գանազան քաղաքներում մեծ բանաստեղծի և մեծ քաղաքացու տապանի գր-

ծուննեութեան բազմաթիւ համակրողները հարգելու են նրա հիշատակը գրական հանդիսաներով»[1]։

Հանգամանորեն ու ոգևշնչված է Հովհաննէսյանը խոսում Նևկրասովի պոեզիայի, նրա պոետական դպրոցի մասին։ Նա առանձնապես շեշտում է Նևկրասովի ստեղծագործության սոցիալական նշանակությունը, ազատագրական ոգին, ժողովրդական կյանքի խոր պատկերումը։ «Երբև բանաստեղծ,—գրում է Հովհաննէսյանը,—Նևկրասովը նշանավոր տեղ է բռնում ռուսաց գրականության մեջ թե իր տաղանդով, թե իր ուղղությամբ։ Տաղանդի կողմից միայն երկու պոետներ կան նրանից բարձր՝ Պուշկինն և Լերմոնտով, իսկ ինչ վերաբերում է ուղղության՝ ոչ մի ռուս բանաստեղծի մուսան այնքան ուժով չէ արտահայտել ազատասիրական ձգտումները և այնքան ջերմ կերպով չէ պաշտպանել թշվառներին, քաղցածներին ու հալածվածներին, որքան Նևկրասովի ժողովրդության և վշտի մուսան»[2]։

Հովհաննէսյանն անդրադառնում է նաև Նևկրասովի հասարակական, հրապարակախոսական գործունեության, ընդգծում է այն խոշոր դերը, որ նա կատարել է ցարական Ռուսաստանի ամե-

---

1 «Մշակ», 1897 թ., № 152։

2 Նույն տեղում։

նագաժան պայմաններում, առա ժուռնալիստիկայի պատմության մեջ, առա հատարակական կյանքում։ «Իրրև հատարակական գործիչ,— գրում է Հովհաննիսյանը,— Նեկրատովը հայտնի է նրանով, որ միայնուն դրության է հատցրել հաջորդարար երկու մեծ ամսագիր, նախ «Սովրեմեննիկը, հետո «Օտեչեստվեննյե զապիսկին», որոնք նրա խմբագրության օրով լուրջ արմատական ուղղության օրգան են եղել։ Սրանից քանի-երեսուն տարի առաջ Ռուսաստանում անշեղ կերպով այդպիսի ուղղության ամսագրեր հրատարակելու և միևնույն ժամանակ օրինավորության սահմաններից չանցնելու համար պետք էր ունենալ Նեկրատովի ընդունակությունները, հառաջը, ճարպկությունը, կենսական տակտը...»[1]։

Իր արժեքավոր հոդվածով Տ. Հովհաննիսյանը հայ ընթերցողներին լայնորեն ծանոթացնում է Նեկրատովի կյանքին, հառան գործունեության, անմահ առեղծագործությունների հարուստ ու ուսանելի աշխարհին։

1901 թ. «Մշակ» թերթը տպագրում է ընդարձակ հոդվածաշարք հայ մեծանուն բանաստեղծ Ռուխյալել Պատկանյանի մասին։ Հոդվածաշարքի անհայտ հեղինակը Պատկանյանի պոեզիան քննարկում է գրականագիտական լայն

---

[1] «Մշակ», 1897 թ., № 152։

չրջանակներում. նա անդրադառնում է համաշխարհային և հատկապես ռուս գրականության մեջ կատարված այն խոշոր փոփոխություններին, որ տեղի են ունեցել սոցիալ-տնտեսական և ազատագրական պայքարի հետևանքով, ցույց է տալիս ռուս գրականության պրոգրեսիվ նշանակությունը Ռուսաստանի ժողովուրդների գրականության զարգացման գործում: Սկսելով 19-րդ դարի ռուս գրականության մասին, հեղինակը հատկապես նշում է այդ գրականության իդեականությունն ու հումանիզմը, ժողովրդական ու հասարակական բնույթը. «Նայեք ռուսաց գրականության, որ ավելի մոտիկ, ավելի անմիջապես էր ազդում հայ գրողների վրա: Պուշկինի ժամանակից այդ գրականությունն արդեն ժողովրդական, բուն ազգային գույն, համ ու հոտ էր առացել: Եկավ մի ուրիշ մեծ տաղանդ — Գոգոլը, և գրականությունը մի հսկա քայլ էլ արավ: Նա դարձավ բնական, իրական, իջավ ժողովրդի մեջ և այնտեղ սկսեց որոնել ոգևորության աղբյուրները: Նա դարձավ հասարակական գրականության և շքեղ ծաղիկներ արձակեց. վեպը Տուրգենևի, Տոլստոյի, Դոստոևսկու գրչի տակ, բանաստեղծությունը Նեկրասովի քնարի վրա, երգիծարանությունը Սալտիկովի պես մի նշանավոր ներկայացուցչի ձեռքով, հրապարակախոսությունը Գերցենի ոգևորությամբ ու աղ-

նիվ ձգտումներով թևավորված, քննադատությունը բևեռնակու, Ձևընթեռնակու, Թորթոյությունի առաջնորդությամբ հասարակական կարգերն էին փոփոխում, ծաղրում, հարվածում, ներկայացնում նրանց ամբողջ մերկությամբ։ Հասարակական գրականությունն ածում է, միակ արդար ու ճշմարիտ հոսանք է համարվում. գեղարվեստական գրվածքների մեջ որոնվում է ոչ միայն գեղարվեստ. ավելի մեծ չափով որոնվում են նրա մեջ գաղափարներ, առաջնորդող հայացքներ»[1]։

Ռուս գրականության այս բնութագրումից հետո հեղինակն անցնում է Նեկրասովի հրապարակախոսական գործունեության, նրա պոեզիայի քաղաքական-հասարակական դերի ու նշանակության կարևորագույն հարցերի քննության։ Նա նշում է այն կապը, որ կա Նեկրասովի և Պասկանյանի պոեզիայի միջև։ «Առանձնապես մենք անմահանցինք Նեկրասովին,—գրում է հեղինակը,—և ահա ինչու։ Ռուսական Պասկանյանը դեռ ուսանողության ժամանակ ամենից շատ այդ բանաստեղծով էր ոգևորվում։ Դրա ապացույցն են երկու առանձին, մեկը՝ «Երկու բանաստեղծ» վերնագրով, որ վերաբերում է Նեկրասովից, մյուսը՝ «Հետևելով միշտ օրինաց աշխարհի»

[1] «Մշակ», 1901 թ., № 225։

նամանոգությունն է Նեկրասովին: Հայտնի է, թե Նեկրասովը ինչ առանձնահատուկ տեղ է բռնում ռուսաց գրականության մեջ: Դա հրապարակախոս էր, նախ աշխատակից մի ամսագրի, ապա խմբագիրը մի այլ ամսագրի, որի շուրջը խմբված էին ժամանակի լավագույն, առաջավոր գրականն գործիչները: Բայց հրապարակախոս-խմբագիրը, առաջադիմական օրգանի գլխավոր դեկավարը գրում էր և առանձնաշորներ... Նա գիտեր, որ «Վշակի» սյուներում ամեն է ներգել հովիտներին, երկնքի և ծովի գեղեցկությունները, սիրականի քնքշությունները: Եվ նա դարձավ հասարակականն ցավերի, թշվառության, հնձնձանքների երգիչ...Ո՞վ է այդ հրապարակախոս-բանաստեղծի նման երգել ռուս ժողովրդի դարդերը, նրա հնձնձանքները, ով է նրա պես ողբացել, հարվածել, ծաղրել այդ վշաների ու ցավերի պատճառները: Չնայած հակիշատակությամբ էր նա սիրում իր հայրենիքը. բայց ինչպես.— սիրում էր տեսնել նրան բարեկարգ ու առաջադեմ, սիրում էր տեսնել ժողովուրդը ազատ, իր աշխատանքի տեր, կրթված, գիտակից: Նա սիրում էր ասելով[1]:

Բաժանելով Չերնիշևսկու և Դոբրոլյուբովի հայացքները գրականության հասարակական դերի ու նշանակության մասին, ընդարձակ մեջ-

---

1 «Վշակ», 1901 թ., № 225:

բերումներ անելով պրանցից, հեղինակը հաջողությամբ ցույց է տալիս «պրակտիկության ժողովրդի համար կոչի բացատիկ նշանակությունն ընդհանրապես և հայ պրակտիկության համար՝ մասնավորապես։ Տեսական այդ ընդհանուր սկըզբունքներից ելնելով էլ՝ նա քննարկում է Ռ. Պատկանյանի առնձագործությունները։

Հայ մամուլի էջերում մի շարք հոդվածներ են տպագրվում Նեկրասովի մահվան 25-ամյակի կապակցությամբ։ Այդ հոդվածների մեջ առանձնապես ուշադրության արժանի է Ա. Տեր-Պողոսյանի ընդարձակ ուսումնասիրությունը՝ նվիրված մեծ բանաստեղծի կյանքին ու առնձագործությանը։ Պետք է նշել, որ նախահեղափոխական շրջանի հայ մամուլում տպագրված հոդվածներից դա ամենից շատ ներթափանցել է տալիս հայ ընթերցողին բանաստեղծի մանկության, պատանեկության, ինչպես և հետագա տարիների կյանքի ու գործունեության մասին։ Հոդվածի հեղինակն իրավացիորեն գտնում է, որ Նեկրասովի կյանքը «յուր բոլոր կողմերով շատ խրատական և ուսանելի է մեզ համար»։

Հանգամանորեն անդրադառնալով Նեկրասովի առնձագործություններին, հեղինակը փորձում է բացահայտել պրանց սոցիալական իմաստը։ Հոդվածի հիմքում դնելով Բելինսկու, Չերնիշևսկու, Դոբրոլյուբովի գրական սկըզբունքները և

նրանց առաքինները Նիկրատովի մասին, Ա. Տեր-Գաղոսյանը բավականին արժեքավոր դիտողություններ է անում Նիկրատովի առևծատրծություններին մասին, ցույց տալու նրանց գեղարվեստական ու իդեական արժանիքները: Հոդվածագիրն անդրադառնում է Նիկրատովի այն առևծատրծություններին, որոնց մեջ ավելի ցայտուն, ավելի որոշակի ձևով են արտահայտվել հասարակական կյանքի անարդարությունները, սոցիալական բողոքը, ազատության երազանքները ու ունեչը: «Չհնձած արտը», «Վոլգայի ափին», «Վարկրպածություններ շքամուտքի մոտ», «Գյուղական երեխաները» և բազմաթիվ այլ բանաստեղծություններ, ինչպես և «Ո՞վ է Ռուսաստանում լավ ապրումը պոեմը լիովին բացահայտում են Նիկրատով ժողովրդական բանաստեղծի հումանիզմը, նրա ըմբռոտ ոգին, նրա ջերմ հայրենասիրությունը: Ա. Տեր-Գաղոսյանը հատկապես անդրադառնում է Նիկրատովի աշխարհայացքի ձևավորման և նրա իդեական զարգացման հարցերին և ցույց է տալիս այդ գործում բեղմնավոր ունեցած հակայական ազդեցությունը «Բելինսկու հումանիստական գաղափարներով և առաջադեմ լայն սկրբունքներով գեկավարվող գլխավոր դերը յուր խոր հետքն է գնում Նիկրատովի հոգու և մաքի վրա. ուստ ժողովրդին գիտակցաբար ծառայելու մղումը նա այդտեղից է առա-

նում. այդ պղտոցում, այդ շրջանում է ծնունդ առնում այն դաղափարը, թե գրականությունը ժողովրդի և նրա կյանքի բաղմակողմանի գծերը՝ դանազան ելևէջներ արտահայտող պիտի լինի. բուն, կենդանի ժողովուրդը պիտի իրրև աղբյուր ծառայի գրականության համար»[1], — կարդում ենք այդ հոդվածում։

Հոդվածի աչքի ընկնող արժանիքներից մեկն էլ այն է, որ նրա հեղինակին ամենուրեք չանում է իր ամբողջության մեջ տեսնել Նեկրասովին, ցույց տալ նրան որպես բանաստեղծի ու քաղաքացու, առեղծագործողի ու պայքարողի «Մարի և քաջամարտիկ մասին զրույցը էր նա,— գրում է հեղինակը,— որ յուր փայփայած գաղափարների համար ինքնամոռացության հասնող ոգևորությամբ կռիվ էր մղում, շատ անգամ նույնիսկ վայելչության սահմաններից դուրս գալով։ Սակայն ժամանակի «ոգին» էր նրան այդպես, երբեմն հակառակ կերպով, առաջ մղողը. նա չէր կարող անվրդով հոգով և հանգիստ սրտով նկատել ու նկարագրել այն ամենը, ինչ որ իրականն կյանքը նորա առաջն էր դնում.

Мне борьба мешала быть поэтом,
Песни мне мешали быть бойцом.

---

[1] «Արարատ», 1903 թ., № 2—3։

տողերը լավ բնորոշում են նորա թե գործունեության եղանակը, թե բանաստեղծության բնավորությունը. Նեկրասովը ասակ բանաստեղծ կամ ասակ մարտիկ չէր, այլ երկուսը միասին։ Զուր տեղը չէ, որ նա յուր ժուռայինն «Թախծի և վրեժի» անուն էր տվել. Թախիծ, տառապանք, քըշվառություն ու նեղություն էր երգում և վրեժ լուծել աշխատում նրա կրծովի գրիչը։ Եվ անհնտանք չանցան բանաստեղծի ջանքերը...»[1]։

